

**1. ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Տիրապետությունը որպես քաղաքացիական կատեգորիա և դրա նշանակությունը սեփականության իրավունքի ձեռքբերման գործում

2

**2. ԱՐԹՈՒՐ ԴԱՍԻԵԼՅԱՆ**

Վերահսկողության ինստիտուտի հիմնախնդիրները և դրանց իրավական-հոգեբանական ասպեկտները

9

**3. ԳԱԳԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ**

Դատական իշխանությունը որպես սոցիալ-իրավական ինստիտուտ

17

**4. ԳՆԵԼ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ**

ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա վեճերի որոշման հիմնական չափանիշները

20

**5. ԱՆՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը Հայաստանի ժամանակակից քաղաքականության առավել առաջնային լուծումն է

36

**6. ՊԵՐՃ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Խորիրդային Միությունում և Հայաստանի Հանրապետությունում հողի նկատմամբ պետության սեփականության իրավունքի առանձնահատկությունների իրավահամեմատական վերլուծությունը

41

**7. ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Աշխատողների ընտանիքի անդամների իրավունքները Եվրոպական Միությունում անձանց ազատ տեղաշարժի համատեքստում

49

**8. ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆ**

Թեկնածուներին առաջադրվող պահանջները Հայաստանի Հանրապետությունում

55

**9. ՇՈՒԾԱՆ ԶԱՏՈՒՆՑ**

Կրթության և դաստիարակության հարցերը ձնհալի տարիների «Ավանգարդում»

62

**10. МАРИНА ГАСПАРЯН**

Отдельные критерии разграничения преступлений против жизни человека (анализ УК РФ и УК РА)

66

**11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ 20 ՏԱՐԵԿԱՄ Է**

72

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ &gt;&gt;

## ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական  
իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



# ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՅԻԱՀՐԱՎԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ ԵՎ ԴՐԱ ՆԾԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՅՔԻ ՉԵՌՔԵՐՍՍՆ ԳՈՐԾՈՒՄ

*Տիրապետություն է համարվում անձի կամ-  
րով կամ օրենքի ուժով առաջացող գույքին փաս-  
տացի տիրելու այն հարաբերությունը (գույքի  
նկատմամբ փաստացի իշխանությունը), որն  
ասպահովում է իր սեփական իշխանության ներք  
պահելու և նրա նկատմամբ իրավունքներն ան-  
խչնդու իրականացնելու հնարավորություն:*

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը,  
հիմք ընդունելով այն հայեցակարգը, որ տիրապե-  
տությունը, որպես գույքին փաստացի տիրելու (տե-  
րություն անելու) հարաբերություն, ինքնին իրավա-  
կան ինքնուրույն նշանակություն չունի, այլ միջաց  
է տվյալ գույքի նկատմամբ այլ իրավունքի իրակա-  
նացման համար և կախված է այդ իրավունքի ծա-  
վալից, բովանդակությունից և տևողությունից<sup>1</sup>, այն  
դիտարկում է որպես սուբյեկտիվ իրավունքների  
բովանդակության մասը կազմող իրավագորու-  
թյուն: Այդ պատճառով էլ տիրապետումը մի դեպ-  
քում հանդիսանում է սեփականատիրոջ իրավագո-  
րություն, մեկ այլ դեպքում՝ պայմանագրով փո-  
խանցված իրավասություն (վարձակալի, պահա-  
ռուի, կոմիսիոների և այլն), երրորդ դեպքում՝ գույքի  
ձեռք բերման եղանակը բացահայտող ցուցանիշ՝  
(օրինական, անօրինական) և վերջապես այն կա-  
րող է հանդիսանալ նաև սեփականության առա-  
ջացման հիմք (ձեռքբերման վաղեմություն):

Նշված դրսնորումներից թերեւս տեսաբան-  
ների կողմից առվել քննարկվողը և գործնական  
առանձնահատուկ նշանակություն ունեցողը՝ գույ-  
քի նկատմամբ հակառակ կամ անկախ սեփակա-  
նատիրոջ կամքի առաջացած տիրապետության՝  
ապօրինի տիրապետության իրավական բնույթի  
հարցն է: Այդ հարցի կարգավորման հիմքը դրվել է  
դեռևս հոռմեսական իրավունքում: Հոռմեսական իրա-

վունքում ամրապնդված էր սեփականության ան-  
վերապահ առաջնություն՝ իրի տիրապետող էր հա-  
մարվում միայն նրա սեփականատերը: Գույքի սե-  
փականատեր չհանդիսացող այլ անձինք համար-  
վում էին ոչ թե տիրապետողներ, այլ սեփականա-  
տիրոջ գույքը պահողներ: Նման կարգավորման  
դեպքում բնական է, որ ապօրինի տիրապետողնե-  
րը (անկախ նրանից բարեխիղը էին, թե անբարե-  
խիղ) ոչ մի պարագայում իրենց տիրապետության  
ներքո գտնվող գույքի սեփականատեր դառնալ  
չէին կարող: Հետագայում՝ նոր ժողովուրդների  
իրավունքում տիրապետման պաշտպանության  
ինքնուրույն իրավունք վերապահվեց գրեթե բոլոր  
տիրապետողներին<sup>2</sup>, իսկ Գերմանական քաղաքա-  
ցիական օրենսգիրքը (այսուհետ Գ.ԶՕ) գույքի բո-  
լոր պահողներին ճանաչեց ինքնուրույն պաշտպա-  
նության իրավունք ունեցող տիրապետողներ: Բա-  
ցի դրանից Գ.ԴՀ քաղ. օր. 932 պարագրաֆը նա-  
խատեսեց, որ բարեխիղը ձեռք բերողը դառնում է  
շարժական գույքի սեփականատեր, անգամ այն  
դեպքում, եթե գույքը օտարողին չի պատկանում,  
իսկ 935 պարագրաֆը սահմանեց, որ բարեխիղը  
ձեռք բերողը 932 պարագրաֆի հիման վրա սեփա-  
կանության իրավունք չի կարող ձեռք բերել, եթե սե-  
փականատիրոջից իրը հափշտակել է, նա այն  
կորցրել է կամ այլ եղանակով զրկվել դրանից: Նման մոտեցումը, հետագայում փոխառվեց գրեթե  
բոլոր երկրներում (ՀՀ քաղ.օր. 275 հոդվ., Ու-  
քաղ.օր. 302 հոդվ. և այլն), բայց այն տարբերու-  
թյամբ, որ առանձին երկրների օրենսգրքեր ոչ թե  
նախատեսեցին, որ նշված հիմքերի առկայության  
պարագայում բարեխիղը ձեռք բերողները սեփա-  
կանության իրավունք ձեռք բերել չեն կարող, այլ  
սահմանեցին, որ այդ հիմքերի առկայության դեպ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քում, սեփականատերն իրավունք ունի գույքը բարեխիղճ ձեռք բերողներից եւս պահանջել (Ո-Դ քաղ.օր. 295, ՀՀ քաղ. օր. 275 հհ.): Ըստ որում, այդ օրենսգրքերն՝ ի տարբերություն գերմանականի, առանձնակի չկարգավորեցին բարեխիղճ ձեռք բերողին սեփականատեր ճանաչելու հարցը: Այդ քացրողումը որոշ որու իրավագետների հիմք տվեց եղրակացնել, որ տիրապետման պրոբլեմը ծագում է այնքանով, որքանով տիրապետությունը հակադրվում է սեփականությանը: Նշված տեսակետն արտահայտողները համոզված են, որ իրի հանձնումը տիրապետողին անխոսափելիորեն առաջացնում է սեփականության իրավունքի փոխանցման կանխավարկած՝ սեփականության և տիրապետման առնակատում<sup>3</sup>: Նման հանգամանքը նրանք համարում են հակասություն և որպես հակասության շտկման ելք առաջարկում են (Կ.Ի. Սկլովսկի) ընդունել այն իրողությունը, որ հնարավոր է ոչ թե իրավունքի, այլ փաստացի վիճակի պաշտպանություն<sup>4</sup>: Այդպիսի մեկնաբանությունը, մեր կարծիքով, արված եզրահանգումների ճշմարտացիության վերաբերյալ կասկածներ առաջացնելուց զատ որևէ օգուտ տալ չեն կարող: Բանն այն է, որ շարժական գույքը վաճառողի կողմից գնորդին հանձնելը, ամկախ նրանից, թե ով է հանձնողը, առաջացնում է ոչ թե սեփականության կանխավարկած, այլ սեփականության իրավունք (քաղ. օր. 176 հոդվ.)<sup>5</sup>: Միայն հետագայում, եթե վիճարկի ձեռք բերման իրավաչափությունը կարելի է մտածել ձեռք բերողի սեփականության օրինականության մասին: Այսինքն հատուցելի պայմանագրով շարժական իր ձեռք բերողը դառնում է սեփականատեր իրը իրեն հանձնելու պահից: Այլ կանխավարկածը իր մեջ պարունակում է պայմանագրային հարաբերության մասնակիցների մեջ անվտանիություն սերմանելու և գործարար շրջանառությունը ապակայունացնելու վտանգ:

Երկրորդ, իրավունքի առաջացման հիմքը ոչ թե կանխավարկածն է՝ այլ տիրապետման տիտղոսը (օրենք, վարչական ակտ, դատարանի վճիռ, պայմանագիր):

Երրորդ, օրենսդիրը, մեր կարծիքով, ոչ մի պարագայում տիրապետություն եզրույթը սեփականությանը հակադրելու իմաստով չի օգտագործում: Հետևաբար սեփականության և տիրապետման միջև ոչ միայն առնակատում, այլև հակադրություն փնտրելու անհրաժեշտություն չկա: Տիրատե-

տումը հարաբերակցվում է սեփականության հետ ինչպես իրի նկատմամբ փաստացի ներգործություն ունենալու հնարավորությունը իրավականի հետ, կամ իրի նկատմամբ փաստացի իշխանությունն իրավականի հետ: Այդ պատճառով կարելի է լինել իրի տիրապետող չլինելով սեփականատեր, և հակառակը, լինել իրի սեփականատեր, չտիրապետելով այն<sup>6</sup>:

Ծշմարտությունն այն է, որ ինչպես Գ-ԴՀ քաղ. օր-ով (որը առանձնահատուկ այդ փաստն ընդունում է), այնպես էլ այլ երկրների օրենսդրությամբ, օտարման հատուցելի պայմանագրով շարժական գույք ձեռք բերող ցանկացած անձ (քացի ապօրինի անբարեխիղճ ձեռք բերողից) դառնում է օտարված գույքի սեփականատերը (անկախ նրանից թե ով է օտարողը՝ սեփականատերը<sup>7</sup>, կոմիսիոները, գրավառում, ապօրինի ձեռք բերող և այլն) գույքը իրեն հանձնելու պահից, եթե այլ քան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով (քաղ. օր. 176 հոդվ.): Այս հարցում թերևս բացառություն է Ո-Դ քաղ. օր-ը, որը հատուցմամբ շարժական գույքի բարեխիղճ ձեռք բերողին սեփականատեր ճանաչելու համար նախատեսում է ձեռք բերման վաղեմության հինգամյա ժամկետ (Ո-Դ քաղ. օր. 234 հոդվ.):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը ձեռք բերված շարժական գույքի նկատմամբ բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման համար որևէ բացառություն չի նախատեսում: Բարեխիղճ ձեռք բերողն էլ սեփականատեր է դառնում շարժական գույքը իրեն հանձնելու պահից, և դա ճիշտ է: Բանն այն է, որ շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար, քաղ. օրը, որպես ընդհանուր կանոն, ձևապատություն (Փորմալիզմ - գրանցում, հաշվառում կամ մեկ այլ քան) չի պահանջում: Երկրորդ հատուցմամբ շարժական գույք ձեռք բերողի բարեխիղճ կամ անբարեխիղճ լինելու հարցը քննարկման առարկա է դառնում միայն այն դեպքում, եթե գույքը ձեռք բերողից պահանջելու մասին հայց է հարուցվում: Քանի դեռ նման հայց հարուցված չէ, ոչ ոք նրա սեփականատեր լինելու հանդամանքը կասկածի տակ դնելու իրավունք չունի: Հետևաբար պետք է հիմք ընդունել այն կանխավարկածը, որ բարեխիղճ ձեռք բերողի սեփականատեր դառնալու պահից նախորդ սեփականության սեփականության

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունքը դադարում է: Նրա իրավունքը կարող է վերականգնվել միայն այն դեպքում, եթե կապացուցի, որ իրեն պատկանող գույքն իր կամքին հակառակ, կամ իր կամքից անկախ օտարվել է գույքն օտարելու իրավունք չունեցող անձի կողմից:

Բարեխիղ ձեռք բերողներից գույքը եւս պահանջելիս դատարանը լուծում է ոչ թե սեփականության իրավունքի ճանաչման այլ սեփականության իրավունքի պաշտպանության հարց: Դատարանի խնդիրն է պարզել սեփականատիրոջ տիրապետությունից զրկվելու պատճառները և գույքն օտարելու օրինականությունը: Եթե պարզվի, որ 275 հոդվածում նախանշված հիմքերն առկա չեն, ապա նախվին սեփականատիրոջ դադարած իրավունքը չի վերականգնվի, իսկ ձեռք բերողը հնարավորություն կստանա շարունակել իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքների իրականացումը: Այսինքն՝ դատարանը բարեխիղ ձեռք բերողից գույքը եւս պահանջելու մասին նախորդ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի հայցը քննելիս սեփականության իրավունքի ծագման կամ դադարման խնդրի լուծման առաքելություն չի իրականացնում: Այդ հարցը որոշվում է օրենքով: Եթե օրենքը բարեխիղ ձեռք բերողին սեփականատեր շիամարի, նրա տիրապետությունը կզրկվի նյութականավորական հիմնավորվածությունից և կիմնվի միայն նախորդ սեփականատիրոջ հայցը մերժելու՝ դատավարական իրավունքի իրավական փաստի վրա: Այսինքն, կունենանք տիտղոսի անորոշություն: Նման իրավիճակ երևակայել հնարավոր չէ, որովհետև գույքը ձեռք բերելու պահից ցանկացած ձեռք բերողի իրավունքը հենվում է տիրապետման չկասկածվող տիտղոսի վրա և նրա սեփականատեր լինելու հանգամանքը մինչև գույքը պահանջելու մասին հայց հարուցելը կասկածի տակ չի դրվում: Անգամ քաղ. օր. 275 հոդվածի կարգով, գույքը պահանջելիս, քննարկման առարկա է ոչ թե բարեխիղ ձեռք բերողի սեփականության օրինականությունը, այլ բարեխիղ ձեռք բերողին գույքն օտարողի գույքին տիրանալու օրինաշափության հարցը: Հակառակ տեսակետը պնդողները պետք է առաջարկեն վերացնել «հայցային վաղեմության» և «ձեռքբերման վաղեմության» ինստիտուտները, որը, սակայն, նրանցից ոչ ոք չի անում՝ իսկ նման առաջարկ չանելը թույլ է տալիս կասկածել տիրապետման համեմատությամբ սեփականության պաշտպանությանն անվերապահ առաջնություն

տվող հայացքների հետևողականության և խորը մտածվածության մասին<sup>8</sup>:

Պետք է լնորութել այն իրողությունը, որ, բարեխիղ ձեռք բերողներից գույքը եւս պահանջելու հարցը կարգավորելիս, օրենսդիրը առաջնությունը վերապահում է ոչ թե սեփականատիրոջ շահերի պաշտպանությանը, այլ միտումնավոր սահմանափակում է բարեխիղ գնորդներից գույքը պահանջելու իրավունքը առևտուրային շրջանառության կայունությունն ապահովելու և մյուս մասնակցի՝ բարեխիղ ձեռք բերողի շահերի առավելագույն պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը նկատի ունենալով<sup>9</sup>: Ընդ որում, քննարկվող պարագայում շրջանառության պաշտպանությանը նախապատվություն է տրվում չտիրապետող սեփականատիրոջ իրավունքի հանդեպ<sup>10</sup>: Հարկ է նկատել նաև, որ ուրիշի ապօրինի տիրապետությունից գույքը պահանջելու իրավունքի սահմանափակումը նախատեսված է ոչ միայն սեփականատերերի, այլև այլ օրինական տիրապետողների համար (գրավառու, կոմիսիոներ, վարձակալ և այլն): Այդ պատճառով էլ բարեխիղ ձեռք բերողի իրավունքների ցանկացած նստմացում, քանի դեռ նրանից գույքը վերցնելու մասին հայց չի հարուցվել, արդարացի համարվել չի կարող:

Այդ առումով, առանձնահատուկ ուշադրության է արժանի բարեխիղ ձեռք բերողների կողմից անօրինական օտարված գույքի ձեռք բերման կապակցությամբ ՀՀ մաքսային մարմինների և ոստիկանության կողմից իրականացվող պրակտիկան և այն կանոնակարգելու նպատակով կատարված օրենսդրական փոփոխությունները: Մաքսային մարմինները հիմք ունենալով, որ ՀՀ մաքսային օրենսգիրը իրավունք է վերապահում արգելել այն ապրանքների և տրամադրութային միջոցների օգտագործումը, որոնց կապակցությամբ մաքսային ձևակերպումը չի ավարտվել, որպես կանոն առանց համապատասխան իրավական հիմքերի, հաշվի շառնելով ձեռք բերման բարեխիղությունը, ձեռք բերողի նկատմամբ քրեական գործ հարուցված չլինելու հանգամանքը և այլն, առգրավում էին Հայաստանի Հանրապետություն ներկրվող՝ հետախուզման մեջ գտնվող, շարժիչ կամ նույնացման համար վերադաշված, կամ ջնջված համարներով, կամ հափշտակության այլ հատկանիշների առկայությամբ ձեռք բերված տրամադրութային միջոցները: Այդ պրակտիկան, որը բարեխիղ ձեռք բե-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բողներին տևական ժամկետով գրկում էր իրենց ունեցվածքն օգտագործելու հնարավորությունից և առաջացնում էր վեճեր ու դատական քաշընուկ՝ իր վրա բևեռեց նաև օրենսդրի ուշադրությունը:

ՀՀ ազգային ժողովը վիճակը շտկելու նպատակով 2009թ. սեպտեմբերի 16-ին ընդունեց օրենք՝ ՀՀ մաքսային և քաղաքացիական օրենսգրքերում լրացումներ կատարելու մասին: Մաքսային օրենսգրքի 134 հոդվածը լրացվեց 4-րդ և 5-րդ մասերով, որոնց համաձայն՝ հետախուզման մեջ գտնվող, ինչպես նաև վերադաշված կամ ջնջված համարներով կամ հափշտակության այլ հատկանիշների առկայությամբ արտաքին տնտեսական գործունեության անվանացանկի 872, 873, 874, 875 ապրանքային դիրքերին դասվող ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում նշված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների նկատմամբ բարեխիղճ ձեռքբերողի սեփականության իրավունքը ճանաչելու մասին դատական ակտը ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված լրացման համաձայն, «սեփականատերը նշված տրանսպորտային միջոցներն իրավունք ունի հետ պահանջել բարեխիղճ ձեռք բերողից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականատիրոջը պատշաճ ծանուցելու իրավասություն ունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմնին իրազեկելու պահից 1 տարվա ընթացքում: Ընդունում, տվյալ դեպքում 1 տարվա ընթացքում գույքը եւս չպահանջելը համարվում է սեփականությունից հրաժարում, իսկ այդ առարկաների սեփականատերը հայտնի չինելու դեպքում՝ դրանք ներմուծելու պահից՝ 1 տարի լրամալը հիմք է սեփականության իրավունքից հրաժարվելու փաստը ճանաչելու համար»:

Նշված փոփոխությունները, մեր կարծիքով, հակասում են ՀՀ Սահմանադրությանը, օրենսդրության հիմնարար սկզբունքներին, միջազգային ակտերի դրույթներին, խնդրի ճիշտ լուծում չեն և, մեղմ ասած, ավելորդ քաշընուկ առաջացնելուց զատ որևէ օգտակար արդյունք տալ չեն կարող:

Մաքսային օրենսգրքում կատարված փոփոխությունը նշանակում է, որ բարեխիղճ ձեռքբերողը նշված ապրանքների նկատմամբ իր իրա-

վունքները կարող է իրականացնել միայն սեփականության իրավունքը ճանաչելու մասին դատական ակտի առկայության դեպքում: Այսինքն օրենսգրքը պահանջում է, որ նշված ապրանքներ ներկրողը դատարանում ապացուի, որ ինքը բարեխիղճ ձեռքբերող է: Նման պահանջը հակասահմանադրական է, իսկ իրագործումը՝ ոչ իրատեսական:

Ինչ՝ ենք պահանջում քաղաքացուց որ ինքը դիմի դատարան և ցուցմունք տա, որ իրեն հափշտակված վերադաշված, համարներով ... տրանսպորտային միջոց վաճառողը հանցագործ է և ինքն էլ նրա հանցակիցն է, թե, ապացուի, որ իրեն մերենա վաճառողը գող, կորուպտիչ, խարդախ կամ, այլ խոսքով ասած, հանցագործ չէ, և ինքն էլ նրա հանցակիցը չէ: Ինչպիսի պահանջ էլ որ ներկայացվի՝ անհմատ է և հակասահմանադրական: Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով (21 հոդվ.): Իսկ ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի համաձայն՝ ոչ որ պարտավոր չէ ցուցմունք տալ իր ... նկատմամբ: Հետևաբար, մրցակցային դատավարության պայմաններում, երբ հակառակն ապացուցող չկա, ինչ՝ պահանջում մաքսային օրենսգրքը քաղաքացուց և դատարանից՝ ստի վավերացում, թե ձևական մոտեցում: Ստացվում է, որ օրենքը քաղաքացուն անուղղակի մեղադրում է հանցակցության մեջ, և պահանջում դատարանով ապացուցել իր անմեղությունը, մոռանալով, որ ըստ ՀՀ Սահմանադրության՝ չփարասված կասկածները մեկնարանվում են հօգուտ մեղադրյալի (տվյալ պարագայում հօգուտ գույքը ներկրողի):

Անմեղության կանխավարկածից (որն անուղղակի իր ամրագրումն է ստացել նաև քաղ. օր. 275 հոդվածում) հետևում է, որ արտասահմանից ապրանքներ՝ այդ թվում տրանսպորտային միջոցներ համբաւետություն տեղափոխողները, որոնք մեքենան գնելիս չեն իմացել և պարտավոր ել չեն իմանալ, որ մեքենան նախորդ սեփականատիրոջ տիրապետությունից դուրս է եկել անօրինական եղանակով, անկախ կամ հակառակ նրա կամքի, օրենքի ուժով համարվում են բարեխիղճ ձեռքբերողներ: Հոդվածից բխում է, որ բարեխիղճ ձեռք-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բերողի մեղքը բացակայում է և իր բարեխաղնությունը դատական կարգով ապացուցելու խնդիր նաչափ է ունենա: Եթե ձեռք բերողին պարտադրում ենք ապացուցել իր բարեխաղնությունը, ապա դրանով իսկ նրան պարտադրում ենք իրեն ճանաչել անօրինական տիրապետող<sup>11</sup>:

Քաղաքացիական հարաբերությունների իրավական կարգավորման անկյունաքարարային սկզբունքներից մեկն այն է, որ իրավական կյանքի բոլոր երևոյթները պետք է համապատասխանեն բարեխաղնության պահանջներին<sup>12</sup>: Այդ պատճառով էլ քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցների գործողությունների բանականությունն ու բարեխաղնությունը ենթադրվում է: Իրավագետների կողմից հիմնավորված բարեխաղնության կանխավարկածի տեսության համաձայն, շրջանառության մասնակիցների բարեխաղնությունը ենթադրվում է: Այն կարող է միտվել միայն այն անձի կողմից, որի պահանջի դեմ ուղղված են բարեխաղնության մասին առարկությունները<sup>13</sup>: Այսինքն, անձի բարեխաղնության վրա կասկածողը ինքն է պարտավոր ապացուցել նրա անբարեխաղնությունը: Ավելին, «Ձեռք բերողի բարեխաղնությունը ինքնին ենթադրում է վաճառողի կողմից գույքն օտարելու իրավունք ունենալու մասին կասկածների բացակայությունը»<sup>14</sup>: Եթե ձեռք բերողին օրենսդրորեն պարտադրում ենք հաստատել իր բարեխաղնությունը, օրենսդրորեն ամրագրում, և նրան էլ հարկադրում ենք ընդունել իր իրավախախտող լինելը: Իսկ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդու իրավունքների կոպտագույն խախտում: Դեռևս 19-րդ դարի մտածողները նշում էին «քանի որ յուրաքանչյուր տիրապետող օգտվում է անմեղության ընդհանուր իրավունքից, ապա ենթադրվում է, որ տիրապետությունն օրինական է, քանի դեռ հակառակը չի ապացուցված այն անձի կողմից, ով վիճարկում է տիրապետման օրինականությունը»<sup>15</sup>: Հետևաբար, եթե տիրապետության բարեխաղնությունը այլ անձի կողմից չի վիճարկվում տիրապետողը պաշտպանված է տիրապետման բարեխաղնության կանխավարկածով (արեգումցիայով):

Զեռք բերողների բարեխաղնության նկատմամբ կասկած առաջանալու դեպքում նրանց անբարեխաղնությունը պարտավոր են ապացուցել համապատասխան պետական մարմինները և մինչև մեղավորությունը պարտապահական պատասխանությունը պարտավորությունը առնելու ժամանակահատվածում՝ կողմից գործադրությունը պարտավորությունը կատարելու համապատասխան իրավակիրառ որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման լիազորությունը վերապահված է ընդիանուր իրավասության դատարաններին, որոնք այդ գործառույթներն իրավասու են իրականացնել միայն քաղաքացիական կասկած պեճի առկայության դեպքում՝ կոնկրետ գործեր քննելիս: Այդ դիրքորոշումը լրացնիչ անգամ ամրագրվել է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի Կ. Թորոսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարության առներ մաքսային կոմիտեի՝ գույքի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը ճանաչելու և ավտոմերենայի կրկնակի մաքսագերծումից ազատելու մասին թ. 3-438/2007

նախակելու կամ դրա իրականացմանը խոչնդրություն իրավասություն չունի:

Երկրորդ, առանց սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի հայցի (անգամ այդպիսի հայցի առկայության դեպքում) **դատարանը չի կարող ճանաչել բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը**, քանի որ սեփականության վերաբերյալ քաղաքացիական վեճ չկա, բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը ոչ ոք չի վիճարկում: Նման դեպքերում վիճարկվում է ձեռք բերման օրինականությունը:

Երրորդ, ավտոմերենա ներկրողը, բացի ապրանքը հատուցմամբ ձեռք բերելը հավաստող մաքսային մարմին ներկայացրած փաստաթղթերից, այլ ապացույցներ դատարան ներկայացնել չի կարող՝ այդպիսիք չունենալու պատճառով: Հետևաբար, եթե ձեռք բերման օրինականությունը վիճարկող չկա, ի՞նչ պետք է անի դատարանը, իմք ընդունի գնորդի հայտարարությունն այն մասին, որ իր կնքած գործարքն օրինական է, մերենան գնելիս չի հմացել հետախուզման մեջ գտնվելու, կամ համարի վերադարձված լինելու մասին: Այդ հանգամանքները, մեր կարծիքով, կասկածից վեր են անձի բարեխիղճ ձեռք բերող լինելու փաստի ուժով:

Չորրորդ, վիճարկելի գործարքների հետևանքների կիրառման հարցը և դրանցով ձեռք բերված օբյեկտների ճակատագիրը լուծելը մաքսային օրենսդրության շրջանակների մեջ չի մտնում: Մասնավոր իրավական այդ հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրության նորմերով: Վերջիններիս կիրառությունը, հավասարապես նաև համապատասխան իրավակիրառ որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման լիազորությունը վերապահված է ընդիանուր իրավասության դատարաններին, որոնք այդ գործառույթներն իրավասու են իրականացնել միայն քաղաքացիական կասկած պեճի առկայության դեպքում՝ կոնկրետ գործեր քննելիս: Այդ դիրքորոշումը լրացնիչ անգամ ամրագրվել է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի Կ. Թորոսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարության առներ մաքսային կոմիտեի՝ գույքի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը ճանաչելու և ավտոմերենայի կրկնակի մաքսագերծումից ազատելու մասին թ. 3-438/2007

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գործով: Վճռաբեկ դատարանը, քննելով գողացված մերենա ձեռք բերելու կապակցությամբ (այդ փաստը պարզվել է մերենան մաքսագերծելիս) Կ. Թորոսյանի նկատմամբ կատարված գործողությունների դեմ բողոքը, պատճառաբանական մասում նշել է, որ բողոք բերած անձի **բարեխիղճ ձեռք բերող լինելու կամ չլինելու հարցը**, սեփականության իրավունքի ճանաձման պահանջը, Վերաբննիչ դատարանը կարող է մերժել միայն գույքի սեփականատիրոջ կողմից հայցի դեմ առարկելու և գույքը իրեն վերադարձնելու պահանջ ներկայացվելու դեպքում<sup>16</sup>: Այսինքն ՀՀ վերաբննիչ դատարանը իր որոշմամբ ամրագրել է գողացված մերենա այլ անձից հասուցմամբ ձեռք բերողի բարեխիղճության կանխավարկածը և նման ձեռք բերողների իրավունքների իրականացման դեմ անօրինական խոչնորությեր հարուցելու անբոլատրելիությունը:

Հինգերորդ, մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելը որևէ կապ չունի տրամադրության միջոցների նկատմամբ բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու մասին դատական ակտը ուժի մեջ մտնելու հետ: Ինչպես վերը նշվեց, բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը ճանաչված է օրենքով գույքը նրան հանձնելու պահից:

Բացի վերոհիշյալից, մեր կարծիքով օրենսդիրը հաշվի չի առել ևս մի շատ կարևոր հանգամանը՝ ինչ է լինելու այն դեպքում, եթե բարեխիղճ ձեռք բերողի սեփականությունը ճանաչելու հետո գույքի սովորականացնելու պահի դժվարացնում:

Ինչ վերաբերվում է քաղ. օր. 275, 280 հոդվածներում կատարված փոփոխություններին, ապա կարգավորումը հստակեցնելու փոխարեն այդ փոփոխությունները ավելի դժվարացնում են հարցի լուծումը և ծնում են նոր հարցեր: Բան այն է, որ քաղ. օր. 275 հոդվածի լրացված 4-րդ կետը վերաբերվում է ոչ թե ընդհանրապես շարժական իրերին, այլ միայն մարդատար, գործածված մարդատար, բեռնատար, ինչպես նաև հատուկ և մասնագիտացված այն մերենաներին, որոնք ներկրվում են արտերկրից: Այսինքն այդ կետով առանց անհրաժեշտության, շարժական իրերի շարքից առանձնացվում է արտերկրից ներկրված իրերի որոշակի խումբ և դրանց համար մտցվում են նոյն հոդվածի առաջին կետի կարգավորման ընդհանուր տեսականը խաթարող սահմանափակումներ:

Նման պարագայում դժվար է բացատրել՝ ինչ տարբերություն հափշտակված, համարները վերադաշված մերենան վաճառվել է Հայաստանի սահմաններից դուրս, թե Հայաստանում, ինչ կարգով է բարեխիղճ ձեռք բերողը հաստատելու մերենայից շատ ավելի թանկ արժեք ունեցող ապարանջանի կամ մատանու նկատմամբ իր սեփականության իրավունքը, ինչ իրավունքով ենք մեր հանրապետության քաղաքացին չհանդիսացող սեփականատիրոջը, մերենան ներմուծելուց մեկ տարին լրանալու դեպքում, զրկում սեփականության իրավունքից, այն դեպքում, եթե վիճողիկացիոն հայց հարուցելու համար, քաղ. օրենսգրքով սահմանված է երեք տարվա վաղեմության ժամկետ և այլն: Ծարադրվածն ակնհայտորեն ցույց է տալիս, որ կատարված փոփոխությունները հարցի կարգավորումը հստակեցնելու փոխարեն խաթարում են կարգավորման միասնականությունը, առաջացնում են անհարկի բարդություններ: Բացի դրանից, մեր կարծիքով, տվյալ պարագայում կատարված նորամուծությունները ակնհայտորեն շեղվում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի պահանջներից: Ըստ այդ կոնվենցիայի 17 հոդվածի, որևէ պետություն իրավունք չունի կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը, կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով՝ քան նախատեսված է Կոնվենցիայով: Տվյալ դեպքում կատարված նորամուծությունները ոչ միայն սահմանափակում են Կոնվենցիայով երաշխավորված սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը, այլև կասկածի տակ են առնում քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցների բարեվարքությունը:

Ոչ որ չի ժամանակագրությունների կարգավորման գործում ինքնիշխան պետության կարևոր դերակատարությունը, բայց այդ կարգավորումը պետք է նպաստի հարաբերությունների առավել կանոնակարգմանը, օրենսդրության կիրառման արարողակարգերի հստակեցմանը: Օրենսդիրը պետք է ընտրի կարգավորման այնպիսի եղանակ, որպեսզի օրենքի կիրառությունը հստակական գիտակցության մեջ չձևավորի հակասական պատկերացում ազգային-իրավական համակարգի և նրա հիմքում ընկած իրավական ու բարոյական սկզբունքնորի համբեաց: Այս առումով

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կատարված փոփոխությունները, մեղմ ասած, քննադատության չեն դիմանում:

Գույքի «սեփականատերերի» և բարեխսիդ ձեռք բերողների փոխհարաբերությունների կարգավորման համար կարելի էր ընտրել հարաբերության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները չսահմանափակող տարբերակներ: Մասնավորապես հարցը կարելի էր կարգավորել Ռուսաստանի Դաշնության (քաղ. օր. 302 հ.) կամ Գերմանիայի Դաշնայի Հանրապետության (քաղ. օր. 932, 935 պարագրաֆ.) օրինակով: Բայց կանանց ավելի քիչ ծախսատար, հարաբերության բոլոր մասնակիցների իրավունքների ու շահերի պաշտպանությունն արդյունավետ ապահովող այլ տարբերակ, որը հնարավոր է իրականացնել ՀՀ ու-

տիկանապետի հրահանգով: Մեր կարծիքով առավել դյուրին և արդյունավետ կաշխատի հետևյալ մեխանիզմը: *Տրանսպորտային միջոցը օրենքով սահմանված կարգով մաքսազերծել, հանձնել բարեխսիդ ձեռք բերողին:* Պետական ավտոտեսչության տրանսպորտային միջոցների հաշվառման քարտում կատարել տվյալ միջոցի հետախուզման մեջ գտնվելու, վերադաշված համարներ ունենալու կամ հափշտակման այլ հատկանիշների մասին և ինչպես բարեխսիդ ձեռք բերողին այնպես էլ այդ մեքենայի յուրաքանչյուր հաջորդ գնորդի սոորագրությամբ (մինչև հայցային վաղեմության ժամկետի լրանալը)՝ տեղեկացնել տրանսպորտային միջոցը ետ պահանջելու նախկին սեփականատիրությունը իրավունքի մասին:

<sup>1</sup>Տե՛ս Есстественное право или философия права. Фридриха Адольфа Шиллинга. Перевод с немецкого, под редакцией Капустина М.И. М., 1863. С.28.

<sup>2</sup>Տե՛ս Баранова Е.А. Вещные права в системе субъективных гражданских прав. В сб. Актуальные проблемы гражданского права. Вып. 6. Изд-во НОРМ. М., 2003. С. 160.

<sup>3</sup>Տե՛ս Скловский К.И. Об идеологии защиты владения в современном гражданском праве. В сб. Проблемы современного гражданского права (сборник статей). Городец-М., 2000. С. 114.

<sup>4</sup>Տե՛ս Սկլովսկի Կ.Ի. Աշված հոդվածը, Էջ 119:

<sup>5</sup>Բացառություն նշված ընդհանուր կանոնից նախատեսում է ՌԴ քաղ. օր. 234 հոդվածը:

<sup>6</sup>Տե՛ս Есстественное право или философия права. Фридриха Адольфа Шиллинга. Перевод с немецкого, под редакцией Капустина М.И. М., 1863. С. 26-27.

<sup>7</sup>Հարկ է նկատել, որ սեփականատերն էլ կարող է իր գույքը անօրինական օտարել (օրինակ՝ գրավ դրված գույքը) և այս դեպքում հարաբերություններ կառաջանան ոչ թե սեփականատիրոջ և նրա գույքը ձեռք բերողի, այլ գրավառուի և ձեռք բերողի միջև:

<sup>8</sup>Տե՛ս Սկլովսկի Կ. Ի. Աշված հոդվածը, Էջ 121:

<sup>9</sup>Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части первой (постатейной) – М.: КОНТРАКТ, ИНФРА-М, 1998. С. 548.

<sup>10</sup>Տե՛ս Аксюк И. В. Добросовестность приобретения как основание возникновения права собственности на недвижимость. Журнал российского права, 3-2007. С. 69.

<sup>11</sup>Տե՛ս Սրտուկի Ի. Վ. Աշված հոդվածը, Էջ 67-68:

<sup>12</sup>Տե՛ս Энекперս Л. Курс германского гражданского права. Т 1, полутора тома. Изд-во Иностранные литература. М. С. 178.

<sup>13</sup>Տե՛ս Արյուղի Ի. Վ. Աշված հոդվածը, Էջ 70:

<sup>14</sup>Տե՛ս նույն տեղում, Էջ 71:

<sup>15</sup>Տե՛ս Есстественное право или философия права. Фридриха Адольфа Шиллинга. Перевод с немецкого, под редакцией Капустина М.И. М., 1863. С. 31.

<sup>16</sup>Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ 3-438 վլ 2007թ.:

## ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության,  
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

### ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ



Պետական կառավարման յուրաքանչյուր ոլորտում ձևավորված հիմնախնդիրները հաճախ պայմանավորված են ոչ այնքան զուտ իրավական, որքան իրավական-հոգեբանական գործոններով: Ընդ որում, այս չափանիշներով վերլուծությունների ու գիտական հետազոտությունների որոշակի պակասը հնարավորություն չի տալիս համարժեք պատկերացում կազմել ոչ միայն առկա հիմնախնդիրների, այլև դրանց ծագման նախապայմանների ու հնարավորին արդյունավետ լուծման ուղիների մասին: Սույն հոդվածում խնդիր ենք դրել անդրադառնալ ոչ այնքան հարցադրումների զուտ իրավական, որքան իրավական-հոգեբանական ասպեկտներին, որպեսզի կարողանանք ապահովել համային հետազոտություն՝ կապված պետական վերահսկողության և հարակից ինստիտուտների կիրառման ոլորտում գրեթե ավանդույթների վերածված երևույթների հետ:

Պետական կառավարման ոլորտը՝ իրավունքի, մշակույթի և հոգեբանական չափանիշներով հետազոտություններ կատարող բազմաթիվ գիտնականներ գտնում են, որ հոգեբանական նախարարական դրվագածությունը մեծամասամբ պայմանավորված է պետական համակարգում տվյալ աշխատակցի գրաված տեղով և գործառույթների բնույթով: Այսպես, վերլուծելով ծառայողների վարքագիծի տարաբնույթը դրսորումները, միջազգային ճանաչված քաղաքագետներ Դեյվիդ Լ. Վեյմերը և Էյդեն Ռ. Վայնինգը արձանագրել են հետևյալը. «Քաղաքականության վերլուծաբանների համար ամենալուրջ էթիկական հակասությունները սովորաբար կապված են պատվիրատուի նկատմամբ պատասխանատվության և այլ արժեքների միջև հակադրությունների հետ: Օրինակ, աշխատանքի կորուստն ուղղակիորեն ազդում է վերլուծաբանի և նրա ընտեսական տնտեսական և հոգեբանական բարեկեցության վրա»<sup>1</sup>:

Պետական վերահսկողության ինստիտուտը, տնտեսության ազատականացման ուղղակի

թելադրանքով ենթարկվեց արմատական վերափոխումների, որի հիմքում դրվեց ձեռնարկատիրության ոլորտում պետության անհարկի միջամտությունը բացառելու դիրքորոշումը: Մասսամբ այս խնդիրը կարելի է լուծված համարել, սակայն մի շարք հանգամանքներ՝ փորձի ակնհայտ պակասը, ոչ բավարար իրազեկվածությունը, հնարավորինս սեղմ ժամկետներում կտրուկ քայլեր ձեռնարկելու միտումները, գերատեսչական շահերով դեկավարվելու անհիմն ձգումները և այլն, լուրջ խոչընդուն հանդիսացան անհրաժեշտ հայեցակարգ մշակելու և բացառապես դրա շրջանակներում զարգացումներ ապահովելու տեսանկյունից:

Խորհրդային իրավունքի տեսությունը հստակ սահմանազատում էր «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթները, մասնավորապես «հսկողության» տակ նկատի էր ունեցվում բացառապես օրինականության չափանիշներով իրականացվող ստուգման գործառույթը, իսկ «վերահսկողության» դեպքում՝ ինչպես օրինականության, այնպես էլ՝ արդյունավետության չափանիշները: Այսպես, դատախազական ընդհանուր հսկողության դեպքում դատախազը պարտավոր էր իրավական ակտը գնահատել բացառապես օրինականության տեսանկյունից: Առ չեր կարող եզրակացնելուն տալ այդ ակտի արդյունավետության վերաբերյալ, մինչդեռ, ժողովրդական վերահսկողության կոմիտեն, օրինակ, իրավական ակտը գնահատում էր ինչպես օրինականության, այնպես էլ՝ արդյունավետության տեսանկյունից:

Կարծում ենք՝ վերը նշված դասակարգությունը գերծ էր կառավարման մեթոդաբանության որևէ սոցիալիստական ենթատեսաստից և կարող էր կիրառելի լինել նաև կառավարման հետազարեկումներն իրականացնելիս: Ընդ որում, իներցիայի այն, իրոք, կիրառման մեջ դրվեց նաև հետազարեկումներին, սակայն ընդհանուր հայեցակարգի և տեսական անհրաժեշտ գինավածության բացակայությունը հանգեցրեց նրան, որ իիշյալ եզրույթները

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կիրառելիս այլևս որևէ չափանիշ հաշվի չի առնվում, պարզապես դրանք օգտագործվում են կամայականորեն՝ առանց խորանարու դրանց տարբերության մասին։ Հետաքրքիր մի դիտարկում, իրավական համակարգը արմատական բարեփոխումների ենթակելիս, գրեթե մշտապես ելակետ է ընդունում այն դիրքորոշումը, ըստ որի նախկին իրավական համակարգի յուրաքանչյուր առանցքային հարցադրման իմքում ընկած է եղել գաղափարական կոնկրետ ուղղաձություն, տվյալ քաղաքական համակարգի գաղափարախոսությամբ պայմանավորված ուսմունք և այլն։ Մինչդեռ, գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ հաճախ դրանք պայմանավորված են լինում սույն ձևավորված ավանդույթներով (օրինակ, այդպիսի դասակարգում ընդունված էր նաև ցարական Ռուսաստանի վարչարարության մասին տեսությունում), ներ մասնագիտական պատկերացումներով, գուտ գործնական շահերով և այլն։

Նկատենք, որ միջազգային փորձը ևս վկայում է այս կամ այն ոլորտում կամ կազմակերպությունում փաստացի վիճակը պարզելու առնչությամբ տարբերակված մոտեցում դրսորելուն նախապատվություն տալու մասին։ Այսպես, ներկայում լայնորեն կիրառվող «մոնիթորինգ» և «առողջություն» եզրույթներն իրենց բովանդակությամբ գրեթե համահունչ են համապատասխանաբար՝ «վերահսկողություն» և «հսկողություն» եզրույթներին։

Այն, որ հիշյալ հասկացությունների կիրառման հարցում այլևս բացակայում է որևէ արամաբանություն և միասնականություն, վկայում են հենց կոնկրետ օրենսդրական ակտերը։ Բերենք մի քանի մասնավոր օրինակներ։

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ և 71-րդ հոդվածներում ամրագրված են վերացական վերահսկողության և կոնկրետ վերահսկողության ինստիտուտները, մինչդեռ՝ սահմանադրական դատարանն իրավասու չել միջազգային պայմանագիրը կամ ազգային իրավական ակտը գնահատել արդյունավետության կամ նպատակահարմարության տեսանկյունից։ Տվյալ դեպքում, այսպես կոչված, դատախազական բարձրագույն հսկողությանը փոխարինելու եկած նոր ինստիտուտն անհարկի ծեռք բերեց իր բովանդակությանը շիամապատասխանող անվանում։ Հավելենք նաև, որ իր գործունեության սկզբնական շրջանում սահմանադրական դատարանը որոշ դեպքերում իսկապես հանդես էր գալիս, որպես վերահսկողություն իրա-

կանացնող ատյան, քանզի իր եզրակացություններում, հատկապես հիմնավորումների մասով, ոչ միայն զմահատում էր միջազգային պայմանագրերի կամ իրավական ակտերի սահմանադրականության<sup>2</sup>, այլև նպատակահարմարության տեսանկյունից։ Այսպես, սահմանադրական դատարանն իր 1998թ. հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Ամերիկայի Միացյալ Նահանգների արտահանման-ներմուծման բանկի միջև 1997թ., հուլիսի 21-ին Վաշինգտոնում ստորագրված ծրագրերի աջակցման հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» որոշմամբ արձանագրել է։ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է ծրագրերի ֆինանսավորումը հեշտացնելու և երաշխավորելու նպատակով ձեռնարկել կազմակերպական իրավական բնույթի մի շարք քայլեր»։ Տվյալ դեպքում հարց է ծագում, կառավարության նման պարտավորությունը ի՞նչ իրավական արժեք ունի միջազգային պայմանագրի սահմանադրականության հարցի տեսանկյունից։

Կարծում ենք՝ այս դեպքում ևս իրեն զգացնել է տվել զուտ հոգեբանական գործոնը, որի պայմաններում, մասնավանդ, երբ դեռ չէին ձևավորվել վերահսկողության շրջանակների և իրականացման եղանակների վերաբերյալ հստակ պատկերացումներ, վճռորոշ է դարձել հնարավորինս լայն լիազորություններով հանդես գալու ձգտումը։

Այն, որ որևէ նշանակություն չի տրվում «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթների տարբերությանը, վկայում է նաև «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որում միևնույն գործառույթը որակվում է ինչպես հսկողություն, այնպես էլ՝ վերահսկողություն։ Այսպես, օրենքի 17-րդ և 18-րդ հոդվածներում հարկային մարմինների ստուգողական գործառույթը որակվում է որպես հսկողություն, իսկ 33-րդ հոդվածով՝ վերահսկողություն։

Ցանկությունը կազմակերպության բացահայտման և դրանց բովանդակության բացահայտման հարցում թերությունները անխտիր իրենց բացահայտման ներազբեցությունն են ունեցել հիշյալ ոլորտին վերաբերող օրենսդրական ակտերում և իրավակիրան պրակտիկայում։

Տերևս, այդ հիմքով կարելի է բացատրել

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

այն, որ օրենսդրությունում բացակայում են պետական վերահսկողության առնչվող այնպիսի կարևոր հարցադրումներ, ինչպիսիք են՝

ա) ստուգման տեսակները և դրանց իրականացման առանձնահատուկ ընթացակարգերը,

բ) ուսումնասիրության իրականացման ընթացակարգերը,

գ) տեսչական գործառույթների իրականացման ընթացակարգերը,

դ) ստուգման, ուսումնասիրության և տեսչական գործառույթների իրականացման հիմքերը:

Ստուգման, ուսումնասիրության և տեսչական յուրաքանչյուր գործառույթ, հանդիսանալով պետական հսկողության և վերահսկողության իրականացման ինքնուրույն միջոց, որպես կանոն, դրսևորվում է պետական լիազոր մարմին և տնտեսավարող սուբյեկտ փոխհարաբերություններում։ Կառավարման գուտ վարչական մեթոդների գերակայության պայմաններում այս մոտեցումը գործում է գրեթե առանց բացառության։ Սակայն տնտեսության ազատականացման և կառավարման կարգավորման ու տնտեսավարման մեթոդների ներդրմամբ աստիճանաբար նախապատվությունը տրվում է համընդհանուր բնույթի ուսումնասիրություններին ու վերլուծություններին, որոնց դեպքում հարկ չի լինում, առանց որևէ հիմքի, միջամտել որևէ տնտեսավարող սուբյեկտի գործունեությանը։

Միաժամանակ, ուսումնասիրության պարագայում բնավ պարտադիր չէ, որ այն իրականացվի կոնկրետ որևէ տնտեսավարող սուբյեկտում։ Այսպես, «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ անասնաբուժության բնագավառում լիազոր մարմինը «ուսումնասիրում և վերլուծում է կենդանական ծագման մթերքի ու հումքի, անասնաբուժական դեղամիջոցների, անասնաբուժական միջոցների, կերերի և լրացակերերի արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման և իրացման գործընթացները»։

Կարծում ենք՝ ոչ միայն ստուգման, այլև ուսումնասիրության տակ ավանդաբար պետք է նկատի ունենալ բացառապես կոնկրետ տնտեսավարող սուբյեկտում փաստական վիճակը պարզելու նպատակով իրականացվող գործառույթը։ Թերևս, դա է պատճառը, որ նույն անասնաբուժության բնագավառում լիազորված մարմինը, ուսումնասիրություններ իրականացնելիս, բացառապես դեկալարվում է «Հայաստանի Հանրապետությու-

նում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, մինչդեռ՝ հիշյալ օրենքը սահմանում է բացառապես կոնկրետ տնտեսավարող սուբյեկտում իրականացվող ստուգումների և ուսումնասիրությունների անցկացման կարգը։

Այն, որ ուսումնասիրությունների տակ ավանդաբար հասկացվում է միայն կոնկրետ տնտեսավարող սուբյեկտում համապատասխան գործառույթներ իրականացնելը, հիմնավորվում է նաև այն փաստարկով, որ գործնականում միայն հենց այդ լիազորությունն է այս կամ այն չափով կարգավորվում, իսկ ընդհանուր բնույթի ուսումնասիրություններ անցկացնելու ընթացակարգ սահմանված չէ։ Օրինակ, պարզ չէ, թե ինչ ընթացակարգով կարող է անասնաբուժության բնագավառում լիազոր մարմինն ուսումնասիրելու և վերլուծելու կենդանական ծագման մթերքի արտադրության գործընթացները, մասնավորապես՝ միջայի տեղեկատվություն պետք է ձեռք բերի, ի՞նչ աղբյուրներից, ինչպիսի մեթոդանությամբ պետք է գնահատի իր արամադրության տակ եղած տեղեկատվությունը։ Ստացվում է, որ յուրաքանչյուր դեպքում դա սուկ թելադրված է լինում տվյալ պաշտոնյայի մասնագիտական պատրաստվածության աստիճանով, փորձով, բայց ոչ երբեք նախապես սահմանված ընթացակարգով։

Ընդ որում, առավել մտահոգող է այն, որ հիշյալ բնույթի ուսումնասիրությունները գործնականում նենագափոխսվում և իրականացվում են ստուգումների մասին օրենսդրության ընթացակարգով նախատեսված կանոններով։ Գործնականում համարժեք չի ընկալվել ինչպես ուսումնասիրության, այնպես էլ՝ տեսչական գործառույթի էռույթումը։

Մինչդեռ, անգամ ստուգումների մասին վերը նշված օրենքն է բացառում այդպիսի գործելանքը. այսպես, օրենքի հենց 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Սույն օրենքով նախատեսված տնտեսավարող սուբյեկտների պաշտոնատար անձանց և ստուգում իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները գործում են սույն կետի իններորդ պարբերությամբ սահմանված ուսումնասիրությունների անցկացման դեպքում»։ Նկատենք, որ 9-րդ պարբերությունը վերաբերվում է միայն հարկային ստուգումներին, ինչից բխում է, որ այլ ոլորտներում ցանկացած բնույթի ուսումնասիրություն կատարելիս, բացարձակապես հիմնագործ է այդ օրենքի վրա հրում անելը։

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Նկատենք, որ նույն 1-ին հոդվածում տրված է միայն ուսումնասիրության ընդհանուր բնորոշումը, որում դարձյալ ընդգծվում է պետական լիազոր մարմին և տնտեսավարող սուբյեկտ փոխհարաբերությունը. «Ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում՝ պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է, բացառությամբ սույն կետի իններորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի»: Այնուհետև, նույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ պարբերությունում սահմանվում է, որ. «ուսումնասիրություն է նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմինների, ինչպես նաև գյուղատնտեսության նախարարության տեսչական մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ստուգումից հետո տրված հանձնարարականների կատարման ճշտման ընթացակարգը»:

Այն, որ երբեմն վերահսկողության բնագավառում դրսորդվում են որոշ սուբյեկտիվ հակումներ, այդ թվում՝ իշխանատենչության տարրեր, որոնք նաև ուղղեցվում են կոռուպցիոն գործուներով, կարծես վիճահարույց չեն: Խոսուն է այն, որ այդ հակումները հաշվի առնելով՝ որոշ տեսաքանությունը, միանգամայն իրավացիորեն գտնում են, որ ցանկացած երևույթի վերահսկողության, գնահատման դեպքում վճռորոշ պետք է լինեն նվազագույնը երկու կանոնները. «Գնահատման մեջ հիմնական բարոյական պարտականությունները կարելի է խստացնել երկու կանոնում. մի վնասիր ուսումնասիրվող մարդկանց և մի խեղաքյուրիր տվյալները: Բայց չնայած իրենց պարզությունը, այս կանոնները կարող են բախվել միմյանց: Խելամիտ մարդիկ առաջնությունը տալիս են կամ մեկին, կամ ել մյուսին՝»:

Այսպիսով, անհիմն է տեսչական ցանկացած գործառույթ համարել, որպես ուսումնասիրություն, իսկ ուսումնասիրությունն արդեն՝ ստուգման կանոններով իրականացվող գործառույթ:

Առավել անընդունելի է ստուգման, ուսումնասիրության և տեսչական գործառույթների հա-

մար անվերապահորեն իրավական հիմք համարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Այսպես, ըստ Հայաստանի Հանրապետության վարչապետի վերահսկողական ծառայության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից՝ նշված օրենքի 30-րդ հոդվածի պահանջներով հարուցվել է 18 վարչական վարույթ: Տվյալ դեպքում վերացականորեն հիմք է ընդունվել այն, որ վարչական վարույթ հարուցելու հիմքերից է անձի դիմումը և բողոքը, իսկ քննարկվող դեպքում եղել է անձի դիմում: Սակայն տվյալ դեպքում անտեսվել են մի շարք հիմնադրույթներ.

- տվյալ դեպքում «դիմում» հասկացությունը չպետք է շփոթել իրավախախտման մասին հաղորդման հետ, քանզի նշված օրենքի կարգավորման առարկան ոչ թե վարչական իրավախախտումների վերաբերյալ ընթացակարգը կամ վարույթն է, այլ՝ հանրային իրավունքի ոլորտում իրականացվող վարչական մարմինների այն գործողությունները, որոնք չեն առնչվում վարչական վարույթների առանձին տեսակների հետ. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»: Այսինքն, տվյալ դեպքում վարչական իրավախախտումների վերաբերյալ դիմումի առկայության դեպքում հարկ էր դեկավարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,

- եթե վարույթ է հարուցվում նշված 30-րդ հոդվածով սահմանված կարգով, ապա բացառապես կարող էր ընդունվել այնպիսի վարչական ակտ, որն ընդհանուր ոչինչ չունի վարչական տույժ նշանակելու մասին վարչական ակտերի հետ: Այսպես, նախ, նշված օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեություն է, իսկ «Վարչական ակտը, դրա տեսակները և ձևերը» վերտառությամբ 53-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտով կարող են սահմանվել ոչ թե պատասխանատվության միջոցներ, այլ՝ սուկ պարտականություններ: Նկատենք, որ ըստ վերը նշված տեղեկանքի, նշանակվել է սուկանը՝ 350

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հազար դրամի չափով:

Ինչևէ, թերված օրինակը վկայում է մի կողմից վերահսկողական և հսկողական գործառույթների իրականացնելիս օրենսդրության ոչ համարժեք ընկալման, մյուս կողմից՝ ինչը պակաս անհանգստացնող չէ, ոչ միատեսակ կիրառման բազմաթիվ փաստերի մասին:

Ըստ էության, ոլորտին առնչվող մասնագետները մեծամասամբ միայն հպանցիկ են ծանոթ օրենսդրությանը և բավարար խորությամբ չեն տիրապետում դրա սկզբունքներին ու հիմնադրույթներին: Կարծում ենք, ոլորտը չափազանց բազմանիստ է և անհրաժեշտ է նշված գործառույթներն իրականացնելիս համարել բոլոր օրենսդրական ակտերը և ապահովել համարի նոտեցում:

Սակայն օրենսդրության ոչ համարժեք կիրառման երեսույթը պայմանավորված է ոչ այնքան դրա անկատարությամբ, որքան՝ վերահսկողության կամ հսկողության կոնկրետ ոլորտում վարչարարության իրականացման հստակ ուղեցույցների բացակայությամբ: Ուստիմնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս վարչարարության այդ բարդ ոլորտում ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների կիրառման անհրաժեշտության վրա բավարար չափով ուշադրություն չի դարձվում, մինչեւ այս խնդիրը չափազանց կարևոր է, քանի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից հիշյալ գործառույթների իրականացման ընթացքում բույլ տրված յուրաքանչյուր, այդ թվում ոչ էական իրավախսությ կարող է հիմք հանդիսանալ վարչարության արդյունքներով ստեղծվող ակտերը անվավեր ճանաչելու համար:

Գործնականում մտավախսություն կար, որ իրավախսութման մասին հաղորդումը կարող է անհարկի նույնացվել վարչարարության ոլորտում դիմումի հետ, թերևս, դա էր պատճառը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. մայիսի 29-ի թիվ 594-Ա որոշման նախագծում առաջարկվել էր՝ հատուկ ընդգծել, որ վերջինս չի տարածվում իրավախսութմների վերաբերյալ հաղորդումների հիման վրա հարուցվող և իրականացվող վարչական վարույթի վրա: Ընդ որում, իրավախսութման մասին հաղորդման դեպքում պետք է հարուցվի ոչ թե պարզապես վարչական վարույթ, ինչպես վարվել են առողջապահության նախարարության համապատասխան կառույցում, այլ՝ վարչական իրավախսութմների վերաբերյալ վարույթ:

Կարծում ենք՝ առավել խոցելի է տեսչական

գործառույթների իրավական կարգավորման վիճակը: Խնդիրն այն է, որ այս գործառույթների իրականացման իրավական կարգավորում գրեթե գոյություն չունի, ինչի արդյունքում հաճախ տեսչական գործառույթները, օրինակ՝ ստուգայցերը, զննությունները և այլն, իրավանացվում են ստուգումների համար օրենսդրությամբ նախատեսված կարգով, ինչն անիրավաչափ է: Թերևս, բացառություն են կազմում այն սակավաթիվ ոլորտները, որտեղ այս կամ այն չափով սահմանված են տեսչական գործառույթների անցկացման ընթացակարգերը: Օրինակ, պետականութեաչությունն իր տեսչական գործառույթներն իրականացնում է «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Հաճախ տեսչական ստուգումները օրենսդրությամբ անհարկի նույնացված են ուսումնասիրության գործառույթի հետ, ինչն անհարկի տարրներցումների ու թյուրըմբոնման տեղիք է տալիս:

Տեսչական գործառույթների հստակ կանոնակարգման անհրաժեշտությունը պայմանավորված է իրավախսախոսումների և անվտանգության ապահովման կանխարգելման առանցքային խնդրով: Տեսչական գործառույթները չեն կարող իրականացվել ստուգման համար նախատեսված կանոններով, քանզի որևէ կերպ իրավաչափ չեն կարող համարվել ստուգման համար նախատեսված ժամկետները, նախասպես իրազեկել և այն:

Հայաստանի Հանրապետության վարչապետի վերահսկողական ծառայության այն դիրքուումը, ըստ որի ուսումնասիրությունների (հետազոտությունների) կատարումը սահմանված է ոլորտը կարգավորող օրենքներով, միայն մասամբ է իրավաչափ: Նախ, այդ օրենքներով ուսումնասիրությունների ընթացակարգերը սահմանված չեն: Բացի այդ, հիշյալ մարմինները կոչված են ոչ միայն ուսումնասիրություններ, այլև՝ տեսչական գործառույթներ իրականացնել, որոնց իրավական կարգավորումը ևս բացակայում է:

Նշված բոլոր օրենքները հիմնականում համարվում են նյութական իրավունքի աղբյուրներ, քանզի բացառապես սահմանում են լիազորություններ, սակայն անտեսում են դրանց իրականացման կարգը սահմանելու անհրաժեշտությունը: Այսպես, օրինակ, «Անսանարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը անասնարության պետական տեսուչին վերապահում է բավականին լայն լիազորու-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուններ, այդ թվում՝ ստուգման մասին օրենքի ենթակայությունից դուրս գտնվող ստուգումներ իրականացնելու առումով՝ ստուգում է հանրապետության շուկաների տեղանքում, կենդանական ծագման մթերք և հումք իրացնող կետերում անասնաբուժական փորձաքննության գործընթացը և դրա իրականացման համար համապատասխան պայմանների առկայությունը, արգելելու անասնաբուժական փորձաքննության կարգի պահանջներին չհամապատասխանող կենդանական ծագման մթերքի և հումքի իրացումը և այլն: Սակայն հարց է առաջանում. իսկ ի՞նչ ընթացակարգով կարող է տեսչությունը որոշել՝ համապատասխանում է տվյալ մթերքը սահմանված պահանջներին:

Ավելին, նոյն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ստուգումները պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական պետական վերահսկողության կարգի համաձայն, սակայն այդպիսի կարգ դեռևս չի ընդունվել, թեպետ՝ օրենքն ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 24-ին: Հավելենք նաև, որ հիշյալ հարցերը կանոնակարգված չեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. նոյեմբերի 21-ի թիվ 1915-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության կանոնադրությամբ:

Վերևում մենք արդեն ընդհանուր գծերով անդրադանք ոչ էական խախտումների հիմքով վարչական ակտերն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու խնդրին, սակայն, հաշվի առնելով հետազոտման թեմայի հետ այդ հարցի սերտ առնչությունը, նպատակահարմար ենք գտնում այդ հարցադրման առավել հանգամանալից վերլուծությունը:

Նախ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 63-րդ հոդվածների ուսումնափրությունը ցույց է տալիս, որ վարչական ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու իրավական հիմքը օրենքի որոշակի խախտումներն են, իսկ այդպիսիք են համարվում հենց նոյն օրենքով վարչական ակտին ներկայացվող պահանջները (55-րդ հոդված) չկատարելը: Արտաքուստ այն տպավորությունն է, որ տվյալ դեպքում տեղին չեն որևէ հարց բարձրացնել, քանզի օրենքով հատակ ամրագրված են գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները, որոնց խախտումն էլ

հենց հիմք է տվյալ ակտը առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու համար: Ի դեպ, հենց այսպիսի պատճառաբանություն է բերվում նաև այն պրակտիկ իրավաբանների կողմից, որոնք դեմ են ոչ էական խախտումները վարչական ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու համար, որպես հիմք չհամարելուն: Մասնավորապես, վերջիններս գտնում են, որ օրենքն արդեն իսկ սպառիչ սահմանել է այն «էական» պահանջները, որոնք խախտելը չի կարող անհետևանք մնալ: Այնուհետև, այն եզրահանգումն է արվում, որ որևէ մեկն իրավասու չէ օրենքով ամրագրված պահանջները համարել ոչ էական:

Կրկնում ենք, արտաքուստ բավականին կուր տրամաբանություն կա այս մոտեցման մեջ, սակայն հարցի անհրաժեշտ խորքային ուսումնափրությունն ապահովելու տեսանկյունից, փորձենք անդրադանալ այն հարցին, թե որքանով են այդ պահանջները հստակ ու սպառիչ ամրագրված: Այսպես, եթե վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու իրավական հիմքերը վիճահարույց չեն, ապա նոյնը չի կարելի ասել այն անվավեր ճանաչելու իրավական հիմքերի մասին: Այսպես, նշված օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել,

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը,

գ) ակտից պարզ չէ, թե որոշակիորեն ուժ է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում,

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն»: Այս հիմքերի պարագայում, խևապես, անհմաստ է խոսել վարչական ակտի իրավաչափությունը հարցականի տակ դնելու մասին:

Սակայն անդրադանակ վարչական ակտն անվավեր ճանաչելու որոշ հիմքերի և նոյն չափանիշներով վերլուծենք դրանց իրավական արժեքը: Նշված օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող իրավական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ: Իսկ օրենքի խախտում առկա է, եթե չեն կատարվել, օրինակ այդ օրենքի 55-րդ հոդվածով ամրագրված

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պահանջները և այլն: Արդյո՞ք «օրենքի խախտում» եզրույթը բավականաշափ հստակ է, որպեսզի կարողանանք միանշանակ հանգել այն եզրակացության, որ դրանք բռորդն էլ էական իրավախսառուումներ են և անվերապահորեն հիմք կարող են հանդիսանալ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար:

Սեր եզրակացությունն այս առնչությամբ բացասական է. նախ, հակառակ որոշ պնդումների, վերը նշված ձևակերպումներից բխում է, որ օրենքը բնավ չի տարանջատել էական խախտումները՝ ոչ էականից, քանզի պարզապես իրավական նշանակություն է տրվել օրենքի բոլոր խախտումներին: Բացի այդ, օրենքի պահանջների մի որոշ մասը կամ միանշանակ բնույթ չունի (օրինակ, նշված օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ), կամ խիստ անորոշ ու տարողունակ է (օրինակ, նշված օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ ու հսկանալի), կամ վիճահարույց է դրանց էական նշանակությունը (օրինակ, նշված օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետի համաձայն՝ վարչական ակտը պետք է պարունակի ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է ակտը բողոքարկվել):

Բնորոշ է այն, որ վարչական ակտը հստակ և հսկանալի ձևակերպված լինելու վերաբերյալ ոչ պաշտոնական մեկնաբանություններում ևս բավարար չափով պարզաբանված չէ այդ հարցադրումը: Օրինակ, անդրադարձնալով վարչական ակտի որոշակիությանը՝ «Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ» հրատարակության հեղինակները նշում են. «Օրինակ, հոդահատկացման ակտից հստակ պետք է երևա, թե որ հոդատարձքը, ինչ չափսերով, երբ և ում է հատկացվում, ինչ նպատակով, ինչ ժամկետով և ինչ իրավունքով (սեփականության, օգտագործման)»<sup>5</sup>: Տվյալ դեպքում հարց է ծագում՝ արդյոք, չի<sup>6</sup> կարող դատարանն անվավեր ճանաչել այն վարչական ակտը, որում հսկանալի չեն ներկայացված վարձակալության պայմանները: Կարծում ենք՝ այս հեպքում պատասխանը բացասական է, քանզի, օրինակ անձի համար ոչ մի էական նշանակություն չունի, թե իրեն ինչպիսի փաստաթղթով է ժանուցվում վարչական ակտի բողոքարկման ժամկետը և այլն:

Վիճարկելի չէ, օրինակ, բողոքարկման

ժամկետն ու մարմինը նշելու պահանջը, սակայն վարչական մարմինը դա կարող է անել ցանկացած այլ եղանակով՝ կից գրությամբ, առանձին ծանուցագրով և այլն, սակայն այդ սուսկ ձևական խնդիրը չի կարող բավարար հիմք հանդիսանալ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար: Մեկ այլ օրինակ, օրենքի պահանջներից է նաև վարչական ակտն ընդունող պաշտոնատար անձի ստորագրությունը, ինչն իրավաչափ պահանջ է: Սակայն գործնականում վարչական ակտը անվավեր է ճանաչվում սուսկ այն հիմքով, որ, օրինակ, ստորագրության մի չնչին մասը դուրս է մնում ձևադրից (նույն կերպ, վարչական ակտն անվավեր է ճանաչվում այն հիմքով, որ կնիքի մի մասը դուրս է մնացել ձևադրից) և այլն:

Համոզված ենք՝ սրանք գուտ տեխնիկական բնույթի, գրագրության ոչ էական խախտումներ են, որոնց հիման վրա վարչական ակտն անվավեր ճանաչելը, թերևս, լուրջ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում: Գործնականում դատարանը կամ վերադարձական մարմինը ստանում է անսահմանափակ իրավաչափ հնարավորություն՝ սուսկ ձևական նկատումով անվավեր ճանաչելու վարչական ակտը:

Իհարկե, առավել նախընտրելի կլիներ, որպեսզի վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձինք այնքան պատրաստված լինեն, որ բացառվեր նմանաբնույթ իրավիճակը, սակայն հարկ է նկատել, որ տվյալ դեպքում կարող ենք խսել բացարձակապես կատարյալ, իդեալական վիճակի մասին, ինչն այնքան էլ իրատեսական չէ: Բացի այդ, հարկ է հարցը քննարկել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության շահավետության տեսանկյունից: Այսպես, հարց է ծագում՝ վերը նշված տեխնիկական բնույթի խախտումները որևէ կերպ խախտումներ են այդ իրավունքներն ու ազատությունները: Կարծում ենք՝ այս դեպքում պատասխանը բացասական է, քանզի, օրինակ անձի համար ոչ մի էական նշանակություն չունի, թե իրեն ինչպիսի փաստաթղթով է ժանուցվում վարչական ակտի բողոքարկման ժամկետը և այլն:

Տվյալ դեպքում, կարող է և հակառակ հետևանքը լինել. անհարկի անվավեր կարող է ճանաչվել այն վարչական ակտը, որը միանգամայն ընդունելի է անձի համար: Ընդ որում, այս դեպքում խնդիրն ամբողջությամբ չի կարող լուծել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

64-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված այն դրույթը, համաձայն որի.

«Բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրիմել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վճառ պատճառվել օգուտ ստացողին: Այս դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները»: Նկատնենք, որ անձը կարող է օգտվել այս օրենսդրական դրույթից, եթե զուտ ժամանակագրական առումով արդեն բավարարում է ստացել, հակառակ դեպքում վերջինս որևէ բավարարում չի ստանա:

Անդրադառնալով պետական կառավարման ոլորտում իրավական ակտերի պահանջների կատարման հարցադրմանը՝ ժամանակակից հետազոտողները գտնում են, որ խնդիրը ոչ այնքան իրավական ակտերի դրույթների անվերապահ կատարումն է, որքան հանրության շահերի, ըստ ամենայնի, պաշտպանությունը: Ըստ այդ հետազոտողների՝ մարդու իրավունքների և շահերի գերակայությունը կարող է հիրավի իրատեսական լինել միայն այն դեպքում, եթե գերակայում է հենց մարդկանց իրավունքների գերակայությունը՝ նաև իրավական կարգավորման շրջանակներից դուրս. «Նոր պետական կառավարման խնդիրն է ոչ միայն հնարավորինս խնայողաբար և արդյունավետորեն իրականացնել օրենսդրական մանդատները, այլև ներազել հասարակության բոլոր անդամների կյանքի բարելավմանն ուղղված քաղաքականության

վրա և իրականացնել դրանք»<sup>1</sup>:

Ամփոփելով պետական վերահսկողության առնչությամբ վերը նշված տեղեկատվությունը և դրանց առնչությամբ ներկայացված դատողությունները՝ փորձենք համակարգված տեսքով ներկայացնել որոշ եզրահանգումներ՝

- մշակել ստուգումների, ուսումնասիրությունների և տեսչական գործառույթների անցկացման մեթոդական ընդհանուր ուղեցույց, որը հիմք կհանդիսանա յուրաքանչյուր իրավասու գերատեսչության համար կոնկրետացված մեթոդական ուղեցույց մշակելու համար,

- հստակեցնել այն իրավական ակտերի ցանկը, որոնք անհրաժեշտ է սեղմ ժամկետում ընդունել, որպեսզի սպառիչ ու ամբողջական կարգավորվեն վերը նշված հարաբերությունները, մեկ փաթեթում ներառել այդ իրավական ակտերի նախագծերը, որպեսզի բացառվեն ներքին հակասություններն ու անհարկի կրկնությունները,

- կազմակերպել թեմատիկ գիտաժողովներ, ստուգումներ, ուսումնասիրություններ ու տեսչական գործառույթներ իրականացնող ստորաբաժնումներ ունեցող նախարարությունների և հանրապետական կառավարման մարմինների իրավաբանական ծառայությունների հետ, քանզի ներկա վիճակը վկայում է այդ ծառայությունների աշխատաքրում մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակի բացակայության խնդիրների մասին,

- վերանայել ոչ էական խախտումներով ուղեցվող վարչական ակտերը և անվավեր ճանաչելու վերաբերյալ օրենսդրական դրույթները:

Կարծում ենք՝ նշված եզրահանգումներն ամրողությամբ չեն ընդգրկում արդի հիմնախնդիրները, սակայն դրանք որոշակիորեն կնպաստեն դրանց լուծմանը և կնպաստեն առկա այլ խնդիրների բացահայտմանն ու լուծմանը:

<sup>1</sup>Տե՛ս Քաղաքականության վերլուծություն: Հասկացություններ և պրակտիկա, 2010թ., Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն, էջ 61:

<sup>2</sup>Տվյալ դեպքում պայմանականորեն «սահմանադրականություն» եզրույթը օգտագործել ենք, որպես «օրինականության» խնայութություն տարատեսակ, թեպես չենք բացառում, որ վերջինս իր բովանդակությամբ շատ ավելի ընդգրկում է:

<sup>3</sup>Տե՛ս Վեյս Ք.Հ. Գնահատում, ծրագրերի և քաղաքականությունների ուսումնասիրության մեթոդներ, 2010թ., Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն, էջ 260:

<sup>4</sup>Հայաստանի Հանրապետության Վարչապետի վերահսկողական ծառայության 2010թ. արխիվներ:

<sup>5</sup>Տե՛ս «Հարցեր և պատասխաններ «Վարչապետի վերահսկողական ծառայության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ», «Հարդ ընդ Սոֆթ» հրատարակչություն, Երևան 2007, էջ 113-114:

<sup>6</sup>Տե՛ս H.George Frederickson. Toward a New Public Administration, in Frank Marini, ad., Toward a New Public Administration (Scranton, PA: Chander, 1971), էջ 314:

## ԳԱԳԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, արդարադատության խորհրդի անդամ



## ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՅԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Իշխանության ֆենոմենը մարդկային հասարակության անբաժան հատկանիշն է: Առանց իշխանության չի կարող գոյություն ունենալ քիչ թե շատ կազմակերպված մարդկային հասարակություն: Իշխանությունը մարդկային համակեցության հիմնային բնութագրին է, որին առնչվում ենք կյանքի գրեթե բոլոր ոլորտներում<sup>1</sup>: «Ետևաբար, իշխանությունը ցանկացած սոցիալական համակարգի կենսագործունեության անհրաժեշտ տարրն է և այդ կենսագործունեության հիմնական պայմանը:

Իշխանության, այդ բվում պետական իշխանության առանձնահատուկ տեսակ է դատական իշխանությունը: Դեռ ավելին, ըստ Աստվածաշնչի, դատական իշխանությունն առաջնային է՝ քազակորական իշխանությունից: «Օրենքները» սահմանելուց հետո Աստված հիմնադրում է դրանց պահպանության համար դատական իշխանությունը, որը նախորդում է նույնիսկ քազակորների իշխանությանը: «Դատավորաց դարաշրջանի սկիզբը Աստվածաշնչում ներկայացված է որպես Աստծոն նախախնամության ակտ: «Տերը նրանց համար դատաւորներ կարգեց» (Դատ. 2:16): Ակզենական փուլում դատական գործառույթը դրված էր Մովսեսի վրա, չնայած արդարադատության իրականացման գործում մասնակցում էին նաև քահանաները: Դատական իշխանության առկայության մասին են վկայում Աստվածաշնչի հետևյալ դրույթները: «Քո Տեր Աստծու քեզ տուած բոլոր քաղաքներում ըստ ցեղերի դատաւորներ ու օրէնսգետներ կը կարգես, որպէսզի ժողովրդին դատեն արդար դատարանու» (Երկր. Օր. 16:18), «Նա դատաւորներ կարգեց Յուդայի երկրի բոլոր քաղաքներում, ամեն մի ամրացուած և քաղաքաում» (Բ Մնաց. 19:5), «Օրէնսգետներ և դատաւորներ նշանակիր, որպէսզի նրանք դատեն Գետի այն կողմում գտնուղ ամբողջ ժողովրդին» (Բ Եզր. 7:25) և այլք<sup>2</sup>:

Համաշխարհային

իրավագիտության

պատմության մեջ դատական իշխանության սոցիալական նշանակության մասին առավել խորությամբ և փաստարկված դատողություններով աշքի է ընկնում Շ. Մոնտեսքիոն: Մոնտեսքիոյի մոտ դատական իշխանության վերաբերյալ նոյնպես հետաքրքիր գաղափարներ կան: «Երեք իշխանությունների միջից, որոնց մասին մենք խոսում ենք վերը, դատական իշխանությունը հայտնի իմաստով, կարծես թե ամենին էլ իշխանություն չէ: Սա ավելի շատ երաշխիք է, քան քաղաքական իշխանություն՝ բացառությամբ ԱՄՆ դաշնային դատարանի, որն իրավունք ունի պաշտպանելու սահմանադրություն՝ չկաշկանդվելով ամեն տեսակի օրենքներից, որոնք կարող են ընդունված լինեն ի խախտումն երկրի գերազույն օրենքի»<sup>3</sup>:

Սակայն Մոնտեսքիոն դրանով չի բավարարվում և նշում է, որ մարդու ազատության երաշխիքը դատական իշխանության անկախությունն է: «Ազատություն չի լինի նաև այն դեպքում, եթե դատական իշխանությունը տարանջատված չէ օրենսդիր և գործադիր իշխանություններից: Եթե այն միաձուլված է օրենսդիր իշխանության հետ, ապա քաղաքացիների կյանքն ու առողջությունը կիայտնվեն կամայականության իշխանության ներքո, քանի որ դատավորը կլինի նաև օրենսդիր: Եթե այն միաձուլված է գործադիր իշխանության հետ, ապա դատավորը կեղեքից դառնալու հնարավորություն է ստանում: ... Թուրքերի մոտ, ուր այս երեք իշխանությունները միաձուլված են սուլթանի անձում, սարսափելի բռնապետություն է տիրում»<sup>4</sup>: Կյանքն ապացուցեց մեծ մտածողի իրավացիությունը: Այսօր էլ Շ. Մոնտեսքիոյի գաղափարներն արդիական են, և նորանկախ պետությունները պետք է որ հետևեն դրանց՝ դատական իշխանություն ձևավորելիս:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մոնտեսքիոն դեմ էր միանձնյա դատավորի ինստիտուտին: Այս խնդրին նա նվիրել է առանձին ենթագլուխ՝ «Միանձնյա դատի մասին», որտեղ նշում է. «Այդպիսի դատավոր հնարավոր է միայն բռնատիրական պետության մեջ: Հռոմի պատմությունից մենք տեսնում ենք, թե ինչ աստիճանի կարող են հասնել միանձնյա դատավորի չարաշահումները»<sup>5</sup>:

Քննարկվող հարցի տեսանկյունից, Մոնտեսքիոյի ուսմունքը հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի անմեղ անձը չդատապարտվի. «Եթե պաշտպանված չէ քաղաքացիների անմեղությունը, ապա պաշտպանված չէ նաև ազատությունը»<sup>6</sup>:

Ահա թե ինչու Մոնտեսքիոն դատավորի անկախության իիմնական երաշխիքը տեսնում էր նրան ցմահ նշանակելու մեջ<sup>7</sup>, ինչպես նաև գտնում էր, որ «տեղեկություններ այն լավագույն կանոնների վերաբերյալ, որոնցով անհրաժեշտ է դեկավարել քրեական դատավարության ընթացքում, և որոնք արդեն ձեռք են քերվել մի որոշ երկրներում, պետք է յուրացվեն մյուսների կողմից, մարդկության համար ավելի կարևոր են, քան որևէ այլ քան աշխարհում»<sup>8</sup>:

Հետոցիալիստական իրավաբանական գրականության մեջ դատական իշխանության՝ որպես պետական իշխանության ինքնուրույն ճյուղի մասին խոսեցին XX դարի 90-ական թվականներից սկսած<sup>9</sup>:

Դատական իշխանության մասին հետխորհրդային գրականության մեջ ազատական - իրավաբանական գաղափարները միայն 20-րդ դարի երկրորդ կեսերից սկսած օրենսդրութեան ամրագրվեցին ներպետական իրավունքում և միջազգային իրավական փաստաթղթերում, իսկ դրանց իրական կենացգործունեությունը առայժմ հնարավոր է միայն արևմտյան երկրների դատաիրավական համակարգերում<sup>10</sup>:

Տեսական գրականության մեջ «դատական իշխանություն» սոցիալ-իրավական երևույթի էռթյան և բովանդակության վերաբերյալ հստակ և միատեսակ մոտեցում չկա: Նույնիսկ հաճախ «դատական իշխանությունը» փորձում են պարզաբանել «դատարան», «արդարադատություն», «դատական համակարգ» հասկացությունների միջոցով<sup>11</sup>:

Այսպես, դեռևս XX դարի սկզբին հայտնի ուսու դատավարագետ Ի. Յա. Ֆոյնիցկին նշել է, որ «Դատարանն անաշառ միջնորդ է երկու շահագրգիռ անձանց (կողմերի) միջև վեճի կապակցությամբ»<sup>12</sup>: Դրա հետ մեկտեղ նա ընդգծում էր, որ «դատարանը ծառայում է ոչ թե առանձին անձանց, առանձին հասարակական խմբերի կամ առանձին գերատեսչությունների շահերի, այլ ընդհանուր պետական շահերից բխող արդարադատության համար»<sup>13</sup>: Եվ քանի որ «քոլոր դատական որոշումները կայացվում են պետության անունից»<sup>14</sup>, հետևաբար «արդի պետական կարգում դատարանը պետական իշխանության գործառույթ է»<sup>15</sup>:

Այստեղ տեսնում ենք, որ հայտնի գիտնականը միմյանց է խառնում «դատարան», «արդարադատություն», «պետական իշխանության գործառույթ» հասկացությունները:

Հիշյալ հեղինակի ժամանակակից մեկ այլ ուսու հայտնի դատավարագետ Ս. Ի. Վիկտորսկին առավել համարձակ մոտեցում է դրսուրում դատական իշխանության հասկացության սահմանման հարցում: Իր «Ուսական քրեական դատավարություն» գրքում, հեղինակը մի ամբողջ բաժին է նվիրել դատարանակազմության իիմնախննդիրներին, իսկ առաջին ենթագլուխ՝ «Դատական իշխանությունը և նրա առանձնահատուկ գծերը» վերտառությամբ, սկսվում է պետական մարմինների համակարգում դատական իշխանության տեղի որոշակագումամբ: Հեղինակը գտնելով, որ «օրենսդիր և գործադիր իշխանությունների հետ մեկտեղ դատական իշխանությունը կազմում է գերազույն իշխանության մասներից մեկը»<sup>16</sup>, սակայն այն «ենթաօրենսդրական մարմին է, քանի որ դատարանի խնդիրն է օրենքի կիրառումը պետության կողմից պաշտպանվող բարիքների և շահերի ուսնահարման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով»<sup>17</sup>:

Այսպիսով, Ս. Ի. Վիկտորսկին դատական իշխանությունը դիտում է ոչ թե առանձին և անկախ պետական իշխանության ճյուղերից մեկը, այլ գերագույն (միապետի) իշխանության ներքո և նրանից պատվիրակված լիազորությունների սահմանում գործող դատական մարմինների համակարգ:

Դատական իշխանության նկատմամբ համանման տեսակետի էին նաև նախահեղափոխական շրջանի գրեթե բոլոր գիտնական իրավաբանները<sup>18</sup>:

Նորագույն գրականության մեջ դատական

## ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

իշխանության վերաբերյալ միասնական տեսակետ գոյություն չունի: Հաճախ, դատական իշխանությունը նույնացնում են դատարանի, կամ դատական մարմինների համակարգի, կամ էլ արդարադատության հետ<sup>19</sup>:

Ինչպես իրավաշիրքեն նշում է պրոֆեսոր Բ. Ա. Ստրաշունը, դատական իշխանությունը, ընդհանուր առմամբ մի գործիք է, որի միջոցով իրավունքն ազդում է հասարակական հարաբերությունների վրա<sup>20</sup>:

Գործող ազգային օրենսդրությունը չի նախատեսում «դատական իշխանություն» սոցիալական երևույթի հասկացությունը: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա», իսկ Սահմանադրության 6-րդ գլուխը՝ «Դատական իշխանություն»-ը, նույնպես չի բացա-

հայտում այդ երևույթի հասկացությունը և էությունը: Միայն նշված գլխի 91 հոդվածն ամրագրում է դատարանի հիմնական գործառույթներից մեկը՝ արդարադատության իրականացումը. «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից:

Դատական իշխանությունը՝ որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, իրեն բնորոշ հատուկ ընթացակարգով կոչված է պաշտպանելու մարդու, հասարակության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ժողովրդավարական պետությունում և քաղաքացիական հասարակությունում դատական իշխանությունը նաև պետք է երաշխափորի իրավունքի գերակայությունը:

<sup>1</sup>Տե՛ս Платонов Ю.П. Технология власти. Том 1. Санкт-Петербург, 2010. С.15-17.

<sup>2</sup>Սահմանասն տե՛ս Բարսиբոյն Պետր. Первая Конституция мира. Библейские корни независимости суда. М., 1997.

<sup>3</sup>Տե՛ս Монтескье III. Избранные произведения. М., 1955. С. 160-161.

<sup>4</sup>Տե՛ս նշված աշխ., էջ 157:

<sup>5</sup>Տե՛ս նշված աշխ., էջ 85:

<sup>6</sup>Տե՛ս նշված աշխ., էջ 188:

<sup>7</sup>Տե՛ս նշված աշխ., էջ 188:

<sup>8</sup>Տե՛ս նշված աշխ., էջ 188:

<sup>9</sup>Տե՛ս Судебная власть - начало пути. „Советское государство и право”. №10. 1991. С. 139-146; Алексеева Л. Б. Судебная власть в правовом государстве: М., 1991; Концепция судебной реформы в Российской Федерации. М., 1992.

<sup>10</sup>Տե՛ս Колосапов М. Ф. Суд в системе государственной власти Российской Федерации (конституционные аспекты). Диссертация ... канд. юрид. наук. Саратов, 2001; Абросимова Е. Б. Судебная власть: конституционно-правовой аспект. Диссертация ... канд. юрид. наук. М., 1991.

<sup>11</sup>Տե՛ս Колоколов Никита Александрович. Судебная власть как общеправовой феномен. Автореферат дисс. ... док-ра юрид. наук. Владимир, 2006. С.18; Судебная власть. под ред. И. П. Петрухина. М., 2003. С. 27-39.

<sup>12</sup>Տե՛ս Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. СПб., 1996. Том 1. С. 7.

<sup>13</sup>Տե՛ս նշված աշխ., էջ 8:

<sup>14</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>15</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>16</sup>Տե՛ս Викторский С. И. Русский уголовный процесс: учебное пособие. М., 1997. С. 84.

<sup>17</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 85-86:

<sup>18</sup>Տե՛ս Кокешкин Ф. Ф. Лекции по общему государственному праву. М., 2004. С. 184-186; Комляревский С. А. Конституционное государство. Юридические предпосылки русских Основных Законов. М., 2004. С. 193-208; Чичфин Б. Н. Общее государственное право. М., 2006. С. 61-63, 335-341; Коркунов Н. М. Лекции по общей теории права. СПб., 2004. С. 296-300 և այլն:

<sup>19</sup>Տե՛ս Конституционное право. Учебник. М., 2003. С. 350.

<sup>20</sup>Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть. Учебник для вузов. Рук. и отв. профессор Страпун Б.А. 4-е издание, обновленное и доработанное. М., 2005. С. 45.

**ԳՆԵԼ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ**

ՀՀ կաստաբանների պալատի անդամ-փաստաբան,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԵճԵՐԻ  
ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՓԱՆԻԾՆԵՐԸ**

Հայաստանյան իրականությունում վարչական արդարադատությունը և վարչական դատավարությունը ՀՀ օրենսդրի կողմից իրավական կարգավորման ենթարկվեցին միայն 2007-2008 թվականներին: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ<sup>1</sup> այլևս իրողություն էր վարչական դատարանների կայացումը: Նշված նորմատիվ իրավական ակտի 3-րդ հոդվածի 4-րդ մասով վարչական դատարանը նախատեսված է որպես մասնագիտացված դատարան: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի<sup>2</sup> 4-րդ հոդվածով սահմանված նորմի համաձայն՝ օրենսգրքով նախատեսված Հայաստանի Հանրապետության դատարանները սկսում են գործել 2008 թվականի հունվարի 1-ից: 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունվեց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը<sup>3</sup>, որով սահմանվեց հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի քննության կարգը՝ դրանով իսկ իրավական կարգավորման ենթարկելով վարչադատավարական գործընթացը<sup>4</sup>:

Վարչական արդարադատության և դատավարության կայացումից հետո էլ վարչադատավարական հիմնահարցերը դեռևս հավուր պատշաճի չեն ուսումնասիրվել հայրենական իրավական գիտության շրջանակներում: Նշված հարցերի վերաբերյալ կան ընդամենը մի քանի տեսական աշխատություններ և հոդվածներ,<sup>5</sup> որոնց մի մասը նույնիսկ վերաբերվում է մինչ վարչադատավարական գործընթացի և վարչական դատարանների իրավական ամարագրումը եղած հարցերին, որոնք դատավիրավակիրառական պրակտիկայի կողմից առաջադրվող խնդիրների լուծման հետ կապված, ըստ էության, այլևս արդիական չեն: Իրավական կարգավորման մեխանիզմում վարչադատավարական ինստիտուտի կիրարկումը թե՛ պրակտիկ իրավաբաններին, թե՛ իրավագիտներին առաջարիել է

որոշակի խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է միայն այդ խնդիրների՝ տեսական հարթությունում ուսումնա-սիրության առարկա դարձնելու և որոշակի մեթոդաբանության հիման վրա դրանց լուծման ուղիները մշակելու, ի հայտ բերելու միջոցով: Մեր պնդմամբ՝ սա միակ ընդունելի, ճիշտ ճանապարհն է վարչադատահրավակիրառական պրակտիկայի կողմից առաջադրված խնդիրներն ուսումնասիրելու, վերլուծելու և գիտականորեն մշակված որոշակի հայեցակարգի (պարադիգմայի) հիման վրա վարչադատավարական ինստիտուտի կառուցողական, արդյունավետ զարգացումն ապահովելու հարցում: Դա կհանգեցնի նրան, որ վարչադատավարական ինստիտուտը իրավական կարգավորման կառուցակարգում հնարավորություն կունենա իրացնելու իր հիմնական գործառույթը՝ անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության գործընթացի արդյունավետ կարգի սահմանում:

Ինչեւ, ներկայումս դատահրավակիրառական պրակտիկայում բացակայում է միասնական մոտեցումը վարչական դատարանների ենթակայության հարցի վերաբերյալ, ավելին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով ամրագրված դրույթների ոչ ճիշտ մեկնարանությամբ պայմանավորված՝ երբեմն նոյնիսկ ընդիմանուր իրավասության դատարաններն են սխալմամբ մերժում անձանց հայցադիմումների ընդունումը՝ պատճառաբանելով, որ վեճերը ենթակա են ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը:

Նշված հարցի վերաբերյալ տարբեր, հաճախ իրարամերժ և հակասական մոտեցումները և դրա արդյունքում բույլ տրվող կամայական դատական սխալները լուրջ խոչընդոտներ են ստեղծում անձանց թե՛ հանրային սուբյեկտիվ, թե՛ մասնավոր սուբյեկտիվ իրավունքները դատական կարգով պաշտպանելու հարցում: Մասնավորապես, ՀՀ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վարչական դատարանը մերժում է անձանց հայցերի ընդունումը՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ այդ հարցը վարչական դատարանի ենթակայության շրջանակներից դուրս է<sup>6</sup>: Նույն հայցադիմումների ընդունումը (նույն իրավական ու փաստական հիմքերով և հայցի առարկան կազմող պահանջով) մերժում է նաև ընդհանուր իրավասության դատարանների կողմից այն պատճառաբանությամբ, որ նշված վեճերն ենթակա են վարչական դատարանի քննությանը<sup>7</sup>: Շատ դեպքերում հանրային իրավահարաբերություններից բխող վեճերը վարչական դատարանը սխալմամբ չի քննում՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ տվյալ վեճերը հանրային իրավահարաբերություններից բխող վեճերը չեն<sup>8</sup>: Լինում են նաև հակառակ դեպքեր. մասնավոր հարաբերություններից բխող վեճերը ընդհանուր իրավասության դատարանը չի քննում՝ պատճառաբանելով, որ դրանք հանրային իրավահարաբերություններից բխող վեճեր են<sup>9</sup>: ՀՀ վարչական դատարանի պրակտիկայում առկա են նաև իրարամերժակտեր՝ որոշակի վեճերի՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա լինելու հետ կապված<sup>10</sup>:

Երբեմն պատահում են դեպքեր, երբ ՀՀ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտեր է կայացնում այնպիսի վեճերի քննության արդյունքում, որոնք մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճեր են և վարչական դատարանի իրավասության շրջանակներից դուրս են<sup>11</sup>: Նույնանման դեպքեր են պատահում նաև ընդհանուր իրավասության դատարանների պրակտիկայում<sup>12</sup>:

Որոշ դեպքերում ՀՀ վարչական դատարանը և/կամ/ ընդհանուր իրավասության դատարանները հայցի առարկան կազմող փոխկապակցված պահանջների մի մասը քննում են, մյուս պահանջների մասով գործի վարույթը կարծում՝ պատճառաբանելով, որ այդ պահանջների մասով վեճի քննությունն իրենց իրավասության շրջանակներից դուրս է<sup>13</sup>: ՀՀ վարչական դատարանների ենթակայության հարցի հետ կապված՝ թերի և ոչ ամբողջական պատկերացումներ առկա են ոչ միայն դատարանների անունից հանդես եկող պաշտոնատար անձանց՝ դատավորների մոտ, այլ նաև իրավակիրառական պրակտիկայում գործունեություն ծավալող այլ սուբյեկտների մոտ (փաստաբաններ, դատարաններում անձնանց շահերը ներկայացնող իրավաբաններ, գործադիր իշխանության մարմին-

ներ, տեղական ինքնակառավարման մարմիններ): Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ խնդիրը կրում է համակարգային քննույթ:

Ինչպես արդեն վերը նշվեց, նման դատական պրակտիկայի առկայությունը պայմանավորված է սուբյեկտիվ, և օբյեկտիվ պատճառներով: Մասնավորապես, ՀՀ վարչադատավարական օրենսդրությամբ, ի տարբերություն այլ երկրների (Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա), սահմանված չեն այն նորմատիվ չափորոշիչները, որոնց հիման վրա արդարադատություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դատավարության մյուս սուբյեկտները կարող են պարզել կոնկրետ հարաբերության հանրային կամ մասնավոր քննույթը: Սակայն, մեր խորին համոզմամբ, ելակետային գործոնը տվյալ պարագայում սուբյեկտիվ գործոնն է, քանի որ շատ հաճախ դատարանի անունից հանդես եկող պաշտոնատար անձինք, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայով գրադկող մյուս սուբյեկտները չունեն իրավական աքսիոմատիկայի բավարար տեսական գիտելիք, որպեսզի կարողանան միջանցից տարանջատել հանրային և մասնավոր հարաբերությունները և դրանցից բխող վեճերը:

Մեր կարծիքով դատարանների կողմից նշված հարցի վերաբերյալ միասնական ճիշտ պրակտիկայի ձևով պահպանվում է հիմք կիանողիսանա նաև այլ սուբյեկտների մոտ հարցի ճիշտ և ամբողջական ընկալման համար:

Ներկա իրադրության մեջ անձիք չեն կարողանում հավուր պատշաճի իրականացնել իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանությունը, ինչով էլ պայմանավորված՝ վարչադատավարական իրավական պաշտպանության միջոցը իրավական կարգավորման գործընթացում չի իրացնում իր հիմնական գործառույթը: Նման պարագայում ավելի քան իրատապ է նշված խնդրի տեսական վերլուծությունը և դրա արդյունքում այն չափորոշիչների մշակումն ու ներկայացնումը, որոնց շնորհիվ արդարադատություն իրականացնող սուբյեկտները, դատավարական հարաբերությունների մյուս մասնակիցները, ինչպես նաև այդ հարցով շահագրգիռ յուրաքաչյուր ոք, կկարողանա հանրային իրավահարաբերությունները (դրանցից բխող վեճերը) տարբերակել մասնավոր հարաբերություններից (դրանցից բխող վեճերից):

ՀՀ վարչական դատավարության օրենսգր-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թի 8-րդ հոդվածով սահմանված է, որ վարչական դատարանն ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

1) *հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը,*

2) *վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով,*

3) *հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արիեստակցական միությունների, գործունեությունը կամ գործելու վերաբերյալ վեճերով գործերը,*

4) *վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:*

*Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սևանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:*

Նշված նորմի բառացի մեկնաբանության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ դրանում ներդրված իրական իմաստի վերհանման և հավուր պատշաճի դատական պրակտիկայում կիրառման համար անհրաժեշտ է պատկերացում կազմել «հանրային հարաբերություն» և «հանրային հարաբերությունից բխող վեճ»<sup>14</sup> հասկացությունների վերաբերյալ:

1. Յուրաքանչյուր անգամ, որպեսզի դատարանը (ինչպես նաև վարչադատավարական հարաբերությունների մյուս սուբյեկտները) պարզի՝ արդյո՞ք վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից, թե ոչ, նախ պետք է պարզի իրավահարաբերության (որից բխել է վեճը)՝ հանրային լինելու հանգամանքը:

Նախ՝ հարկ ենք համարում նշել, որ իրավագիտության արքիոնատիկ դրույթ է այն, որ իրավահարաբերությունը տարբերվում է այլ հասարակական հարաբերություններից նրանվ, որ կարգավորման է ենթարկվում իրավական նորմերի միջո-

ցով<sup>15</sup>:

Այնուամենայնիվ, ցանկացած հարաբերություն, այդ թվում՝ իրավահարաբերությունը, ուսումնասիրվում է դինամիկ և ստատիկ վիճակներում:

Դինամիկ առումով հարաբերությունն իրենց ներկայացնում է հարաբերության սուբյեկտների միջև իրավական կապ, փոխգործունեություն, միմյանց նկատմամբ փոխազդեցություն: Ստատիկ առումով հարաբերությունն իրենց ներկայացնում է որպես սերտորեն փոխկապակցված որոշակի տարրերի (սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն) մեջ ամբողջություն, ինստիտուտ, համակարգ:

Հանրային իրավահարաբերության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, մեր կարծիքով, այն պետք է ուսումնասիրության առարկա դարձնել ստատիկ վիճակում՝ որպես առանձին փոխկապացված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն) ամբողջություն, համակարգ:

Ծիշտ է, ցանկացած հարաբերությանը (այդ թվում՝ իրավահարաբերությանը) բնորոշ են վերոնշյալ տարրերը, սակայն այդ տարրերի բովանդակային-որակական տարբերությունն է, որ հնարավորություն է տալիս հարաբերությունները (այդ թվում՝ իրավահարաբերությունները) տարանջատել միմյանցից: Մասնավորապես, հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ, թե՛ օբյեկտով: Սակայն հարկ է նշել, որ հարաբերությունը «հանրային» հատկանիշով բնութագրելու և որպես «հանրային հարաբերություն» որակելու համար անհրաժեշտ են դրա առանձնահատկությունն ընդգծող երեք տարրերի (սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն) միաժամանակյա առկայությունը: Այլ կերպ ասած՝ այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ, սակայն իրենց հանակցության մեջ նոր միայն բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելը: Այժմ մեր առջև դրված խնդրի պատշաճ լուծման նպատակով և ուսումնասիրության առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար այդ տարրերը ներկայացնենք առանձին-առանձին:

ա) *Հանրային իրավահարաբերության սուբյեկտային կազմը.*

Իրավահարաբերությունը հանրային հասկանիշով բնութագրելու համար անհրաժեշտ է, որ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պեսզի հարաբերության կողմերից մեկը հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժնված սուբյեկտը (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառողներ) կամ որոշակի իրավական իիմքերով հանրային գործառույթների իրացմանը ներգրավված մասնավոր անձը<sup>16</sup>:

Իրավաբանական գրականության մեջ (հատկապես ընդհանուր իրավունքի երկրներում) ընդգծվում է այն իրողությունը, որ պետությունը շատ հաճախ հանրային հարաբերություններում հարային շահի սպասարկմանն ուղղված իր գործառույթներն իրականացնելիս անմիջականորեն հանդես չի գալիս, այլ կիսահնքնուրույն գործակալությունների (agency) միջոցով, ինչպես նաև մասնավոր ընկերությունների միջոցով<sup>17</sup>:

Արդարության առաջ չմեղանչելու համար պետք է նշենք, որ ՀՀ վարչական դատարանի միշտը դատական ակտերի վերլուծությունը բույլ է տալիս եզրահանգել, որ հանրային հարաբերության սուբյեկտային կազմի վերաբերյալ առկա է քիչ թե շատ ընդունելի մոտեցում: Մասնավորապես, այդ ակտերում ՀՀ վարչական դատարանը արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության պարագայում կողմերից մեկը պետք է լինի հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմինը: Սակայն, զգտես ինչու, «հանրային իշխանության մարմին» եզրույթը ենթարկվում է սահմանափակ մեկնաբանման, և այդ եզրույթի տակ ի նկատի են ունենում միայն գործադիր իշխանության մարմինները՝ դրա ծավալներից դուրս քողնելով հանրային իշխանության մյուս օղակը կազմող տեղական ինքնակառավարման մարմիններին:

Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԵԶԴ/0150/02/08 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 8-րդ, 13-րդ հոդվածներով ամրագրված դրույթների մեկնաբանության արդյունքում հանգել է հետևյալ եզրակացությանը. «...վարչական վեճում կողմերից մեկն անհրաժեշտարար պետք է լինի հանրային (գործադիր) իշխանության մարմինը՝ վարչական մարմինը կամ դրա անունից հանդես գալու իրավունքը ունեցող պաշտոնատար անձը»: Նույնաբովանդակ դիրքությունը ՀՀ վարչական դատարանն հայտնել է նաև իր 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ

ՎԴ/4234/05/09 որոշմամբ:

Մեր հավաստմամբ՝ ՀՀ վարչական դատարանի կողմից «հանրային իշխանության մարմին» իրավական եզրույթի նման ընկալումը և նման կերպ կիրառումը պայմանավորված է հենց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի ոչ ճիշտ մեկնաբանմամբ, մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունքը ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել է...»:

Նորմի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները առանձնացված են պետական մարմիններից: Նման իրավակարգավորման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ օրենսդիրը նշված իրավադրույթն ամրագրելիս հաշվի է առել հանրային իշխանության երկու հարթությունների՝ պետական և տեղական, առկայությունը<sup>18</sup>:

Ինչևէ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխարեն որոշակի իրավական հիմքերի առկայության պարագայում հանրային հարաբերություններում կարող են հանդես գալ նաև հանրային իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտները, որոնք, սակայն, իրավասու են իրականացնել որոշակի հանրային գործառույթներ հանրային իշխանական մարմինների (պետական և տեղական ինքնակառավարման մարմինները) անունից<sup>19</sup>:

Նշված հանգամանքը, ըստ Էության, պայմանավորված է պետության՝ որպես իրավական գոյի, երևույթի գարզացման ներկայիս աստիճանով: Սոցիալ-իրավական պետության գործունեության համար որպես հիմնարար արժեք է հանդիսանում մարդի իր արժանապատվությամբ, հիմնարար իրավունքներով և ազատություններով, (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված)<sup>20</sup> և մարդ-պետություն հարաբերության բովանդակությունում ներառված է պետության պարտականությունը՝ ձեռնարկելու անհրաժեշտ և իրավունքը բույլատրելի բոլոր միջոցները մարդ-անհատի համար անվտանգ, բարեկեցիկ և արժանավայել կյանք ապահովելու հարցում:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Պետությունն իր հանրային գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նկատառումը երեխն այդ գործընթացում ներգրավում է հանրային իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտներ (պետական ոչ առևտրային կազմակերպություններ հիմնադրելու միջոցով, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ հիմնադրելով, առանց պետական քաժնեմասի՝ առևտրային կազմակերպությունների համապատասխան իրավական հիմքերով հանրային խնդիրների լուծմանը ներգրավելով):

Այդ սուբյեկտների մասնակցությամբ հարաբերությունները նույնպես հանրային իրավական հարաբերություններ են, քանի որ այդ հարաբերություններում հանրային իշխանական սուբյեկտները միջնորդավորված ձևով իրացնում են իրենց հանրային գործառույթները: Օրինակ՝ մի շարք հանրակրթական, բարձրագույն ուսումնական հաստատությունների («Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ, «Երևանի Մ. Հերացու անվան պետական թշկական համալսարան» ՊՈԱԿ) միջոցով պետությունն ապահովում է անձանց սահմանադրական իրավունք հանդիսացող կրթության իրավունքի իրացումը: Որոշակի բժշկական հաստատությունների (որոնք ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների կամ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կարգավիճակ) միջոցով ապահովում է անձանց՝ թշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը:

Հայաստանի իրականությունում առավել ուշագրավ են բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքում հասարակության և պետության կարիքերի համար սեփականության օտարման հետ կապված հարաբերությունների որակման հարցը: Մեր խորին համոզնամբ՝ այս հարաբերությունները նույնպես հանրային իրավահարաբերություններ են, որտեղ պետությունը, որպես կանոն, անմիջականորեն հանդիս չի գալիս: Մասնավորապես, այդ հարաբերություններում պետությունը հանդիս է գալիս այլ սուբյեկտների (առևտրային կազմակերպությունների) միջոցով<sup>21</sup>: Ներկայումս ձևավորված դատարակակիրառական պրակտիկան փաստում է, որ այդ հարաբերություններից բխող վեճերը բննվում են ընդհանուր իրավասության դատարանների<sup>22</sup>, ինչը մեր կարծիքով, այդ հարա-

բերությունների՝ հանրային լինելը նույնպես սուբյեկտիվ պատճառներով չընդունելու, ժխտելու արդյունք է:

Ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հանրային իրավահարաբերության սուբյեկտային կազմի հետ կապված հարցի իրավական կարգավորումը կրում է հասվածական բնույթը:

Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված է, որ սույն օրենսգիրը սահմանում է վարչական դատարանում և վճռարեկ դատարանում **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:**

Նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ....:

Վերոգրյալ նորմերի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ վարչադատական պաշտպանությունից անձինք կարող են օգտվել միմիայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կամ դրանց պաշտոնատար անձանց հետ հարաբերություններից բխող վեճերով: Նման իրավակարգավորումը դուրս է բռնել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայություն իրականացնող սուբյեկտներին (պետական ծառայող, համայնքային ծառայող): ՀՀ-ում գործող օրենսդրությամբ պետական և համայնքային ծառայողները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձիք չեն: Մենք նման եզրահանգման ենք գալիս մի շարք նորմատիվ իրավական ակտերի համակարգային ուսումնասիրության արդյունքում (ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ված, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի<sup>23</sup> 1-ին հոդվածի 3-4-րդ մասեր, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքի<sup>24</sup> 1-ին հոդված, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի<sup>25</sup> 1-ին, 3-րդ հոդվածներ):

Գործող վարչադատավարական պողիտիվ իրավունքը անձանց թույլ չի տալիս նաև վարչադատավարական կարգով իրենց խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնել նաև հանրային իրավահարաբերություններից բխող այն վեճերով, որի մյուս կողմը հանրային իշխանական լիազորությամբ օժտված մարմին չէ, սակայն որոշակի իրավական հիմքով ներգրավված է հանրային գործառույթների իրացման գործըթացում:

**Նշված հարցի վերաբերյալ ամբողջական կարգավորումներ են ամրագրված, օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 6-ին ընդունված Ուկրաինայի Վարչական դատավարության թիվ 2747-IV օրենսգրքով, 2000 թվականի փետրվարի 10-ին ընդունված «Վարչական դատարանի մասին» Մոլովայի Հանրապետության թիվ 793-XIV օրենքով:**

«Վարչական դատարանի մասին» Մոլովայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է հանրային իշխանության նարմնի հասկացությունը, ըստ որի՝ հանրային իշխանության մարմին է համարվում օրենքով կամ այլ նորմատիվ վարչական ակտով հիմնադրված և հանրային շահերի իրացման կապակցությամբ որպես հանրային իշխանություն գործող ցանկացած կազմակերպված կառույց կամ մարմին: Սույն օրենքի իմաստով հանրային իշխանության մարմիններին հավասարեցվում են հանրային իշխանության գործառույթներ իրականացնող կամ հանրային սեփականություն (քարիքները) օգտագործող, օրենքով հանրօգուտ ծառայություններ մատուցելու լիազորություն ունեցող մասնավոր իրավունքի սույնեկտուները, այդ թվում՝ նոտարական ծառայություններ մատուցող անձինք:

Նույնարդվանդակ իրավակարգավորում է սահմանված նաև Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին, 7-րդ մասերով ամրագրված նորմերով:

Կան երկրներ, որտեղ վարչական դատավարության գործըթացը կարագվորող նորմատիվ իրավական ակտերում նույնպես վերոնշյալ հարցի վերաբերյալ կրագավորում չկա, սակայն այդ հարցերն իրենց կարգավորումն են ստացել ձևավոր-

ված դատական պրակտիկայով: Մասնավորապես, «Վարչադատական գործըթացի մասին» Գերմանիայի Դաշնության դաշնային օրենքով չկա որևէ կարգավորում այն հարցի կապակցությամբ՝ արդյո՞ք հանրային գործառույթներ իրականացնող մասնավոր իրավունքի սույնեկտի մասնակցությամբ հարաբերությունները հանրային հարաբերություններ են, թե՛ ոչ: Սակայն մի շարք դատական ակտերով Գերմանիայի Դաշնության բարձրագույն վարչական դատարանն արձանագրել է, որ նման հարաբերություններն հանրային իրավահարաբերություններ են և դրանից բխող վեճերը ենթակա են վարչական դատարանների քննությանը<sup>26</sup>:

Նման իրադրությունում գտնում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով, ինչպես նաև 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմերը պետք է խնբագրվեն (փոփոխվեն և/կամ/ լրացվեն) այնպես, որ անձանց հանրավորություն ընձեռվի իրենց հանրային սույնեկտիվ իրավունքների պաշտպանության հայցեր ներկայացնել պետական և համայնքային ծառայութերի, ինչպես հանրային գործառույթներ իրականացնող մասնավոր իրավունքի սույնեկտուների գործողության, անգործության և վերջիններիս ակտերի դեմ: Սակայն, ինչպես վերը նշեցինք, իրավահարաբերության հանրային լինելու համար միայն սույնեկտային կազմը դեռևս բավարար չէ: Իրավահարաբերությունը հանրային որակելու և դրանից բխող վեճերը ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա լինելու համար միայն հարաբերության սույնեկտային հատկանիշի անբավարար լինելն ամրագրված է նաև որոշ դատական ակտերով: Օրինակ՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԵԶԴԴ/0150/02/08 որոշմամբ դատարանը արձանագրել է (4-րդ էջ, 2-րդ պարբերություն). «Վեճի ընդդատությունը վարչական դատարանին պայմանավորված է ոչ միայն վեճի սույնեկտային հատկանիշով, այլ այդ վեճի հանրային իրավական ընույթով: Այսինքն, վեճն ընդդատյա է վարչական դատարանին, եթե այն բխել է հանրային իրավահարաբերությունից»: Նույնանման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վարչական դատարանն իր 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՎԴ/4234/05/09 որոշմամբ:

www.lawinstitute.am

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մեր պնդմամբ, սակայն, դատարանների նշված մոտեցումը թերի է և ոչ ամբողջական: Մասնավորապես, իրավահարաբերության հանրային բնույթը և սուբյեկտային հատկանիշը հակադրվում են միմյանց և դիտարկվում են որպես հանրային իրավահարաբերությունը բնութագրող առանձինառանձին հատկանիշներ: Սինչեո, մեր կարծիքով, իրավահարաբերության հանրային բնույթը ի հայտ է գալիս որոշակի հատկանիշների միաժամանակյա առկայությամբ, որոնցից մեկն էլ հենց սուբյեկտային կազմն է: Այլ կերպ ասած՝ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օրյեկտը, թե՛ բովանդակությունը: Սա նշանակում է, որ իրավահարաբերության հանրային բնույթը ի հայտ է գալիս վերոնշյալ երեք տարերի համակցությամբ:

Ինչեւ, պետությունը, ինչպես նաև տեղական իշխանությունները, իրենց գործառույթների իրացման համար անհրաժեշտ միջոցները, որպես կանոն, ձեռք են բերում քաղաքացիափական գործարքների կնքման միջոցով, որտեղ պետությունը գործարքի մյուս կողմի հետ հանդես է գալիս որպես իրավահավասար սուբյեկտ: Այս ամենով պայմանավորված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրը քաղաքացիափական հարաբերությունների սուբյեկտների շարքին է դասել նաև պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին (հոդված 128):<sup>27</sup> Ավելին՝ դեկիլտային պարտավորությունների ժամանակ պետությունն է հատուցում պետական մարմինների և /կամ/ դրանց պաշտոնատար անձնանց կողմից պատճառված վճարը, որոնք նույնպես մասնավոր քաղաքացիափական հարաբերություններ են (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-1065-րդ հոդվածներ):<sup>28</sup>

Նշված օրինակներն ուղղված են հիմնավորելու այն իրողությունը, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է:

Նման պարագայում անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրության առարկա դարձնել հանրային իրավահարաբերությունը մասնավոր իրավահարաբերություն-ից տարանջատող մյուս երկու տարրերը՝ բովանդակությունը և օրյեկտը:

**բ) Հանրային իրավահարաբերության բովանդակությունը.**

Իրավահարաբերության բովանդակություն ասելով՝ իրավագիտության մեջ նկատի ունեն հարաբերության սուբյեկտների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը:<sup>29</sup>

Հանրային իրավահարաբերության պարագայում այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանական սուբյեկտը պարտավոր է իրավանացնել օրենքով սահմանված իր իշխանական լիազորությունները (այսուհետ՝ նաև իշխանական լիազորություններ), որոնց իրացումն էլ անձանց (ֆիզիկական և իրավաբանական անձանց) հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է<sup>30</sup>: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կրթության, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու անձանց իրավունքների իրացման համար պետությունը՝ ի դեմս լիազոր պետական մարմնի, պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ուսումնական և բժշկական հաստատությունների հիմնում, դրանց լիցենզավորում (ուսումնական հաստատությունների հավատարմագրում), այդ սուբյեկտների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանական մարմնը հանրային իրավահարաբերության բովանդակության մեջ ներառված իրավունք չունի, այլ ունի ընդամենը միայն ու միայն օրենքով սահմանված որոշակի դեպքերում հայեցողություն դրսերելու հնարավորություն: Ներկայումս իրավագիտությունում արդարացիորեն ժխտվում է հանրային հարաբերություններում հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավունք ունենալու հանգամանքը, քանի որ իրավունքը թե՛ կրողի հարցում, թե՛ իրացման հարցում բնութագրվում է այնպիսի բնութագրական հատկանիշներով, որ նման գործուները հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին վերագրելը կիանգեցնի լուրջ խնդիրների<sup>31</sup>: Դրանով պայմանավորված՝ առավելագույնը, որ կարող է անել հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտն իր լիազորություններն իրականացնելիս, օրենքով վերջինիս իրավասությանը վերապահված հարցերի կարգավորման ընթացքում խնդրի օպտիմալ լուծման տարրերակի ընտրությունն է (վարչական հայեցողություն), այն էլ այն

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պարագայում, եթե այդ ընտրության հնարավորությունը ընձեռված է օրենքով, նման ընտրության համար առկա են բավարար փաստական հիմքեր (հայեցողության փաստական սահմաններ):<sup>32</sup>

Վարչական հայեցողության խնդիրը իր վրա է սևեռել վարչագետների ուշադրությունը դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Անդրադառնալով հանրային իրավահարաբերության բովանդակության հարցին՝ Ա. Ի. Ելիսոսոսովը նշել է, որ այդ հարաբերության սուբյեկտ հանդացող իշխանական սուբյեկտը ունի ընդամենը վարչական հայեցողություն իրացնելու հնարավորություն, որի համար իրավական հիմք են հանդիսանում հանրային իրավական դիսպոզիտիվ նորմերը (jus dispositivum): Այլ կերպ ասած՝ դրանցով վարչական (հանրային իշխանական-ընդգծում իմն է՝ **Գ. Մուլտիպլան**) մարմնին վերագրվում է հայեցողության որոշակի չափ (intra legem):<sup>33</sup>

Սա նշանակում է, որ վարչական մարմինը հանրային իրավահարաբերությունների շրջանակում չի կարող կամայականորեն իրաժարվել անձին տրամադրել այս կամ այն իրավունքը, որևէ կերպ խոչընդոտել անձի իրավունքի իրացմանը և (կամ) վերջինիս ծանրաբեռնել որոշակի պարտականությամբ, եթե դրա համար բացակայում են օրենքով սահմանված հիմքերը (խոսքը վերաբերում է իրավական նորմերին և այդ նորմերի հիպոթեզներում սահմանված փաստական հանգամանքներին, որոնց առկայության պարագայում նոր միայն այդ նորմերի կիրառումը կըրի իրավաչափի բնույթը):

Հանրային իրավահարաբերության իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտը /կողմը/ նույնպես կրում է այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականությունները:<sup>34</sup> Այլ կերպ ասած՝ այդ հարաբերություններում պարտականություն կրող միակ սուբյեկտը իշխանական-լիազոր մարմինը չէ: Օրինակ՝ հարկային իրավահարաբերություններում տնտեսվարող սուբյեկտները, բացի իրավունքներից, ունեն նաև որոշակի պարտականություններ («Հարկերի մասին» ՀՀ օրենքի<sup>35</sup> 15-րդ հոդված), որոնց չիրականացման դեպքում վերջիններս կարող են ենթարկվել պատասխանատվության:

Ավելին՝ շատ դեպքերում հանրային սուբյեկտիվ իրավունքներ կրողները իրենց այդ իրավունքներն իրացնելիս պետք է հետևեն նորմատիվ

իրավական ակտերով սահմանված պրոցեսուալ իրավական կարգավորումներին: Օրինակ, որպեսզի անձը կարողանա ապրանքները ՀՀ տարածք ներմուծել ՀՀ մաքսային օրենսգրքի<sup>36</sup> 87-րդ հոդվածով սահմանված մերոդով (գործարքի գնի մեթոդ՝ ապրանքի մաքսային արժեքը հաշվարկելու միջոցով, նա պետք է մաքսային մարմիններին ներկայացնի բավարար ապացույցներ (հաշիվ-ապրանքագիր կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ), որոնցով կհավաստվի ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի կիրառման համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքների առկայությունը:

### գ) Հանրային իրավահարաբերության օրյեկտը.

Իրավագիտության մեջ գրեթե բոլորի կողմից ընդունելի է, որ իրավահարաբերության օրյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը:<sup>37</sup>

Սեր համոզմամբ՝ հանրային իշխանության իրականացման (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, անմիջական ժողովրդավարական ինստիտուտների կիրարկման) ընթացքում պետք է գերակայող լինի և հետապնդվի մեկ նպատակ, այն է՝ ժողովրդին պատկանող իշխանության իրականացման ընթացքում իրավասումարմինների կողմից պետք է բացահայտվի և հանրային շահը ընկալվի ավելի բարձր մակարդակում (խոսքը հանրային իշխանության բոլոր մակարդակներում հանրային շահի ընկալման, ըմբռնման մասին է) և միջոցներ ձեռնարկվի դրա իրագործման, կյանքի կոչման, հասարակական կյանքում առարկայացման համար: Այդ ամենը իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներն իրականացնում են գոյություն ունեցող դեռևս միակ բույլատրելի ձեր՝ հանրային իրավահարաբերության միջոցով: Այլ կերպ ասած՝ հանրային շահը (դրա կոնկրետ դրսերումները) իդեալականից, գաղափարականից դեպի իրականը և առարկայականը տանող միակ ուղին հանրային իրավահարաբերությունն է:

Իրերի նման դասավորության պայմաններում մենք գտնում ենք, որ հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սալսարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ<sup>38</sup>: Նշված իրողությունն անուղղակի իրավական կարգավորման է ենթարկված «Վարչական դատարանի մասին» Մոլովայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմով:

Տեղին ենք համարում վկայակոչել Յու. Ա. Տիխամիրովի հետևյալ խոսքերը. «Հանրային իրավունքում (որանով կարգավորվող հարաբերության շրջանակներում ընգծումն իմն է՝ Գ. Մոլովայան) սուրյեկտոր գործում է ոչ թե իր շահերի, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման համար»<sup>39</sup>:

Նման պարագայում արդարացներեն կարող է հարց ծագել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային շահը, որոնք են այն էական հատկանիշները, որոնց համակցությամբ հնարավոր է պարզել այդ երևույթի էությունը և այն տարբերել այլ երևույթներից: Հարկ է նշել, որ հանրային շահ հասկացությունը որոշ երկրներում փորձ է արվել սահմանել հենց պողիտիվ իրավունքով: Մասնավորապես, «Վարչական դատարանի մասին» Մոլովայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված նորմի համաձայն՝ հանրային շահը հանրային հաստատությունների և այլ սուրյեկտունների կազմակերպումը և գործունեությունը կարգավորող նորմերով պաշտպանվող շահերն են: «Ծահ» եզրույթով անվանվող երևույթը հանդիսանում է մի շարք գիտությունների, այդ թվում՝ իրավագիտության ուսումնասիրության առարկա: Դրա հետազոտման արդյունքում ձևավորվել են մի շարք տեսություններ: Իրավագիտության մեջ շահը ներկայացվում է որպես դիալեկտիկական երևույթ, որի էությունը ի հայտ է գալիս սուրյեկտիվի և օբյեկտիվի համադրման արդյունքում: Մասնավորապես, շահի առարկան կազմող պահանջմունքը, կարիքը ներկայացվում է որպես դրա օրյեկտիվ սկիզբ, իսկ այդ պահանջմունքի գիտակցումը և դրա հիմքի վրա նպատակների ձևավորումը վերագրվում է սուրյեկտիվ սկզբին<sup>40</sup>: Իրավագիտության մեջ իրավական շահը առանձնացվում է այլ շահերից և ներկայացվում է որպես տիպականացված շահ, ավելին՝ իրավունքում շահի դասակարգումը հանրային և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս դիալեկտիկական փոխկապակացվածության մեջ, որոնք գլեթե միշտ փոխլուցնում են միմյանց<sup>41</sup>:

Ինչևէ, իրավական շահի դասակարգումը հանրայինի և ոչ հանրայինի իրականացվում է՝ հիմքում դմելով այդ շահը կրող սուրյեկտին: Այլ կերպ ասած՝ շահը համարվում է հանրային (հանրային շահ), քանի որ դրա կրողը հանդիսանում է հասարակությունը՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ<sup>42</sup>: Իրավաբանական գրականության մեջ առկա է տեսակետ, համաձայն որի՝ հանրային շահը, կրող սուրյեկտի հետ կապված, կարող է դրսերվել միայն համայնքային և (կամ) պետական շահի տեսքով, այլ կերպ՝ հանրային շահը չունի իրավաբանական դրսերություն<sup>43</sup>:

Սակայն հանրային շահը, միայն սուրյեկտույթին չափանիշով չէ, որ տարբերակվում է այլ, այդ թվում՝ մասնավոր իրավական շահից: Հանրային շահի տարբերակման հիմք է հանդիսանում նաև դրա առարկան, մասնավորապես, հանրային շահի առարկա են հանդիսանում համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներ, որոնց հասարակական կյանքում առարկայացումը անհրաժեշտ նախապայման է հասարակության, մարդկության գոյաւումնան և հետագա զարգացման համար<sup>44</sup>:

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ հանրային շահը, իր բովանդակությունը կազմող հանրային բարիքներով, մեկընդմիշտ տրված և կաղապարված երևույթ չէ, այն ժամանակի և տարածության մեջ ենթարկվում է փոխակերպումների (տրանսֆորմացիաների)<sup>45</sup> կապված հասարակության պահանջմունքների փոփոխման հետ: Ավելին՝ հանրային շահին բնորոշ է նաև տեղայնացման հատկությունը, ինչը նշանակում է, որ, որոշակի գործուներով պայմանավորված, շահը հանրային է զուտ կոնկրետ երկրի տարածքում: Ամեն դեպքում, ներկայում դատական համակարգի (թե՛ միջազգային, թե՛ ներպետական) զարգացումը վկայում է այն մասին, որ հանրային իրավական շահի՝ որպես գանհատողական եզրույթի, իրական իմաստը վերհանող և մասնավոր շահի հետ փոխհարաբերակցության օպտիմալ տարբերակը ի հայտ բերող հիմնական սուրյեկտուներից մեկն էլ հենց դատական ատյաններն են: Պետության (ամբողջ պետական մեխանիզմի) առաքելությունն էլ կայանում է նրանում, որ վեր հանի հանրային շահը և մասնավոր շահի հետ հավասարակշռելով, փոխհամաձայնեցնելով՝ դրանք ուղղորդելով թե՛ իրավաստեղծ, թե՛ իրավակիրառ, թե՛ իրավա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պաշտպան գործընթացներին:

Վերոգրյալի ընդհանրացման արդյունքում հանրային իրավահարաբերությունը կարելի բնութագրել որպես հարաբերություն, որում կողմերից մեկն անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (կամ որոշակի իրավական հիմքով հանրային գործառույթների իրացման գործընթացում ներգրավված իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտը), որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակացությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները:

Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ենթակա լինելու հանգամանքը մեր կողմից առաջադրված եղանակով պարզելու դեպքում ՀՀ դատական ատյանները (դրանց անունից հանդես եկող պաշտոնատար անձիք՝ դատավորները), ինչպես նաև իրավակիրառական գործունեության մյուս սուբյեկտները պետք է գնահատման առարկա դարձնեն հետևյալ հանգամանքները.

- արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, դրանց պաշտոնատար անձիք, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներ) կամ նման լիազորությամբ չօժտված, սակայն հանրային գործառույթների իրացմանը որոշակի իրավական հիմքերով ներգրավված մասնավոր իրավուրի սուբյեկտ է, թե՝ ոչ,

- արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունն է կազմում հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե ոչ,

- արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալիրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե ոչ:

Այս պայմանների միաժամանակյա առկայության պարագայում նոր միայն հնարավոր կլինի փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչն իր հերթին հնարավարություն կը նետեղի հաղթահարելու այդ հարաբերությունից բխող վեճերի ենթակայության հարցի վերա-

բերյալ հակասական, իրարամերժ մոտեցումները՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Ամեն դեպքում ենթակայության հետ կապված հարցերի պարզման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բոլոր հանրային հարաբերություններից բխող վեճերը չեն, որ վերապահված են ՀՀ վարչական դատարանի քննությանը:

### 2. Հանրային իրավահարաբերությունից բխող վեճի մասով.

Ինչպես արդեն վերը նշվեց՝ հանրային իրավահարաբերություններում հանրային իշխանական լիազորություններուն ունեցող սուբյեկտը հանրային շահի կյանքի կոչման և առարկայացման նպատակով իրացնում է իր իշխանական լիազորությունները, սակայն միշտ չէ, որ հանրային շահի իրացման կապակցությամբ ծագած հարաբերություններում հանրային իշխանությունն իրացնող սուբյեկտները դրսերում են իրավաչափ վարքագիծ, ինչը պայմանավորված է մի շարք գործուներով: Քիչ չեն դեպքերը, երբ ոչ իրավաչափ (հակարավական) վարքագիծ են դրսերում նաև այդ հարաբերությունների՝ իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտները: Նշված հանգամանքները հարաբերության մասնակիցների միջև հանգեցնում են տարածայնությունների, «բախումների», վեճերի:

Իրավաբանական գրականության մեջ վեճը սահմանվում է որպես որոշակի իրավական հարցի կապակցությամբ իրավունքի երկու և (կամ) ավելի սուբյեկտների շահերի բախում՝ պայմանավորված վիճելի հարցի կապակցությամբ վերջիններիս հակադիր և միմյանց փոխբացառող շարժառիթներով և նպատակներով<sup>46</sup>:

Հանրային իրավահարաբերությունից բխող վեճի առարկայի վերաբերյալ մեզ համար անընդունելի մոտեցում կա դատական պրակտիկայում, մասնավորապես, ՀՀ վարչական դատարանն իր 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՎԴ/4234/05/09 որոշմամբ վեճի առարկայի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը (2-րդ էջ, 5-րդ պարբերություն): «Հանրային իրավահարաբերություններից ծագող վարչական վեճի առարկայի այն հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականություններն են, որոնց վերաբերող (որպես կանոն) վարչական ակտի կամ գործողության (անզորության) առնչությամբ տարածայնություն-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Աեր են առաջացել վարչական մարմնի և մասնավոր անձի միջն, կամ առաջացել այդ ակտի իրավաշափության հարց: Այսինքն՝ մասնավոր անձը համաձայն չէ վարչական մարմնի կողմից իր հանդեպ՝ օրենքի կամ նորմատիվ իրավական այլ ակտի որևէ դրույթի՝ վարչական ակտով կիրառման հետ, գոտնելով, որ դրանով իր իրավունքները խախտվել են կամ իր վրա դրվել է ոչ իրավաչափ պարտականություն»: Նույնանման դիրքորոշում է հայտնել նաև Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր 2009 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԵԶԴ-0150/02/08 որոշմամբ (4-րդ էջ, 3-րդ պարբերություն):

Ըստ մեզ՝ հանրային իրավահարաբերությունից բխող վեճի առարկան կազմում է ոչ թե անձի իրավունքը և (կամ) պարտականությունը, ինչպես նշված է ՀՀ վարչական դատարանի վերը հիշատակված որոշումներում, այլ՝ վարչական մարմնի ոչ իրավաչափ արարքը, վերջինիս ակտի հակաօրինականությունը, կամ իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտի հակահրավական վարքագիծը<sup>47</sup>:

Դատարանի իրավասությանը ենթակա վեճերի առարկայի վերաբերյալ նույնարովանդակ դիրքորոշում է հայտնել նաև Ֆ. Ն. Հայեքը, նշելով, որ դատարանների կողմից իրավական գնահա-

տանքի են ենթակա անձանց միայն այն արարքները, որոնք վնասում են այլ անձանց, այլ կերպ ասած արարքներ, այլ անձանց նկատմամբ (operationes quae sunt ad alterum)<sup>48</sup>:

Եթե հանրային շահի իրացման կապակցությամբ ծագած հանրային իրավահարաբերություններում իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը կատարում է արարք (անզործություն, գործողություն), որի համար լիազորված չէ օրենքով, ապա իրավահարաբերության մյուս կողմը սահմանադրահրավական մակարդակով ամրագրված հնարավորություն ունի համապատասխան արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների գործադրմամբ (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված) պահանջելու վերացնել հակահրավական արարքով պայմանավորված խախտումները, ինչպես նաև իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին իրավաչափ վարքագիծ դրսորելու կապակցությամբ պահանջ ներկայացնել: Անձինք վերոնշյալ հնարավորությունը կարող են իրացնել թե՝ արտադատական պաշտպանության, թե՝ դատական պաշտպանության միջոցներով: Անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքի դատական արդյունավետ պաշտպանության իրացման ապահովմանն էլ հենց ուղղված է վարչադատավարական գործնքացը՝ իր ընթացակարգային կարգավորմամբ:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2007/20 (544), 18.04.2007, հոդ. 489:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2007/20 (544), 18.04.2007, հոդ. 490:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2007/64 (588), 19.12.2007, հոդ. 1300:

<sup>4</sup> Սինէ 2008 թվականի հունվարի 1-ը հանրային իրավահարաբերություններից բխող վեճերը, որոշակի վերապահումներով, քննվում էին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգործով սահմանված կարգով. մասնավորապես, նշված օրենսգործի 25-26-րդ գլուխներով սահմանված դատավարական ինստիտուտներն (25-րդ գլխով ամրագրված դրույթներով կարգավորման էին ենթարկված վարչական իրավախստումների համար տույժի ենթարկելու մասին պետական մարմնների, տեղական ինքնակառավարման մարմնների և դրանց պաշտոնատար անձանց որոշումները վիճարկելու վերաբերյալ գործերի, իսկ 26-րդ գլխով սահմանված նորմերով՝ պետական մարմնների, տեղական ինքնակառավարման մարմնների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անզործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի հատուկ հայցային վարույթները) ամբողջությամբ վերաբերում էին հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի քննությանը:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Մեղրյան Ս. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի ենթակայությունը վարչական դատարանին // Գիտաժողովի գեկուցումների ժողովածու: Հնդիանուր խճագրությամբ Գ.Ս. Ղազինյանի: Եր.: ԵՊՀ հրատ., 2008, էջ 65-72, Ղազարյան Ն. Վարչական արդարադատության դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում // Պետություն և իրավունք N 4 (42), էջ 82-89, files/news/1131\_am.pdf կայքից 31.07.2010թ., Արգարյան Է. Նոտարական գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերի վարույթը վարչական դատավարությունում վերցված է համացանցի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

[http://www.court.am/files/news/1128\\_am.pdf](http://www.court.am/files/news/1128_am.pdf) կայքից 31.07.2010թ., N 4, 2007թ., էջ 11-14, Տեր-Մովմայան Բ.

Վարչական արդարադատության ինստիտուտի տեղը և դերը վարչական իրավունքում // Իրավագիտության արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու: Եր.: Երևանի համալս հրատ., 2007թ., էջ 68-80, Խանձանյան Բ. Հետորես առաքելու ազգային պատարանի աշխատավայրում // Իրավագիտության արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու: Եր.: Երևանի համալս հրատ., 2007թ., էջ 81-86:

<sup>6</sup>Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2009 հոկտեմբերի 13-ի թվականի թիվ ՎԴ/4234/05/09 որոշումը, որն անփոփոխ է բողոքել ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՎԴ/4234/05/09 որոշմամբ: Նշված որոշման դեմ տարրած վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՎԴ/4234/05/09 որոշմամբ վերադարձրել է:

<sup>7</sup>Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունվարի 11-ի թիվ ԵԿԴ/3492/02/09 որոշմամբ վերադարձվել է այն նույն հացադիմումը (նույն փաստական և իրավական հիմքերով, ինչպես նաև նույն առարկայով, որի ընդունումը մերժվել էր ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի թիվ ՎԴ/4234/05/09 որոշմամբ): 2010 թվականի հունվարի 11-ի թիվ ԵԿԴ/3492/02/09 որոշման դեմ ներկայացված վերաբնիշ բողոքը ՀՀ վերաբնիշ քաղաքացիական դատարանի 2010 թվականի փետրվարի 8-ի թիվ ԵԿԴ/3492/02/09 որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկվող որոշումը թողնվել է անփոփոխ: ՀՀ վերաբնիշ քաղաքացիական դատարանի նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 7-ի թիվ ԵԿԴ/3492/02/09 որոշմամբ վերադարձվել է:

<sup>8</sup>Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԵԱՀԴ/0150/02/08 որոշումը:

<sup>9</sup>Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 12-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը: Հարկ ենք ենք համարում նշել, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը բացի այն, որ ոչ իրավաչափորեն չի քննել մասնավոր հարաբերությունից բխող վեճը, կայացրել է սխալ դատական ակտ (հայցադիմումը վերադարձնելու մասին)՝ կիրառելով համապատասխանարար ՀՀ քաղաքացիական դատավարության 92-րդ հոդվածով ամրագրված համապատասխան դրույթը: Վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանն ենթակա չիննելը հիմք է հայցադիմումի ընդունումը մերժելու համար (ՀՀ քաղաքացիական դատավարության 91-րդ հոդվածի 1-ին մաս): Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ԵԱՀԴ/1742/02/09 որոշումը:

<sup>10</sup>Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի ապրիլի 28-ի բողոքը բավարարելու մասին թիվ ՎԴ/4/0074/05/09 որոշումը, 2009 թվականի մարտի 23-ի թիվ ՎԴ/6279/05/08 վճիռը: ՀՀ վարչական դատարանը 2009 թվականի մայիսի 11-ին ընդունել է բողոքը մերժելու մասին թիվ ՎԴ/1696/05/09 որոշումը, որն ամբողջովին հակասում է վերը նշված դատական ակտերին: Նշենք, որ երկու դեպքերում էլ հայցվորի պահանջի եռթյունն նույն է եղել և վերջինս այն հիմնավորել է նույնանման փաստական և իրավական հիմքերով:

<sup>11</sup>Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ ՎԴ/0752/05/08 վճիռը, 2009 թվականի ապրիլի 10-ի ՎԴ-646105/08 վճիռը, 2009 թվականի հունիսի 9-ի ՎԴ/1468/05/09 վճիռը, 2009 թվականի հուլիսի 14-ի թիվ ՎԴ/1623/05/09 վճիռը, 2009 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՎԴ/1416/05/09 վճիռը: Նոյնարուվանդակ դիրքորոշում կա նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավակիրառական պրակտիկայում, օրինակ տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 24-ի թիվ ՎԴ/3881/05/08 որոշումը: Հարկ ենք ենք համարում նշել, որ նշված դատական ակենտրով լուծում ստացած վեճի առարկայով, նույնանման կողմերով և նմանատիպ հիմքերով գործեր իրավամբ քննություն են ընդհանուր իրավասության դատարանների կողմից (տես օրինակ՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի մայիսի 29-ի վճիռը) Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ ԳԴ/0089/02/10 վճիռը, Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԱՆԴ/2106/02/09 վճիռը, ՀՀ վերաբնիշ քաղաքացիական դատարանի 2010 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԱՆԴ/2106/02/09 որոշումը:

<sup>12</sup>Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունիսի 3-ի թիվ ԵԿԴ/3114/02/09 վճիռը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 25-ի թիվ ԵԿԴ/0273/02/08 վճիռը, որու բողոքարկման արդյունքում կայացված ՀՀ վերաբնիշ քաղաքացիական դատարանի 2010 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0273/02/08 որոշումը: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի թիվ ԵԿԴ/0291/02/08 վճիռը: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԵԿԴ/2003/02/08 վճիռը: Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 29-ի թիվ ԵԱՆԴ/1824/02/08 վճիռը: ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի օգոստոսի 11-ի ԵԿԴ/2003/02/08 որոշումը:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

<sup>13</sup> Նշված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը բավականին հստակ հայտնել է ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի փետրվարի 3-ի ՍԴ-Ն 787 որոշմամբ: Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչական հարաբերություններից ածանցվող քաղաքացիական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»: Սա նշանակում է, որ դատարանները պարտավոր են առաջնորդվել ՀՀ իրավական համակարգի մասը կազմող 2009 թվականի փետրվարի 3-ի ՍԴ-Ն 787 որոշմամբ, սակայն այդ որոշումից հետո էլ դատարանները, կարծես թե, չեն փոխել իրենց դիրքորոշումը նշված հարցի կապակցությամբ: Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ ՎԴ/0476/05/08 վճիռը: ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՎԴ/0476/05/08 վճիռը: Երևան քաղաքի Էրեբունի և Նորբարձեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հուլիսի 15-ի թիվ ԵԷ-Դ /0368/02/09 վճիռը:

<sup>14</sup> Մեր կարծիքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթով «գործ» և «վեճ» եզրույթներն անհարկի նույնացվել են: Իրականում հանրային հարաբերության կողմերի միջև ծագում է վեճ և իրավական պետության կառուցակարգում դատարանն է այն ինստիտուտը, որն արդարադատություն է իրականացնում կողմերի միջև առկա վեճը քննելու և լուծելու միջոցով: Տե՛ս, օրինակ, ՀՀ Սահմանադրության մեկնարանուրյուններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի-Եր: «Իրավունք» 2010թ., էջ 897, Բարակ Ա., Սудейское усомотрение. Перевод с английского.-М.: Изд-во НОРМА,1999. С. 231: Հարցի վերաբերյալ ճիշտ իրավակարգվորում է ամրագրված 21.01.1960թ. ընդունված «Վարչադատական գործընթացի մասին» Գերմանիայի Դաշնային օրենքով, որի §40-ի 1-ին մասով սահմանված է, **որ բոլոր հանրային-իրավական վեճերը**, որոնք չեն վերաբերվում սահմանադրական իրավունքի ոլորտին, քննում են վարչական իրավասության դատարանների կողմից, եթե դաշնային օրենքով այդ վեճերի լուծումն ուղղակիորեն վերապահված չէ այլ դատարանի իրավասությանը: Նույնարովանդակ իրավական կարգավորում է առկա նաև Ռուսական վարչական դատավարության օրենսգրքում, որի 4-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված նորմի համաձայն՝ վարչական դատարանների իրավասությանը վերաբերելի են **բոլոր հանրային-իրավական վեճերը**, բացառությամբ այն վեճերի, որոնց լուծումն օրենքով վերապահված է այլ դատարանների իրավասությանը: Ինչ վերաբերվում է «գործ» եզրույթին, ապա այն դատավարական հարաբերություններում, այդ թվում՝ վարչադատավարական հարաբերություններում, կրում է գործավարական բնույթը: Դատական գործ ասելով՝ պետք է հասկանալ դատարանի կողմից քննովող կոնկրետ վեճի կապակցությամբ նյութերի ամբողջություն, որն իր մեջ ներառում է դատավարության մասնակցիների ներկայացրած նյութերը, գործով ապացույցները, դատավարական փաստարդերը, դատական ակտերը և այլն: Դրանով էլ հենց պայմանավորված է այն իրողությունը, որ ՀՀ Դատարանների նախագահների խորհրդարը (ՀՀ ԴՆ ) ընդունել է իրավական ակտեր, որոնցով սահմանվում են գործերի կազմնան, վարման, համարակալման և այլ գործավարական կանոններ, մասնավորապես, ԴՆ -ի 2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 23-Լ որոշմամբ կարգավորվում են դատական գործերի վիճակագրական դասակարգիչների, դատական գործերի կազմնան և համարակալման հետ կապված գործավարական հարաբերությունները (այս որոշման մասին ավելի մանրամասն տես Հայաստանի Հանրապետության դատական դպրոց, դատական ծառայողի սեղանի գիրք, Իրավունք, 2008 էջ 18-34): Ավելին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի որոշ դրույթներով «վեճ» և «գործ» եզրույթներն օգտագործվում են իրենց իրական իմաստով, օրինակ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-3-րդ մասերով, 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-3 կետերով, 23-րդ հոդվածի 1-ին մասով, 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված նորմերով «վեճ» եզրույթն օգտագործվում է իր իրական իմաստով: Մեր կարծիքով «գործ» և «վեճ» հասկացությունների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ոչ ճիշտ կիրառելը պայմանավորված է օրենսդրական (իրավաբանական) տեխնիկայի կանոնների չպահպանմամբ: Մասնավորապես. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-4-րդ մասերով սահմանված է, որ իրավական ակտի դրույթները պետք է ընկալվեն միանշանակ, ապահովեն հուզական չեզորություն: Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

<sup>15</sup> Տե՛ս, օրինակ Լекции по общей теории права. Коркунова Н.М. Книга 2. Объективная и субъективная сторона права. По изданию 1914 года. Редактирование и комментарии. (с) www.allpravo.ru – 2003. С. 141; Толстой Ю. К. К теории правоотношения. Ленинград, Изд-во Ленинградского Ун-та. 1959. С. 3; Прогасов В.Н. Теория права и государства. Проблемы теории права и государства: Вопросы и ответы. М.: Новый Юрист, 1999. С 40-41; Теория государства и права. Под ред. Алексеева С.С. М., 1998. С. 287; Петражицкий Л. И. Теория права и государства в связи с теорией нравственности. Серия „Мир культуры, истории и философии”. СПб.: Изд-во „Лань”. Санкт-Петербург, 2000. С.

## ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

278.

<sup>16</sup>Հանրային հարաբերություններ են նաև հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների միջև առկա հարաբերությունները: Նշված սուբյեկտների միջև առկա հարաբերությունները հանրային են, քանի որ այդ հարաբերությունների ընթացքում վերջիններս իրացնում են բացառապես իրենց իշխանական լիազորությունները, որոնք ուղղված են օրենքով իրենց իրավասությանը վերապահված կառավարման ենթակա սոցիալական ոլորտում հանրային շահի իրացմանը: Դրանով պայմանավորված՝ սույն աշխատանքի տեքստում հանրային իրավահարաբերությունն ուսումնասիրության առարկա է՝ դարձվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ չէ:

<sup>17</sup> Սրա վերաբերյալ ավելի մանրամասն տես Բերման Ս. Պրավութական համակարգ. Հայաստան. 2007. C. 339-363; Bernard Schvarz, Roberto L. Corada, Administartive law: a casebook, fifth edition, New York 2001, էջ 6-49.

<sup>18</sup> Տեղական (մունիցիպալ) իշխանությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման իրականացման միջոցով, իսկ պետական իշխանությունն իրացվում է պետական կառավարման, օրինաստեղծման, արդարադատության իրականացման միջոցով: Նշված իրողությունն անուղղակի և ուղղակի իրավական կարգավորման է ենթարկված մի շաբթ նորմատիվ իրավական ակտերով, մասնավորապես «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում ժողովորդն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն:

<sup>19</sup> Նշված հաճախանքը տեղ է գտնի նաև ՈՒ սահմանադրական դատարանի որոշ ակտերում. Տես, օրինակ, ՈՒ սահմանադրական դատարանի 2002 թվականի փետրվարի 19-ի թիվ 5 որոշումը, 1998 թվականի մայսի 19-ի թիվ որոշումը: Հղումն ըստ համացանցի <http://www.ksrf.ru/Decision/Pages/default.aspx> կայքի 01.08.2010թ. որոշյամբ:

<sup>20</sup> ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված դրույթով ներդրված սահմանադրական իմաստի վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի Եր: «Իրավունք» 2010թ., էջ 63-70: Հարկ ենք հանարում նշել նաև, որ մարդու՝ որպես գերազույն արժեքի և նրա հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրողության՝ սահմանադրական վարչական մակարդակով ամրագրմանը նախորդել են հսկայական սոցիալ-իրավական գործնքացներ. անհատ-պետություն հարաբերություններն անընդհատ կրել են բովանդակային-որակական փոփոխություններ, ինչը ժամանակի և տարածության մեջ ունեցել է իր գիտատեսական հիմքերը և հիմնավորումները: Այդ գիտատեսական հայեցակարգերի մասին ավելի մանրամասն տես, օրինակ, Կազинյան Ա. Գ. Եվրոպեйская судебная защита основных прав и свобод человека. Локсембург-Страсбург. Сравнительно-правовой анализ. Ер., 2005. С. 13-17.

<sup>21</sup> Օրինակ, ՀՀ կառավարության 01.03.2007թ. թիվ 347-Ն որոշմամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հետ կապված հարաբերություններում որպես ձեռքբերող կողմ հանդես են գալիս տարբեր կազմակերպահրավական ձևեր ունեցող առևտրային կազմակերպություններ:

<sup>22</sup> Տես, օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԵԿԴ-2003/02/08 վճիռը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի թիվ ԵԿԴ-0291/02/08 վճիռը:

<sup>23</sup> Տես ՀՀՊՏ 2002/1 (176), 09.01.02, հոդ. 1:

<sup>24</sup> Տես ՀՀՊՏ 2007/66 (590), 26.12.07 հոդ. 1339:

<sup>25</sup> Տես ՀՀՊՏ 2005/7 (379), 26.01.05 հոդ. 117:

<sup>26</sup> Ավելի մանրամասն տես, օրինակ, Ռիխտեր Ի., Շլուեր Գ.Փ. Սудебная практика по административному праву, 1995, переворд с немецкого. М., 2000. С. 150-158.

<sup>27</sup> Տես ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.98: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածով ամրագրված դրույթներով կարգավորվող հարաբերությունների և պետության՝ որպես այդ հարբերության մասնակցի, վերաբերյալ որոշակի դիրքորոշում է առկա ՀՀ վերաբերնի քաղաքացիական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԵԶԴ-0527/02/08, ինչպես նաև նույն օրվա թիվ ԵԶԴ-0484/02/08 որոշումներում:

<sup>28</sup> Սրա հետ կապված տես, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ՎԴ-3172/05/08 որոշումը, որով թիվ ՎԴ-3172/05/08 քաղաքացիական գործն ուղարկվել է ըստ ընդդատության:

<sup>29</sup> Տես Տոլстой Յ. Կ. Կ теории правоотношения. Ленинград: Изд-во Ленинградского Ун-та. 1959. С. 32; Халфина Р.Օ. Общее учение о правоотношении. М.: Юр.лит. 1974. С. 202-203; Протасов В.Н. Теория права и государства.

Проблемы теории права и государства: Вопросы и ответы. М.: Новый Юрист, 1999. С. 41.

<sup>30</sup> «Պետության պարտականություն» հասկացության, դրա տեսակների, դրա իրավանացման՝ որպես անձանց իրավունքների իրացման կարևորագույն երաշխիքի մասին ավելի մանրամասն տես, Կարимова Р.Р. Юридические обязанности, сущность и проблемы реализации: диссертация на соискание степеней кандидата юридических

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

наук, Екатеринбург, 2008. С. 105-122.

<sup>31</sup>Տե՛ս, օրինակ, Мальцев Г.В. О субъективных публичных правах // Материалы научной конференции „Интерес в публичном и частном праве”: Государственный университет-Высшая школа экономики. М., 2002. С 15.

<sup>32</sup> Սակայն հանրային իրավունքում անվիճելի է այն փաստը, որ օրենքով սահմանված դեպքերում հանրային իրավահարաբերություններում իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներն ունենում են որոշակի ազատություն՝ իրենց իրավասությանը վերապահված հարցի լուծման տարրերակների ընտրության հարցում, որը, սակայն, չի կարող կրել կամայական բնույթ: Նման ընտրության հնարավորությունը իրավագիտությունում ստացել է վարչական հայեցողություն անվանումը (administrative discretion), որը մի շարք աշխատությունների ուսումնասիրության առարկա է դարձվել: Տե՛ս, օրինակ, Мицкевич Л.А. Проблема административного усмотрения и неопределенных правовых понятий в административном праве Германии // Сравнительное правоведение: наука, методология, учебная дисциплина. Материалы международной научно-практической конференции. Красноярск, 2008. С. 196-202; Берман У. Правовая система США. 3-й выпуск. Новая юстиция, 2007. С. 361. Մեր խորին համոզմամբ նշված հանգամանքը հաշվի առնելու արդյունք է «Վարչարարության իմունֆների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով վարչական հայեցողության հարցի հետ կապված իրավական կարգավորման սահմանումը, մասնավորապես նշված նորմով ամրագրված է, որ հայեցողական լիազորություններն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

<sup>33</sup> Տե՛ս Елистратов А.И. Основная начала административного права. Издание Г.А. Лемана. М. 1914. С. 86.

<sup>34</sup> Ու-սահմանադրական դատարանը հարկեր վճարելու պարտականությունն իր 1998 թվականի հոկեստմբերի 12-ի թիվ 24 որոշմամբ ներկայացրել է որպես հանրային իրավական պարտականություն: Հղումն ըստ համացանցի <http://www.ksrf.ru/Decision/Pages/default.aspx> կայքի 01.08.2010թ. դրությամբ:

<sup>35</sup> Տե՛ս ՀՀՊՏ 1997/11, 20.05.97:

<sup>36</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2000/19 (117), 21.08.00:

<sup>37</sup> Իրավահարաբերության օբյեկտի, դրա տեսակների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս օրինակ Տոլстой Յ. Կ. Կ теории правоотношения. Ленинград: Изд-во Ленинградского Ун-та. 1959. С. 48-49; Խալֆինա Р.Օ. Общее учение о правоотношении. М.: Юр. лит. 1974. С. 202-203; Դудина А. П. Объект правоотношения (вопросы теории). Изд-во Саратовского университета. 1980. С. 32-70.

<sup>38</sup> Ներկայում հանրային իրավունքում (մասնավորապես վարչական իրավունքում) գերիշխող է այն մոտեցումը, մարդ-պետություն հանրային հարաբերությունները ծագում են պետության կողմից մասնավոր իրավունքի սուբյեկտներին հանրային ծառայություններ մատուցելու կապակցությամբ, որոնց դիմաց վերջիններս վճարում են հարկերով: Պետության կողմից մատուցվող այդ ծառայությունների առարկան է մարդկանց համար անվտանգ և բարեկեցիկ կյանք ապահովումը: Տե՛ս օրինակ Աдминистративное-процессуальное право Германии: закон об административном производстве, закон об административно-судебном процессе, законодательство об исполнении административных решений, М. Волтерс. N 5. С. 14-16; Административная реформа: проблемы развития и совершенствования (IX Лазаревские чтения) // Государство и право, 2006. N 8. С. 10.

<sup>39</sup> Տե՛ս Тихомиров Ю.А. Интерес в публичном и частном праве: согласование и противоборство // Материалы научной конференции „Интерес в публичном и частном праве”: Государственный университет-Высшая школа экономики. М., 2002. С. 5.

<sup>40</sup> Դրա վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Тотьев К. Ю. Публичный интерес в правовой доктрине и законодательстве // Государство и право, 2002, N 9. С. 19-20; Михайлов С.В. Интерес как общенаучная категория и ее отражение в науке гражданско-правового права// Государство и право, 1999, N 7. С. 86-87.

<sup>41</sup> Տե՛ս Мальцев Г.В. О субъективных публичных правах. // Материалы научной конференции „Интерес в публичном и частном праве”: Государственный университет-Высшая школа экономики. М. 2002. С. 13-14, Կարապետյան Ն.Ա. Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում. իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան 2010, Էջ 17-18: Հանրային և մասնավոր շահերի տարրերակման, դրանց փոխազդեցության և փոխազդմանավորվածության հարցերն ուսունասիրության առարկան են դարձվել սկսած 18-19-րդ դարերից, և հանրային շահ հասկացությունը ժամանակի ընթացքում ենթարկվել է որակական-բովանդակային փոխակերպումների: Մասնավորապես, արդեն իսկ 18-րդ դարում հանրային շահը գերմանացի իրավագետների կողմից ներկայացվում էր ոչ այնպես, ինչեալ ասեմբ հոռմեական իրավաբանների կողմից: Ավելի մանրամասն տե՛ս Պետրաշչյան Լ. Ի. Теория права и государства в связи с теорией нравственности. Серия „Мир культуры, истории и философии”. СПб.: Изд-во „Лань”. Санкт-Петербург, 2000. С. 508-520; Лекции по общей теории права. Коркунова Н.М. Книга 2. Объективная и субъективная сторона права. По изданию 1914 года. Редактирование и комментарии. (с) [www.allpravo.ru](http://www.allpravo.ru) – 2003.

<sup>42</sup> Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ

## ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահը ընկալելի, ընդունելի լինելու հանգամանք է: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Դедով Դ. Ի. Կոնֆլիկտ ինտերեսով. Մ: Յոլթեր Կլյուշեր. 2004. Ը. 203, հղումն ըստ համացանցի <http://books.google.com/books?id=C3AEwN6XFOoC&lpg=PR9&dq=what%20is%20the%20legal%20interest&f=false> կայքի 01.07.2010թ. դրույթամբ:

<sup>43</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնարանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարույրունյանի, Ա. Վաղարշյանի-Եր: «Իրավունք», 2010թ., էջ 371:

<sup>44</sup> Հանրային շահի առարկան կազմող համընդհանուր բարիքների հասկացության, մասնավոր շահի և բարիքի հետ հարաբերակցության մասին ավելի մանրամասն տե՛ս Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Խայեկ. Право, законодательство и свободы, современное понимание либеральных принципов справедливости и политики; пер. с англ. Б. Пинскера и А. Кутарева.- М.: ИРИСЭН. 2006. С. 169-176.

<sup>45</sup> Այս հանգամանքը առավել շատ ի հայտ է զայխու ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում, տե՛ս, օրինակ, Sangeeta Ahuja, People, law and justice: casebook on public interest litigation/ volume 2, published by Orient Longman Limited, New Dehli 1997 էջ 622-623, 700, հղումն ըստ համացանցի [http://books.google.com/books?id=mvWzfNILRqoC&printsec=frontcover&dq=subject:%22Law%22,+public+interest&hl=ru&ei=ufHdATLfhBJLk4gbgIPHADg&sa=X&oi=book\\_result&ct=result&resnum=3&ved=0CCwQ6AEwAg#v=onepage&q&f=false](http://books.google.com/books?id=mvWzfNILRqoC&printsec=frontcover&dq=subject:%22Law%22,+public+interest&hl=ru&ei=ufHdATLfhBJLk4gbgIPHADg&sa=X&oi=book_result&ct=result&resnum=3&ved=0CCwQ6AEwAg#v=onepage&q&f=false) կայքի 01.07.2010թ. դրույթամբ: ՀՀ-ում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով սահմանված նորմերի կիրառման հետ կապված հանրանյին շահի եռյան վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ 630 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «Եթե սեփականությունն օտարվում է հասարակության կարիքների համար, անկախ նրանից, թե ինչ սուրյեկտի է (պետություն, համայնք, ֆիզիկական կամ իրավաբանական անձ) հետազայտ օրենքով սահմանված կարգով անցնում գույքը, օրենքը պետք է սահմանի այնպիսի կարգավորում, որը երաշխավորի տվյալ գույքի օգտագործումը հասարակության այն կարիքների համար, որի հիմնավորմանը կատարվել է օտարումը:... Օրենքը պետք է սահմանի, թե ինչպիսի որոշել հասարակական եւ պետական կարիքը, ինչպիսի է հիմնավորվում, որ դրա՝ համարժեք փոխհատուցմամբ բավարարումը թելադրված է բացառիկ՝ գերակա հանրային շահով, ինչ կարգով այդ հիմնավորման մասին տեղեկացնել սեփականության իրավունքը կրողին, ինչպիսի վերջինս կարող է Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իր իրավունքների շրջանակներում դատական կարգով բողոքարկել ներկայացրած հիմնավորումը, եթե գտնում է, որ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը չի ապահովում «արդարացի հավասարակշռություն» հասարակության շահերի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջև»:

Հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-630.htm> կայքի 01.07.2010թ. դրույթամբ: ՀՀ սահմանադրական դատարանն հանրային շահի հետ կապված հարցերին անդրադատել է նաև իր 2010թ. հուլիսի 13-ի ՍԴՈ 903 որոշմամբ- հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-903.pdf> կայքի 18.07.2010թ. դրույթամբ:

<sup>46</sup> Իրավական կոնֆլիկտոլոգիայի, կոնֆլիկտի հասկացության, սահմանների առարկայի, օբյեկտի մասին ավելի մանրամասն տե՛ս Юридическая конфликтология / отв. ред. В. Н. Кудрявцев.- М., 1995. С. 5-37, Կոնֆլիկտների դինամիկ ասպեկտի, դրանց՝ որպիս սոցիալական գործնքաների մասին տե՛ս Կոնֆլիկտ: Վերլուծությունից մինչև միջամտություն /խմբ./ Ս. Զելենին, Դ. Դրաբան, Լ. Ֆաաք.- Եր.: Զանգակ-97, 2007, էջ 69-70:

<sup>47</sup> Հանրային իրավահարաբերությունից բխող վեճի հասկացության և հատկանիշների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Լուպար Ե.Բ. Պонятие и признаки административно-правового спора // Журнал российского права. 2002. N 2. С. 44-51.

<sup>48</sup> Տե՛ս Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Խայեկ. Право, законодательство и свобода, современное понимание либеральных принципов справедливости и политики. Пер. с англ. Б. Пинскера и А. Кутарева.- М.: ИРИСЭН, 2006. С. 120.

## ԱՆՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հայ-Ռուսական (Ալավենական) համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ժուռնալիստիկայի տեսության և պատմության ամբիոնի հայցորդ



# ԼԵՇՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՋՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՍՏԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆ Է

Դարաբաղյան հակամարտության շփման գոտում աղբքեջանական դեկավարության կողմից կազմակերպված սաղբանքները ավանդույթ են դարձել: Վերջին ժամանակներս Աղբքեջանի կողմից պարբերաբար իրականացվում են հետախուզադիմություններ, որի արդյունքում փորձում են հարձակումների ամբողջ մեղքը գցել Հայաստանի վրա:

Հունիսի 18-ին Զայլու գյուղի շրջակայրում Լեռնային Դարաբաղի Հանրապետություն էր քափանցել զինված հետախուզական խումբ: Փոխհրաձգության արդյունքում հայկական կողմից զրկվեցին 4 զինվոր, ևս 4 զինծառայող վիրավորվեցին: Եվ դա անմիջապես ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի Սանկտ-Պետերբուրգ կատարած ենօրյա այցից հետո, որտեղ նա հրավիրված էր ուս գործընկեր Դմիտրի Սեղվեդիկի կողմից Միջազգային տնտեսական հանրագումարին մասնակցելու համար: Այն սկսվեց Հայաստանի, Ռուսաստանի և Աղբքեջանի առաջնորդների եռակողմնանդիպումով: Այն փաստը, որ Իլիամ Ալիկը գնաց բանակցությունների (չնայած այն բանի, որ ավելի վաղ մշտապես ընդգծում էր դրանց անհմաստությունը) խոսում է այն մասին, որ Բաքուն «ստիպած էր ընդունել միջազգային ասպարեզում ընդունված խաղի կանոնները»:

Եթե Իլիամ Ալիկը հանդիպեց ԵԱՀԿ խմբի Սինկի համանախագահների հետ, նա լրեց Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքը, այսինքն՝ փորձեց հասկացնել, որ մոլորակի տնտեսական խնդիրները նրան հետաքրքիր չեն, և նա ժամանել է Սանկտ-Պետերբուրգ բացառապես դարաբաղյան քեմայով բանակցություններին մասնակցելու: Այն փաստը, որ Ալիկը ընդունեց Դ.Սեղվեդիկի հրավերը, ակնհայտորեն զարմացրեց և ինչ-որ չափով վշտացրեց Բաքվի որոշ վերլուծաբանների: Դատելով

տեղական մամուլի հրապարակումների երանգից, նրանք լրջորեն տրամադրված են ոչ խաղաղ սցենարի: Հավանաբար իշխանությունները այնքան հաճախ են կրկնում «պատերազմ» բառը, որ շատերն իրոք հավատացել են դեպքերի նման զարգացմանը: Այդ պատճառով նախագահի մասնակցությունը բանակցությունների շարունակություններին շատերի համար որոշ չափով անսպասելի էր: Մյուս կողմից, բացառված չէ, որ բանակցությունների արդյունքները այնքան դուր չեկան Ի. Ալիկին, որ նա որոշեց այդ կերպ արտահայտել իր դժողովությունը:

Այդ առիթով ելույթ են ունեցել տարբեր հայ փորձագետներ: Հայտնի փորձագետ՝ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆարյանի խոսքերով՝ այդ ենթադրությունները որոշակի նախադրյալներ են ստեղծել դարաբաղյան գործընթացի կարգավորման առաջխաղացման համար: Դրա մասին, մասնավորապես, վկայում է նաև աղբքեջանական կողմի առաջարկների վերաբերյալ «բավականին լուրջ արձագանքը»: Պատմաբանը ենթադրում է, որ առավելություն այստեղ ստացել են ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և ուժի չկիրառման սկզբունքները: Եվ Բաքվի պատասխանն էլ եղավ Զայլուի մոտ իրականացված սաղբանքը («Աղբքեջանցինները կրկին կրակում են»<sup>1</sup>), ընդ որում քաղաքագետը կարծում է, որ դա պատասխան էր ոչ միայն Ռուսաստանին, այլ նաև Ամերիկային: «Ալիկը գիտեր, որ Դմիտրի Սեղվեդիկը կայցելի ԱՍՆ և կհանդիպի Բաքար Օքամայի հետ, որ նրանք կըննարկեն դարաբաղյան գործընթացի կարգավորման ներկայիս փուլը և վերջին առաջարկությունները: Կազմակերպելով սաղբանքը՝ Աղբքեջանը փորձում է ցույց տալ այդ երկրներին, որ համաձայն չէ բանակցությունների տվյալ փուլի հետ»<sup>2</sup>, - ասել է Ռուբեն Սաֆարյանը:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Նրա կարծիքով, «կամ Աղբեջանում կան տվյալ առաջարկության շատ հակառակորդներ, կամ պատճառը երրորդ կողմի խորհուրդն է» : Թվում է, այդպիսի «խորհրդատու» տվյալ դեպքում կարող էր լինել Անկարան:

Այն բանից հետո՝ երբ հունիսի 17-ին Սանկտ-Պետերբուրգում կայացավ Հայաստանի, Ռուսաստանի և Աղբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը, դիտորդների գնահատականով Իլիամ Ալիկը կփորձեր ինչոր կերպ վրեժինդիր լինել Սանկտ-Պետերբուրգում իր դիվանագիտական «պարտության համար»<sup>3</sup>: Արդեն հունիսի 18-ին մոտ 23:30-ին Զայլու գյուղի շրջանում Արցախի տարածք ներխուժեց զինված հետախուզական խումբ, որին հաջողվեց հասնել Ղարաբաղի և Աղբեջանի զինված ուժերի շփման գծի հյուսիսարևելյան հատվածին: Այնտեղ այն նկատվեց դիրքայինների կողմից: Սերձամարտ ծավալվեց, որի արդյունքում դիվերսիոն խմբի առաջխաղացումը կասեցվեց: Ընդհարման տեղում բողնելով մեկ դիակ և զինամքերը՝ թշնամին նահանջեց:

«Հատկանշական է, որ հերթական լուրջ պատահարը հակամարտող կողմերի շփման գծում տեղի ունեցավ անմիջապես Հայաստանի, Ռուսաստանի և Աղբեջանի նախագահների եռակողմ հանդիպումից հետո, հատկապես, երբ տվյալ հանդիպման ժամանակ Իլիամ Ալիկը պատրաստականություն հայտնեց շարունակել բանակցային գործնարար դարաբաղյան հակամարտության շրջանակներում: Իր հերթին Սերժ Սարգսյանը հայտարեց, որ այդ սադրանքի պատճառով հայկական կողմը չի պատրաստվում վերանայել իր դիրքորոշումները, քանի որ գիտակցարար գնում է բանակցությունների և ունի հստակ նպատակ: Աղբեջանական կողմի հայտարարության համաձայն, ինչպես միշտ, առաջինը հարձակվել է Հայաստանը: Բայց «Այդ դեպքում ինչո՞ւ՝ աղբեջանցի դիվերսանտի դիակը հայտնաբերվել է ԼՂՀ տարածքում»<sup>4</sup> և ԼՂՀ ու Աղբեջանի ԶՈՒ շփման գծում տեղի ունեցած պատահարից հետո պաշտոնատար անձանց հնչեցրած հայտարարություններն ու կոչերը հասցեազրված էին առաջին հերթին Աղբեջանին, և դա, փաստորեն դեղին քարտ էր Քարվին: Դրա մասին հայտարարեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Հունիսի 18-ի Աղբեջանի դիվերսիայի վերաբերյալ մեկնաբանություններ է արել նաև

պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանը. «Եթե դա կազմակերպված դիվերսիա չէ, նշանակում է՝ ինքնազլուխ արարք է, և ապացուցում է մեր կանխատեսումները այն մասին, որ ոգևորվելով իր ուազմական սարքավորումների քանակությունից՝ Աղբեջանը ընդունակ չէ դեկավարել սեփական գինված ուժերը և հրամանատարներին»<sup>5</sup>: Իսկ Մինսկի ԵԱՀԿ խմբի հանդիպման ժամանակ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հերթական անգամ հաստատեց Արցախի հավատարմությունը հակամարտության խաղաղ կարգավորմանը, իսկ Աղբեջանի կողմից նորմերի խախտումները միայն բացասական կանորադառնան կարգավորման գործնարար վրա, մինչդեռ «Արցախի անկախությունն ու անվտանգությունը ենթակա չէ քննարկման»<sup>6</sup>:

Ամեն դեպքում, եթե նույնիսկ «պետերբուրգյան առաջարկությունը իրականում գոյություն է ունեցել, ապա, ինչպես կարծում է «Նովյե Վրեմյա» թերթը, այն մեզ համար ավելի ընդունելի է, քան Բարվի: Թերթում այս հարցը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Արդյո՞ք Մոսկվայի «սեպարատական» ջանքերը Վաշինգտոնի և Փարիզի անհավանությանը չեն արժանանա: Ամեն ինչից երևում է, որ Վերջին տարվա ընթացքում Մայացյալ Նահանգները և Ֆրանսիան բանակցություններում գիտակցված նախաձեռնությունը զիշել են Ռուսաստանին: Քանի դեռ ամերիկյան համանախագահը Սերյու Բրայզը էր, ամեն ինչ այլ էր: Այն ժամանակ առաջնությունը ամերիկացիներին էր և ոուսները դրա հետ չին վիճում»<sup>7</sup>, - գրում է «ՆՎ»-ն:

Այն փաստը, որ ներկայում Ռուսաստանն է միանանյա կրում միջնորդական առաքելությունը, Պետերբուրգում ասուլիսի ժամանակ հաստատեց արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Այսինքն՝ խոսքը կրկին գնում է Հայաստան-Աղբեջան-Ռուսաստան եռակողմ ծևաչափի մասին: Մայացյալ Նահանգներն ու Ֆրանսիան այդ ծևաչափում բացակայում են: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ մյուս համանախագահները գործնարար վերաբերյալ տեղեկացված չեն: Հիմնական սկզբունքների մասին համաձայնության պրեամբուլայի տեքստի վերաբերյալ Սոչիի պայմանավորվածությունը նույնպես իրականացակ առանց ամերիկացիների ու ֆրանսիացիների մասնակցության: Սակայն նրանք բոլորովին դեմ չին և միայն ողջունում էին ոուսների հաջող գործողությունները:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 26-ին «Գոլոս Արմենի» թերթը գրում է, որ աղբեջանաբորբական համաձայնեցված քարոզչությունը շարունակում է իր լայնաճակատ հարձակումը Հայաստանի և Ղարաբաղի վրա: Այդ քարոզչության հավատարիմ մունետիկ-ներից է ԵԽԽՎ բուրք նախագահ Մելքոնյան Չափուղողին: Նա ոչ միայն շարունակում է ջանքեր գործադրել Ղարաբաղի հարցով ԵԽԽՎ ենթակոմիտեի վերակենդանացման համար, որպեսզի ավելորդ անգամ սակարկի դարարադյան հարցի շուրջ, այլև արդեն հայտարարություններ է անում այն մասին, որ հայ-քուրքական երկխոսությունը շարունակություն կունենա միայն այն դեպքում, եթե Երևանը կիրաժարվի «Սահմանադրական դատարանի որոշման մեջ պարունակվող նախապայմաններից և հայկական գորքերի գրավյալ տարածքներից դուրս բերելուց հետո»,<sup>8</sup> քանի որ ամբողջ աշխարհը կընդունի, որ առանց դրա տարածաշրջանում կայունություն հնարավոր չէ:

Հայաստանի համար «Թիվ մեկ խնդիրն է ԼՂՀ միջազգային ճանաչումը»<sup>9</sup>: Սակայն չնայած նրան, որ Հայաստանի ազգային անվտանգության ուշադրության կենտրոնում է գտնվում Հայաստանի սահմանների անվտանգության մակարդակը, ինչպես նաև ռազմական արդյունաբերության զարգացումը, - գրում է «Հայաստանի Հանրապետություն»<sup>10</sup> թերթը, օգոստոսի 31-ի վաղ առավոտյան աղբեջանական կողմը ձեռնարկել է դիվերսիայի հերթական փորձ, Աղբեջանի և ԼՂՀ ԶՈՒ շփման գծում՝ Վերին Չայլու բնակավայրի շրջանում: Ծավալված մերձամարտի արդյունքում ԼՂՀ Պաշտպանության Բանակի գինծառայողներից մեկը վիրավորվել է: Այնուհետև, սեպտեմբերի 4-ին Լեռնային Ղարաբաղի և Աղբեջանի գինված ուժերի շփման գծում հյուսիսարևելյան ուղղությամբ՝ Զրաբերդ բնակավայրից երկու կիլոմետր հեռու աղբեջանական կողմը ձեռնարկեց հետախուզադիվերսիոն հարձակման հերթական փորձ: Ձեռնարկված միջոցառումների և ծավալված մերձամարտի արդյունքում աղբեջանական ուժերը ետ շպրտվեցին՝ բռնիւթյունով մեկ գինծառայողի դիակ: Սակայն, նման սադրանքները, որոնք նպատակ ունեն խափանել դարարադյան կարգավորման բանակցային գործընթացը, չեն ստանում համապատասխան գնահատական միջազգային հանրության կողմից:

Ըստ երևույթին, սույն բվականի օգոստոսին՝ Հայաստանի և Ռուսաստանի նախագահներ

Սերժ Սարգսյանի և Դմիտրի Մեդվեդևի միջև տեղի ունեցած Երևանյան բանակցությունների արդյունքները «չուրախացրին» Իլհամ Ալիևին: Նախագահները ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի ուսական գինվորականները ոչ միայն պարզապես պահպանեցին իրենց բազան Գյումրիում մինչև 2044 թիվը, այլև պարտավորվեցին օգնության գալ Հայաստանին գինված հակամարտության դեպքում: Հաշվի առնելով, որ դարարադյան խնդրի պատճառով Բաքուն և Երևանը մինչ այժմ տեխնիկապես գտնվում են պատերազմի մեջ, այդ համաձայնությունը ծայրաստիճան մտահոգեց Աղբեջանին: Եվ ամենից առաջ մեծ մասմբ դրանով է բացատրվում այն շտապողականությունը, որով Դմիտրի Մեդվեդևը որոշեց այցելել նաև Բաքու: «Ռուսաստանի համար շատ կարևոր է կայունության պահպանումն այստեղ՝ Կովկասում: Ռուսաստանը կովկասյան երկիր է, կասպյան երկիր է: Մեր մոտակա հարևան և ընկեր Աղբեջանի հետ հարաբերություններ կառուցելու ժամանակ մենք ենում ենք հենց դրանից: Այդ պատճառով մենք շահագրուված ենք նրանում, որ այստեղ խաղաղություն և կարգ լինի: Հենց այս պլանում նաև պետք է քննարկել այն լուծումը, որը կայացավ Հայաստանի այցի ժամանակ, այն է Հայաստանում ուսական գինվորական բազայի մնալու ժամկետների երկարացման համապատասխան համաձայնագիրը: Այլ ստորջրյա կամ որիշ նկատառումներ գոյություն չունեն»<sup>11</sup>, - հայտարարեց Ռուսաստանի նախագահը՝ ի պատասխան աղբեջանցի լրագրողի, նրա Հայաստան պետական այցի ընթացքում օգոստոսի 20-ին ստորագրված պայմանագրի վերաբերյալ հարցի:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի դարարադյան հարցի միայն խաղաղ ճանապարհով լուծնան վերաբերյալ կոչերից և հիշատակումներից մի քանի ժամ անց Աղբեջանի դեկավարությունը հերթական անգամ «... ցույց տվեց իր իրական դեմքը և սեփական բաղաքացիների կյանքի գնով կազմակերպեց սադրիչ գործողություններ: Ցինիզմը, որով կատարվել է հունիսի 18-ի սադրանքը, այսօր կրկնապատկեց», - նշեց Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը:

Աղբեջանական բարձրաստիճան պաշտոնատար անձանց բազմաթիվ հայտարարությունները ցույց են տալիս Բաքվի ապակառուցողական

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

արտաքին քաղաքականության հեռանկարի միատեսակությունը: Օրինակ՝ 2010 թվականի ապրիլի 15-ին Աղբեջանի նախագահ Իլհամ Ալիևը երկրի կառավարության նիստի ժամանակ հայտարարեց, որ առանց իրենց համաձայնության ոչ ոք չի ճանաչի Լեռնային Ղարաբաղը: Իր այս հայտարարությամբ Աղբեջանը հերթական անգամ անարգանք ցուցաբերեց ինչպես այլ երկրների ինքնիշխանության, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերի նկատմամբ: Ստացվում է, որ այլ երկրները ևս պետք է Բարվից թույլտվություն հարցնեն իրենց արտաքին քաղաքականության համար:

Վերջին ժամանակներս աճում է Բարվի աղմինիստրացիայի պաշտոնական ներկայացուցիչների կողմից ցնորային մեղադրանքների և ուղարկմատումների քանակը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ - ի, Ֆրանսիայի, նաև ամբողջ աշխարհի հանրության՝ ներառյալ նրա դաշնակից թուրքիայի հասցեին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ինչպես նաև համաշխարհային հանրության հետ հակամարտությունը անխուսափելիորեն Աղբեջանին դատապարտում է պետության մարգինալային վիճակի, որը դուրս է մնում համաշխարհային քաղաքակրթական տարածությունից իսկ Աղբեջանի և ԼՂՀ փոխադարձ արհամարհանքը, ընդհակառակը, թույլ կտա Բարվին ազդել համաշխարհային քաղաքականության վրա:

Արդեն կայացվել է ՄՍԿ-ի Միջազգային դատարանի վճիռը, և, ինչպես և պետք էր ակնկալել, դատարանը ճանաչեց Կոստոյի ալբանացիների՝ սեփական պետության կառուցման իրավունքը: Դատարանի որոշումը անտեսեց պատմությունը, Կոստոյի տարածքում ալբանացիների հայտնվելու հանգամանքները, սերբերի՝ երկրամասի բնիկ ժողովրդի, դեպորտացիաները (արտաքսումները) և կոստվացի ալբանացիների մեծամասնությունը դանալը: Առավել ևս, դատարանի որոշումը անտեսեց նաև այն ճշացող փաստը, որ դրա ընդունման պահին Կոստոյն արդեն երկար տարիներ գտնվում է ՆԱՏՕ-ի զինվորական հովանու տակ, այսինքն՝ Կոստոյի և իր բնակչության անվտանգությունը ապահովվում է կողմնակի պետությունների զինված ուժերի կողմից: Աներկրա է, որ Միջազգային դատարանի որոշումը իհմնվում է ոչ թե օրենքի, այլ ուժի վրա: Այն պետությունների ուժի, որոնք խիստ շահագրգուված էին սկզբում Հարավալավիայի, իսկ

այժմ Սերբիայի մասնատման մեջ: Եվ այդ որոշման մեջ ավելի շատ քաղաքականություն է, քան իրավունքը: Սակայն, դրա հետ մեկտեղ, տվյալ որոշումը պետք է դարձնել նախադեպ: Դատարանի որոշումը, անխոս, իրավունք է տալիս ԼՂՀ համար նախադեպի և ամրապնդում է Ստեփանակերտի և Երևանի դիրքերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման իրավականության վերաբերյալ ապագա քննարկումներում: Հայկական պետությունների համար այնքան ավելի հեշտ կլինի խստել ԼՂՀ ճանաչման իհմնավորումների իրավականության մասին, որքան ավելի շատ օրենքի խախտումներով կճանաչվի կոստվցիների՝ սեփական պետություն ունենալու իրավունքը:

Իրոք, սկսած 1991թ.-ից ոչ մի պետության կամ միջազգային օրգանի չի հաջողվել կասկածի տակ դնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման իրավականությունը: Այժմ այդ հանգամանքը, հատկապես Կոստոյի անկախության ձեռքբերումից հետո հասուն հշանակություն է ստանում: ԼՂՀ ճանաչման հոչակագիրը ընդունվել է բոլոր մակարդակների օրինական ընտրված ժողովրդական պատգամավորների համատեղ սեսիայի ժամանակ՝ գյուղական խորհուրդների պատգամավորներից մինչև ԽԱՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորները: Չահմանափակվելով դրանով՝ ԼՂՀ-ն անցկացրեց համաժողովրդական անկախության հանրաքվե, որի արդյունքում ԼՂՀ բնակչությունը գրեթե միաձայն՝ 99.89% արտահայտվել են ԼՂՀ անկախության օգտին: Կոստոյում, ինչպես հայտնի է, հանրաքվե չի իրականացվել, և դատարանի որոշումը ընդունվել էր միայն զինված գործողությունների ժամանակ ծնված «Կոստոյի ինքնավարման ժամանակավոր ինստիտուտի» հոչակագրի հիման վրա:

Այսպիսով, աշխարհի գերագույն արքիստաթային (դատավարական) մարմինը թույլ է տալիս մեզ ավելի համառորեն պայքարել ԼՂՀ պետական ինքնիշխանության ճանաչման համար: Օրինական Սերբիային իր անկախությունը հոչական անօրեն գոյացությունը ստացել է նման ճանաչում: Ի՞նչ ճանապարհով է այդ որոշումն ընդունվել, և ու՞մ շահերն է այն արտացոլում՝ մեզ արդեն չպետք է անհանգստացնի: Ավելի կարևոր է աշխարհին ճիշտ մատուցել ակնհայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, և իրավական, և պատմական տեսանկյունից, անհամենատ ավելի շատ հիմ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քեր ունի համաշխարհային հանրության կողմից պետական անկախության ճանաչման համար: ԼՂՀ ճանաչման գործընթացի ծգձգումը ոգեշնչում է պետություն-ուղղութառորդին՝ Աղքադանական հանրապետությանը, և թույլ է տալիս նրան ԼՂՀ նկատմամբ զինված ազրեսիա ծրագրել: Այդ դեպ-

քում ԼՂՀ-ն իրավունք ունի միջոցներ ձեռք առնել ոչնչացնելու հակառակորդին: Առանց տարբեր միջազգային կառույցների կարծիքը հաշվի առնելու, որոնց անմասն դիրքորոշումը վերածվում է Սերմանուր Արևելքի տարածաշրջանի խաղաղության համար լուրջ վտանգի:

<sup>1</sup>Տե՛ս Աղքադանցիները կրկին կրակում են, «Հայկական ժամանակ», 2010, հունիսի 23:

<sup>2</sup>Տե՛ս Խամբարյան Ա. Նոր «սամկու-պետերբուրգյան առաջարկությունները» կարգավորման գործընթացում ստեղծեցին «նախադրյալներ առաջխաղացման համար», «Նովյե Վրեմյա», 2010, հունիսի 26:

<sup>3</sup>Տե՛ս Մարգարյան Ռ. Դիվերսիա, «Գոլոս Արմենիի», 2010, հունիսի 22:

<sup>4</sup>Տե՛ս Գ.Ա. Այդ դեպքում ինչու աղքադանցի դիվերսանտի դիակը հայտնաբերվել է ԼՂՀ տարածքում, «Ազգ», 2010, հունիսի 23:

<sup>5</sup>Տե՛ս Աղքադանը չի կարող վերահսկել իր հրամանատարներին, «Ազգ», 2010, հունիսի 23:

<sup>6</sup>Տե՛ս Արցախի անկախությունը և անվտանգությունը Ենթակա չէ քննարկման, «Հայաստանի Հանրապետություն», 2010, հուլիսի 3:

<sup>7</sup>Տե՛ս Երկանյան Ա. «Պետերբուրգյան առաջարկությունները» հիասքափեցրին Ալիևին, «Նովյե Վրեմյա», 2010, հունիսի 29:

<sup>8</sup>Տե՛ս Մարգարյան Ռ. Մտի մեջ բաղկած Աղքադանը, «Գոլոս Արմենիի», 2010, հունիսի 26:

<sup>9</sup>Տե՛ս Համար առաջին խնդիրը ԼՂՀ միջազգային ճանաչումն է, «Առավոտ», 2010, հուլիսի 2:

<sup>10</sup>Տե՛ս Նոր ծրագրեր, «Հայաստանի Հանրապետություն», 2010, հունիսի 26:

<sup>11</sup>Տե՛ս www.regnum.ru, 2010, սեպտեմբերի 3:

**ՊԵՐԾ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

**ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈՂԻ  
ՆԿԱՏՄԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՔԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱՎԱՀԱՍԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ**



Մարդկային հասարակության համար հողը հանդիսանում է բնական այն կարևորագույն արժեքներից մեկը, որը ծառայում է առաջին հերթին որպես արտադրության հիմնական միջոց, այնուհետև որպես օպերացիոն բազի՝ ցանկացած տեսակի գործունեության համար, և որպես բնական լանջախոտ:

Հողի նշանակած առանձնահատկությունների շնորհիվ է, որ այն մշտապես առանցքային նշանակություն է ունեցել հասարակական ֆորմացիաների ձևավորման և զարգացման գործընթացում, և հողի նկատմամբ սեփականության իրավունքի ձևը մշտապես պայմանավորել է հասարակական հարաբերությունների զարգացման հիմնական ուղղությունները:

Հաշվի առնելով հասարակական հարաբերությունների վրա ազդելու հողային հարաբերությունների հսկայական ներուժը՝ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր կերպ են կարգավորվել հողի նկատմամբ սեփականության իրավունքի հետ կապված հարաբերությունները: Մի դեպքում հնարավորին չափ սահմանափակվել է այդ իրավունքը՝ հանելով հողը քաղաքացիական շրջանառությունից, մեկ այլ դեպքում դարձել է քաղաքացիական շրջանառության լիարժեք օրյեկտ՝ առանց հաշվի առնելու դրա առանձնահատկությունները:

Այս տեսակետից կարևորվում է համեմատականի անցկացումը ներկա և խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված հողային հարաբերությունների միջև՝ վեր հանելով օրենդրության զարգացման ուղղությունները, և այդ հարաբերությունների բնույթին տրված տեսական գնահատականները:

Խորհրդային իրողությունն այն էր, որ հողը հայտարարված էր պետության բացառիկ սեփականություն, և հանված էր քաղաքացիական շրջա-

նառությունից: Այս պայմաններում սեփականության իրավունքի և դրա տարրերի սահմանումը բարդանում է՝ ստեղծված հարաբերությունների առանձնահատող և ձևավորված պատկերացումներին ոչ համահունչ լինելու հանգամանքով:

Խորհրդային Միությունում հողի նկատմամբ սեփականության իրավունքի առանձնահատկությունները քննարկելիս առաջին հերթին անհրաժեշտ է անդրադարձ կատարել խորհրդային իշխանության կողմից ընդունված առաջին դեկրետներից մեկին՝ 1917 թվականի հոկտեմբերի 26-ին աշխատավորների և զինվորականների խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարի կողմից գիշերվա ժամը 2-ին ընդունված «Հողի մասին» դեկրետին<sup>1</sup> (այսուհետ՝ նաև Դեկրետ), որի ընդունումով Ռուսաստանում սկիզբ դրվեց ազրարային հեղափոխությանը՝ հող նախապատրաստելով հողագործության և տնտեսվարման սոցիալիստական ձևերին անցում կատարելու համար:

Դեկրետի 1-ին հոդվածով հոչակվում է. «Հողի նկատմամբ կալվածատիրական սեփականությունը վերացվում է անհապաղ՝ առանց որևէ փոխհատուցման»:

Այս դրույթը բոլշևիկների առաջ քաշած կարգախոսներից մեկն էր, և ստեղծված պայմաններում հողի նկատմամբ կալվածատիրական սեփականության վերացումը ուներ քաղաքական մեծ նշանակություն:

Հողի նկատմամբ մասնավոր սեփականության վերացման վերաբերյալ ավելի ծավալուն ձևակերպում է պարունակում Դեկրետի անբաժանելի մասը կազմող գյուղացիական հրահանգը (крестьянский наказ), որի 1-ին և 2-րդ կետերի համաձայն:

«1. Հողի նկատմամբ մասնավոր սեփակա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նույրունը վերացվում է ընդմիշտ. հողը չի կարող նվիրվել, գնվել, վարձակալության տրվել կամ գրավադրվել, այլ կերպ օտարվել: Ամբողջ հողը՝ պետական, քաջազրապատկան, վաճառապատկան, վարձակալված, մայորատային, մասնավոր-սեփականատիրական, հանրային, գյուղացիական և այլն, անհատույց օտարվում է, վերածվում է համազգային ունեցվածքի և անցնում է դրա վրա աշխատողների օգտագործմանը»:

«2. Ամբողջ ընդերքը՝ հանքաքարերը, նավը, քարածուխը, աղը և այլն, ինչպես նաև համապետական նշանակություն ունեցող անտառները և ջրերը անցնում են պետության բացառիկ օգտագործմանը: Բոլոր փորք գետերը, լճերը, անտառները և այլն անցնում են համայնքների օգտագործմանը՝ դրանք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվելու պայմանով»:

Դեկրետի ընդունմամբ երկրում հաստատվում են բոլորովին նոր հողային հարաբերություններ, տեղի է ունենում հողի, ընդերքի, անտառների և ջրերի ազգայնացում, դրանք հայտարարվում են խորհրդային պետության բացառիկ սեփականություն: Դա նշանակում էր, որ այդուհետ նշված օրինակությունների սեփականատեր այլ մարմին, ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ բացի պետությունից, լինել չէր կարող: Քաղաքացիներին և կազմակերպություններին վերապահվում է դրանց նկատմամբ միայն օգտագործման իրավունք՝ հատկացման հիմքերով:

Հողի մասին դեկրետով ոչ միայն սահմանվեց պետական սեփականության իրավունքը հողի, ընդերքի, անտառների և ջրերի նկատմամբ, այլև սահմանվեց պետության սեփականության իրավունքը գյուղատնտեսական ձեռնարկությունների և գյուղատնտեսական գույքի նկատմամբ: Նշվածի մասին են վկայում գյուղացիական իրահանգի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը:

Դեկրետը պարունակում էր հողօգտագործման իրավունքի և դրա ձևերի մասին առանձին դրույթներ ևս: Մասնավորապես, գյուղացիական իրահանգի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ հողի օգտագործման իրավունք ստանում էին այն բոլոր քաղաքացիները, որոնք ցանկություն կհայտնեին իրենց ընտանիքի օգնությամբ կամ ընկերակցությունների կազմում սեփական ուժերով մշակել հողը: Վարձու աշխատանքի օգտագործումն արգելվում էր:

Ինչ վերաբերում է հողամասերի քաժանմա-

նը, ապա սահմանված էր, որ աշխատավորների միջև հողը պետք է քաժանվի հավասարության հիմունքներով, իսկ հողօգտագործման ձևը կարող էր ինքնուրույնաբար որոշվել գյուղացիների կողմից՝ ծխային, խոտորային, համայնքային կամ արտելային:

«Հողի մասին» դեկրետի 5-րդ հոդվածով սահմանվում էր, որ շարքային գյուղացիների և կազակների հողերը չեն բոնագրավվում: Այսինքն՝ Դեկրետը նպատակառությամբ չէր բոլոր օգտագործողներից անխտիր հողի բոնագրավմանը: Այն ուղղված էր հիմնականում խոշոր հողատերերի դեմ, և շարքային հողօգտագործողների շահերը չպետք է տուժեին հողի ազգայնացման գործընթացում:

Այսպիսով, Դեկրետի ընդունմամբ հիմք դրվեց նոր՝ սոցիալիստական հողային իրավահարաբերությունների ծավալմանը, և դրա հետ մեկտեղ՝ հողային իրավունքի՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի առաջացմանը:

Դեկրետում ամրագրված դրույթները հետագայում իրենց արտացոլումը ստացան խորհրդային պետության մի շարք այլ իրավական ակտերում: Մասնավորապես, ՌՍՖՍՀ 1922թ. քաղաքացիական օրենսգրքի<sup>2</sup> 21-րդ հոդվածի համաձայն:

«Հողը հանդիսանում է պետության ունեցվածքը և չի կարող լինել մասնավոր շրջանառության օբյեկտ: Հողի տիրապետումը թույլատրվում է միայն օգտագործման իրավունքով»: Հողի նկատմամբ սեփականության իրավունքի առանձնահատկությունները ընդհանուր գծերով արտացոլված էին նաև 1924 թվականի հունվարի 31-ին ընդունված ԽՍՀՄ Սահմանադրության<sup>3</sup> մեջ: Ի տարբերություն ԽՍՀՄ 1924 թվականի Սահմանադրության, 1936 թվականի Սահմանադրության<sup>4</sup> առաջին գլխում, որն անվանված էր «Հասարակական կառուցվածքը» արդեն իսկ հատակ ամրագրված էր, որ հողը, ընդերքը, ջրերը, անտառները ..... հանդիսանում են պետական սեփականություն, համազգային ունեցվածք:

ՌՍՖՍՀ 1922թ. քաղաքացիական օրենսգրքի նշված դրույթից որոշակի առումով կարելի է եզրահանգումներ կատարել հողի նկատմամբ սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տարբերի վերաբերյալ, որոնց հարցը հողի ազգայնացման և խորհրդային Սիոնթյունում հողի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքի սահմանման պայմաններում պետք է որպես այլ կերպ<sup>5</sup>:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Այս միտքն ավելի վաղ զարգացվել և վերլուծվել էր արդի Ֆեռնանդո Լ. Ի. Դեմբոյի կողմից «Խորհրդային ջրային օրենսդրության իիմական խնդիրները» աշխատությունում: Մասնավորապես, Դեմբոյ գտնում էր, որ Խորհրդային Սիությունում հողի նկատմամբ պետության սեփականության իրավունքի շրջանակներում տիրապետման իրավունքը, որպես սեփականության իրավունքի ինքնուրույն տարր, չի դրսւորվում, քանի որ Խորհրդային իրավունքում այն չունի ինքնուրույն նշանակություն: Դեմբոյի կարծիքով, հողի ազգայնացման և դրա նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքի հաստատման պայմաններում «հողի տիրապետում» տերմինն ընդհանուր առմամբ անընդունելի է Խորհրդային իրավունքի համար, և հողի տիրապետումը չի կարելի դիտարկել հողօգտագործման իրավունքից անջատ՝ որպես ինքնուրույն իրավունք: Նա նշում էր, որ պետություն-սեփականատերը առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրում է միայն հողի օգտագործման, այլ ոչ թե տիրապետման իրավունքը, ուստի տիրապետման իրավագործությունը, որպես հողի և ջրերի նկատմամբ սեփականության իրավունքի ինքնուրույն տարր սահմանելով, գործ է իրավական նշանակությունից<sup>6</sup>:

Պրոֆեսոր Դեմբոյի կողմից առաջարկվում էր տիրապետման իրավունքի փոխարեն, որպես սեփականության իրավունքի ինքնուրույն տարր սահմանել պետական միասնական հողային ֆոնդի կառավարումը:

Գ.Ա. Ակսենենկը, քննադատելով Դեմբոյի նշված մոտեցումը, գտնում էր, որ տիրապետման իրավագորությունը Խորհրդային Սիությունում հանդիսանում է հողի նկատմամբ սեփականության իրավունքի տարրերից մեկը և ունի կարևոր իրավական նշանակություն: Մասնավորապես, հենվելով ՌՍՖՀ 1922թ. քաղաքացիական օրենսգրքի 21-րդ հոդվածի վրա, հեղինակը նշում է, որ մասնավոր անձանց համար տիրապետման իրավունքը օգտագործման իրավունքից անջատ ինքնուրույն նշանակություն չունի, իսկ պետության համար հողի տիրապետումն ունի բոլորովին այլ նշանակություն և բովանդակություն: Այսինքն՝ այստեղ արդեն չենք կարող ասել, որ պետությունը՝ հողի սեփականատերը, տիրապետում է հողը միայն այն ժամանակ, եթե օգտագործում է: Հողի նկատմամբ տիրապետման իրավունքը պետությունն իրականացնում էր Խորհրդային Սիության ողջ տարածքում՝ հողի բա-

ցաղիկ սեփականատերը լինելու փաստի ուժով՝ անկախ այն հանգամանքից՝ ում է ամրացված այդ հոր: Եվ այս տեսանկյունից տիրապետման իրավունքը, որպես պետության՝ հողի սեփականատիրոց, իրավագորություն, հանդես է գալիս որպես հողի նկատմամբ պետական սեփականության իրավունքի ինքնուրույն տարր:

Այս առումով, չի կարելի շիամաձայնել հեղինակի հետ, քանի որ, ՌՍՖՀ 1922թ. քաղաքացիական օրենսգրքի 21-րդ հոդվածից ելնելով, հնարավոր չէ այլ եզրահանգումներ կատարել: Նշված հոդվածն ինքնին տիրապետման իրավունքը պայմանավորում է օգտագործման իրավունքով՝ դիտելով դրանք որպես անբաժանելի տարրեր, ինչը նշանակում է, որ բոլոր սուբյեկտների համար, բացի պետությունից, տիրապետման իրավունքը կարող է դրսւորվել բացառապես օգտագործման իրավունքի հետ շաղկապված և դրանով պայմանավորված:

Գ.Ա. Ակսենենկը նշում է, որ հողի ազգայնացման և հողի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքի սահմանման պայմաններում, ԽՍՀՄ-ում հողի նկատմամբ պետական սեփականության իրավունքի տարրերն են հանդիսանում տիրապետման, տնօրինման, կառավարման և օգտագործման իրավագորությունները<sup>7</sup>: Այսինքն՝ հեղինակը, քացանելով սեփականատիրոց երեք հիմնական իրավունքից և ոչ մեկը, առանձնացնում է կառավարումը որպես ինքնուրույն տարր և դիտարկում առանձին:

Սակայն անհրաժեշտ է նկատել, որ հեղինակը, անդրադարձ կատարելով հողի նկատմամբ պետության սեփականության իրավունքի տարրերին, մեկնարանելով դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը, տիրապետման իրավագործության առանձնահատկությունները ներկայացրել է բավականին ընդգրկուն և տարածական հասկացությունների շրջանակներում: Հողի նկատմամբ սեփականության իրավունքի այս տարրը քննարկվում է միայն մեկ օրինակով՝ նշելով, որ հողի տիրապետման իրավունքի դրսւորում է հանդիսանում Խորհրդային պետության կողմից հողերի առանձին կատեգորիաների իրավական ռեժիմի սահմանումը, կամ էլ հողօգտագործողների իրավունքների և պարտականությունների սահմանումը<sup>8</sup>:

Նշված մոտեցումը, սակայն, վիճելի կարելի է համարել այն առումով, որ պետության կողմից հողերի առանձին կատեգորիաների իրավական ռեժիմի սահմանումը, կամ էլ հողօգտագործողների իրավունքների սահմանումը:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունքների և պարտականությունների սահմանումը կարող են դիտարկվել նաև որպես կառավարման իրավագորության դրսևորում:

Այնուամենայնիվ, հեղինակի մոտեցումները հողի տիրապետման իրավունքի վերաբերյալ պարզ են և մեծամասամբ համընկնում են ժամանակակից քաղաքացիական իրավունքում տիրապետման իրավունքին տրված բնորոշմանը, որի համաձայն՝ տիրապետումը գույքի գտնվելն է սեփականատիրոջ տնտեսությունում, նրա փաստացի տնտեսական իշխանության ներքո: Այսինքն՝ տիրապետման իրավագորությունը գույքն իր տնտեսական իշխանության ներքո, սեփական տնտեսությունում պահելու օրենքի վրա հիմնված հնարավորությունն է<sup>9</sup>:

Խորհրդային Սիուրյունում հողի նկատմամբ սեփականության իրավունքի բովանդակության հիմնահարցերին անդրադարձ է կատարել նաև Ա.Ս. Տուրութիները, ով գտնում էր, որ այն հանգանքը, որ հողի նկատմամբ պետությունը միաժամանակ իրականացնում է և սեփականատիրոջ, և քաղաքական սուվերենի իրավագորություններ, չի կարող հիմք հանդիսանալ այն պնդումների համար, որ հողի նկատմամբ պետության բացառիկ սեփականության պայմաններում սեփականության իրավունքի տարրերը դրսևորվում են ոչ լիարժեքորեն: Նրա պնդմամբ՝ պետություն-սեփականատիրոջ իրավագորությունների բնորոշումը պարտադիր չէ, որ համապատասխանի քաղաքացիական օրենսգրքի ձևակերպումներին<sup>10</sup>:

Ա. Ս. Տուրութիները գտնում էր, որ քաղաքացիական օրենսգրքում առկա ձևակերպումները կարող են կիրառելի լինել պետության, որպես հողի սեփականատիրոջ, իրավասությունները բնորոշելու համար, սակայն դրանք չեն կարող սահմանափակել այդ իրավագորությունները<sup>11</sup>: Հաշվի առնելով հողի՝ որպես սեփականության օբյեկտի, առանձնահատկությունները, հեղինակը գտնում էր, որ պետություն-սեփականատիրոջ իրավագորություններն են՝ տնօրինումը, հողերի կառավարումը, հողային հսկողությունը, օգտագործումը և տիրապետումը<sup>12</sup>:

Հատկանշական է, որ Ա. Ս. Տուրութիները որպես հողի նկատմամբ պետության սեփականության իրավունքի տարր առանձնացնում է հողային հսկողությունը: Հեղինակի կարծիքով, հողի օգտագործման նկատմամբ հսկողությունը կրում է առանձնահատուկ բնույթ և տարրելվում է հսկողու-

թյան այլ տեսակներից: Մասնավորապես, այդ առանձնահատկությունները Ա. Ս. Տուրութիները տեսնում էր նրանում, որ հողի օգտագործման նկատմամբ հսկողությունը կոչված է պարզելու:

1. օրինակա՞ն է արդյոք տվյալ հողամասի օգտագործումը,

2. արդյո՞ք հողն օգտագործվում է դրա նպատակային նշանակությանը համապատասխան,

3. արդյո՞ք հողն ընդհանրապես օգտագործվում է, թե՝ ոչ<sup>13</sup>:

Հողօգտագործման նկատմամբ հսկողության առանձնահատկությունները հեղինակի կողմից քավականին մանրամասն և հիմնավորված են ներկայացվում մենագրության մեջ, սակայն, ըստ Էռյան, դա չի կարող բավարար լինել «հողային հսկողությունը» հողի նկատմամբ պետական սեփականության իրավունքի սուբյեկտի հարցը՝ հեղինակը կատարում է եզրահանգումներ, որոնց արձագանքներն իրավաբանական գրականության մեջ եղել են ոչ միանշանակ: Մասնավորապես, Ա. Ս. Տուրութիները գտնում էր, որ հողի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտը մեկն է՝ Խորհրդային պետությունը, իսկ միութենական հանրապետություններն իրենց հողերի նկատմամբ ունեն տարածքային գերակայություն: Սիամանակ, Ա. Ս. Տուրութիները գտնում էր, որ տարածքային գերակայությունը հողի նկատմամբ սեփականության իրավունքի հետ կապելու չի կարող ընդունելի համարվել, քանի որ միութենական հանրապետություններն իրենց տարածքային գերակայություն իրականացնում են ոչ թե հողի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու ուժով, այլ ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան դրույթների հիման վրա:

Ելնելով հեղինակի նշված մոտեցումներից՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ Խորհրդային Սիուրյունում միութենական հանրապետություններն իրականացնում էին տարածքային գերակայություն ուրիշի հողի վրա: Լավ գիտակցելով նման մոտեցման անթույլատրելիությունը, Ա. Ս. Տուրութիները առաջ է քաշում ֆեներատիվ սեփա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կանության կոնցեպցիան: Նա գրում է. «...Խորհրդային պետությանը պատկանող սեփականության իրավունքի օրեկտները պատկանում են ինչպես ԽՍՀՄ-ին, այնպես էլ այդ միուրայունը կազմող միուրենական հանրապետություններին: Ասվածը տարածվում է նաև հողի վրա: Հողի նկատմամբ պետության սեփականության իրավունքի սուբյեկտն է Խորհրդային պետությունը՝ ԽՍՀՄ-ը և դրա անդամները՝ միուրենական հանրապետությունները: Սիևնոյն ժամանակ, միուրենական հանրապետությունները ոչ թե հանդիսանում են հենց իրենց սահմանների ներսում գտնվող հողի սեփականատերը, այլ հանդիսանում են ԽՍՀՄ սահմաններում գտնվող ողջ հողի՝ միասմական պետական հողային ֆոնդի նկատմամբ պետական սեփականության իրավունքի մասնակից»<sup>14</sup>:

Խորհրդային պետության քաղաքացիական օրենսդրության հետագա զարգացումներում և պահպանվել են ներկայացված մոտեցումները: 1961 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված ԽՍՀՄ և միուրենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքներով<sup>15</sup>, 1964 թվականին ընդունված ՌՍՖՍՀ քաղաքացիական օրենսգրքով<sup>16</sup>, ինչպես նաև Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգրքով<sup>17</sup> ամրագրված էին սեփականատիրոջ երեք իրավագործությունները, սակայն արդեն որևէ դրույթով չեր նախատեսվում տիրապետման և օգտագործման իրավունքների փոխկապածությունը: Այդ հանգամանքը, սակայն, չեր կարող նշանակել, որ հողի տիրապետման իրավունքն արդեն ճեռք էր բերել ինքնուրույն իրավական նշանակություն և կարող էր հանդես գալ օգտագործման իրավունքից անջատ:

Ճիշտ է, քաղաքացիական օրենսդրությամբ նմանատիպ փոխկապակցվածություն արդեն չեր նախատեսվում, և կարծես կարելի էր պատել, որ հողի սեփականատերը՝ պետությունը, կարող է տիրապետման իրավագործությունը տրամադրել այլ սուբյեկտների՝ կազմակերպությունների կամ քաղաքացիների: Սակայն 1968 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված ԽՍՀՄ և միուրենական հանրապետությունների հողային օրենսդրության հիմունքներով<sup>18</sup> և դրա հիման վրա ընդունված միուրենական հանրապետությունների հողային օրենսգրքերով հստակ ամրագրվում էր, որ ԽՍՀՄ-ում հողը գտնվում է պետության բացառիկ սեփականության ներքո և տրամադրվում է միայն օգտագործման:

Այսինքն, հողօգտագործողները չեն կարող

միայն տիրապետել հողը և չօգտագործել այն, և այդ իմաստով խորհրդային հողային իրավունքին հայտնի չեր «հողի տիրապետում» արտահայտությունը՝ որպես ինքնուրույն տարր: Սակայն, հողօգտագործողներն իրականացնում էին տիրապետման իրավագործությունը հենց հողի օգտագործման փաստի ուժով: Նրանք չեն կարող իրականացնել հողի օգտագործումը՝ չպահելով հողը իրենց տնտեսական իշխանության ներքո, չունենալով այն սեփական տնտեսությունում պահելու հնարավորություն<sup>19</sup>:

ԽՍՀՄ 1977 թվականի Սահմանադրության մեջ ևս առանձին հողվածով անդրադարձ էր կատարվում պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող օրեկտներին՝ հատուկ առանձնացնելով հողը, ընդերքը, ջրերը և անտառները<sup>20</sup>:

1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագրով<sup>21</sup> երկրում դրվեցին նոր հողային հարաբերությունների հիմքերը: Հռչակագրի 7-րդ կետի համաձայն. «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով»: Այսինքն՝ արդեն իսկ հանվեցին երկրի հիմնական օրենքի մակարդակով դրված սահմանափակումները, որոնք վերաբերվում էին հողը տնտեսական շրջանառության մեջ մտցնելուն:

Ստեղծված հողային հարաբերություններում թեկում մտցրեց 1990 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված և նոյն թվականի դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքը<sup>22</sup>, որով սեփականության իրավունքի օրեկտներ ճանաչվեցին հողը, ընդերքը, ջրերը և այլն, իսկ որպես սեփականության իրավունքի սուբյեկտներ՝ Հայաստանի Հանրապետությունը, իրավաբանական անձինք և քաղաքացիները, այլ պետությունները, միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա իրավաբանական անձինք ու քաղաքացիները:

Միևնույն ժամանակ նշված օրենքով, առանց վերապահումների սահմանվեց, որ սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը:

Այսինքն՝ հողը կրկին մտավ քաղաքացիա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան շրջանառության մեջ՝ որպես սեփականության իրավունքի օբյեկտ, և կարող էր պատկանել այդ հարաբերությունների մասմակիցներին սեփականության իրավունքով, ինչը խորհրդային ժամանակաշրջանում հանդիսանում էր պետության բացառիկ իրավագորությունը: Նույնարովանդակ դրույթներ ամրագրվեցին 1991 թվականի հունվարի 22-ին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքում<sup>23</sup>, 1991 թվականի հունվարի 29-ին ընդունված ՀՀ հոդային օրենսգրում<sup>24</sup>:

Օրենսդրության հետագա զարգացումներն ընթացան այն ուղղությամբ, որը նախանշվեց Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո ընդունված իրավական ակտերով և 1995 թվականին ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրվեց. «Յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք: Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ քացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»: Հողի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումը նախատեսվեց միայն օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

2005 թվականի սահմանադրական քարեփոխումներից հետո ՀՀ Սահմանադրության<sup>25</sup> 31-րդ հոդվածում ամրագրվեց, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը. միաժամանակ պահպանվեց նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար նախատեսված արգելվելով՝ հողի սեփականության իրավունքից օգտվելու վերաբերյալ:

Նշված իրավական նորմերի վերլուծություններից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում հողի նկատմամբ կիրառվում է սեփականության իրավունքի ավանդական մոտեցումը, որի համաձայն՝ սուբյեկտիվ առումով սեփականության իրավունք նշանակում է՝ անհատի կամ կոլեկտիվի հնարավորությունը իր հայեցողությամբ և անկախ որևէ մեկից տիրապետել, օգտագործել և տնօրինել իր ունեցվածքը օրենքով սահմանված շրջանակներում և հասարակության տնտեսական կառուցվածքին համապատասխան<sup>26</sup>:

Նշված մոտեցումը ժամանակակից իրավագիտության մեջ սպառիչ է համարվում և բխում է

ՍԱԿ-ի և Եվրախորհրդի շրջանակներում ընդունված մի շարք միջազգային իրավական ակտերի՝ սեփականության պաշտպանությանը նվիրված դրույթներից:

ՀՀ գործող հոդային օրենսգրքի<sup>27</sup> 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Քաղաքացիների ու իրավաբանական անձանց հոդամասերի նկատմամբ սեփականության իրավունքը հոդամասերն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ»: ՀՀ Հոդային օրենսգրքում, սակայն, սահմանված չէ, թե ինչ են իրենցից ներկայացնում հոդամասը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագորությունները:

1998 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>28</sup> 163-րդ հոդվածի համաձայն. «Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգտա ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործելու կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է»:

Հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Ընտանեկան, աշխատանքային, բնական պաշտամունքային, բնական պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ», ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163 հոդվածը հավասարապես կիրառելի է նաև հողային հարաբերություններում տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագորությունների բովանդակության պարզման համար:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գործող հոդային օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին շապատկանող հոդերը պետության սեփականությունն են: Միաժամանակ սահմանված է, որ պետությունը կարող է սեփականության իրավունքով հոդամասեր գնել համայնքներից, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից:

Փաստորեն հոդի նկատմամբ պետության սեփականության իրավունքը ճանաչված է օրենքի ուժով՝ այն բոլոր հոդամասերի նկատմամբ, որոնք սեփականության իրավունքով չեն պատկանում այլ անձանց, և կարող է ծագել գործարքների հիման վրա: Այսինքն՝ հոդի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հետ կապված հարաբերություններում պետությունը մի դեպքում հանդիս է գալիս քաղաքացիների, իրավաբանական անձանց և համայնքների հետ հավասար հիմունքներով, իսկ մյուս դեպքում արդեն դրսորվում են պետության լիազորությունները՝ որպես պետական իշխանության սույեկտի: Սակայն այս երկակիությունը որևէ կերպ չի անդրադառնում սեփականության իրավունքի ծագումից հետո պետության լիազորությունների վրա:

Անկախ այն հանգամանքից, թե հոդի նկատմամբ սեփականության իրավունքը պետության համար ծագել է գործարքի հիման վրա, թե ճանա-

վել է օրենքի ուժով, Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հոդի սեփականատեր, օգտվում է իրավագորությունների այն ծավալից, որոնք նախատեսված են հոդի սեփականատիրոջ համար: Այսինքն՝ հոդի տիրապետման, տնօրինման և օգտագործման հետ կապված հարաբերություններին Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է ֆիզիկական և իրավաբանական անձանց ու համայնքների հետ հավասար իրավունքներով՝ իր իսկ կողմից սահմանված կարգով և պայմաններում:

Այսպիսով, ակնհայտ է, որ Խորհրդային Միությունում հոդի ազգայնացման և դրա նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքի սահմանման պայմաններում, սեփականության իրավունքի տարրերը՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագորությունները, չեն կարող լիարժեքորեն դրսորվել: Պետության՝ որպես հոդի սեփականատիրոջ՝ հոդը տնօրինելու իրավասությունը դրսորվում էր խստ սահմանափակ այն առումով, որ հոդը չէր կարող սեփականության իրավունքով պատկանել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Ուստի իր սեփականությանը պատկանող հոդի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունը կարող էր իրականացվել շատ սահմանափակ շրջանակներում:

### Օգտագործված գրականություն

#### Իրավական ակտեր

- Հոչակագիր «Հայաստանի անկախության մասին» /ընդունված 23.08.1990թ./, ՀՀԳ Տ 1990/16:
- ՀՀ Սահմանադրություն, ՀՀ ՊՏ 2005 (հաստուկ բողարք.), 05.12.2005:
- «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենք /ընդունված 31.10.1990թ./, ՀՀԳ Տ 1990/20, N Ն-0178-Ի:
- «Գյուղացիական և գյուղացիական կողեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենք /ընդունված 22.01.1991թ./, ՀՀԳ Տ 1991/2, N Ն-0242-Ի:
- ՀՀ հոդային օրենսգիրը /ընդունված 29.01.1991թ./, ՀՀԳ Տ 1991/2, N Ն-0248-Ի:
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրը /ընդունված 05.05.1998թ./, ՀՀ ՊՏ 1998/17 (50), 10.08.98, N ՀՕ-239:
- ՀՀ Հոդային օրենսգիրը /ընդունված 02.05.2001թ./, ՀՀ ՊՏ 2001/17 (149), 15.06.01, N ՀՕ-185:
- „Декрет о земле” Принят II Всероссийским Съездом Советов Рабочих, Солдатских и Крестьянских Депутатов 27 октября 1917 года: [http://www.hist.msu.ru/ER/Etext/DEKRET/o\\_zemle.htm](http://www.hist.msu.ru/ER/Etext/DEKRET/o_zemle.htm):
- Гражданский кодекс РСФСР 1922 г.: <http://civil-law.narod.ru/wist/gk22/vved.html>.
- Основной закон (Конституция) Союза Советских Социалистических Республик, Принят второй сессией ЦИ СССР первого созыва 6 июля 1923 года и в окончательной редакции II съездом Советов СССР 31 января 1924 года: <http://ru.wikisource.org/wiki/>.
- Конституция СССР (1936) редакция 5.12.1936г.: <http://ru.wikisource.org/wiki/>.
- Закон СССР от 8 декабря 1961 г. „Об утверждении основ гражданского законодательства Союза ССР и союзных республик”, Свод законов СССР, Том 2, М., изд-во „Известия”, 1984. С. 6-42.
- Гражданский кодекс РСФСР (утв. ВЦ РСФСР 11.06.1964).  
<http://www.consultant.ru/online/base/?req=doc;base=LAW;n=1838;p=3>.

## ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

14. Закон СССР от 13 декабря 1968 г. „Об утверждении основ земельного законодательства Союза ССР и союзных республик”, Свод законов СССР, Том 4. М., изд-во „Известия”, 1984. С. 45-66.
15. Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգիրը, առ 1-ը հունիսի 1977 թվականի փոփոխություններով ու լրացումներով, «Հայաստան» Հրատարակություն, Եր., 1977:
- Տեսական աղբյուրներ**
1. Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. - Երևանի պետական համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2000, 285 էջ:
  2. Аксененок Г.А. „Право государственной собственности на землю в СССР”. Под редакцией проф. Казанцева Н.Д. Государственное издательство Юридической Литературы. М., 1950. С.307.
  3. Турубинер А. М. Право государственной собственности на землю в советском союзе. Изд-во Московского университета, 1958. С.330.
  4. Дембо Л.И. „Основные проблемы советского водного законодательства”. Изд-во Ленинградского государственного университета, 1948.

<sup>1</sup>Տես „Декрет о земле” Принят II Всероссийским Съездом Советов Рабочих, Солдатских и Крестьянских Депутатов 27 октября 1917 года: [http://www.hist.msu.ru/ER/Etext/DEKRET/o\\_zemle.htm](http://www.hist.msu.ru/ER/Etext/DEKRET/o_zemle.htm).

<sup>2</sup>Տես Հրայանակագիրը 1922 թ.: <http://civil-law.narod.ru/wist/gk22/vved.html>.

<sup>3</sup>Տես Основной закон (Конституция) Союза Советских Социалистических республик. Принят второй сессией ЦИ СССР первого созыва 6 июля 1923 года и в окончательной редакции II съездом Советов СССР 31 января 1924 года: <http://ru.wikisource.org/wiki/>.

<sup>4</sup>Տես Конституция СССР (1936), редакция 5.12.1936г.: <http://ru.wikisource.org/wiki/>.

<sup>5</sup>Տես Аксененок Г.А. „Право государственной собственности на землю в СССР”, Под редакцией проф. Казанцева Н.Д. Государственное издательство Юридической Литературы. М., 1950. С. 192.

<sup>6</sup>Տես Դեմбо Լ.Ի. „Основные проблемы советского водного законодательства”. Изд-во Ленинградского государственного университета. 1948. С. 67.

<sup>7</sup>Տես Аксененок Г.А. „Право государственной собственности на землю в СССР”. Под редакцией проф. Казанцева Н.Д. Государственное издательство Юридической Литературы. М., 1950. С. 196.

<sup>8</sup>Տես նույն տեղը, էջ 195:

<sup>9</sup>Տես Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. - Երևանի պետական համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2000, էջ 171:

<sup>10</sup>Տես Տурубинер Ա. Մ. Право государственной собственности на землю в советском союзе. Изд-во Московского университета, 1958. С. 137.

<sup>11</sup>Տես նույն տեղը, էջ 138:

<sup>12</sup>Տես նույն տեղը, էջ 140:

<sup>13</sup>Տես Տурубинер Ա. Մ. Право государственной собственности на землю в советском союзе. Изд-во Московского университета, 1958. С. 197-198.

<sup>14</sup>Տես Տурубинер Ա. Մ. Право государственной собственности на землю в советском союзе. Изд-во Московского университета, 1958. С. 57.

<sup>15</sup>Տես Свод законов СССР, Том 2. М. Изд-во „Известия”, 1984. С. 6-42.

<sup>16</sup>Տես Հրայանակագիրը (утв. ВЦ РСФСР 11.06.1964):

<http://www.consultant.ru/online/base/?req=doc;base=LAW;n=1838;p=3>.

<sup>17</sup>Տես Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգիրը, առ 1-ը հունիսի 1977 թվականի փոփոխություններով ու լրացումներով, «Հայաստան» Հրատարակություն, Երևան, 1977:

<sup>18</sup>Տես Свод законов СССР, Том 4. М. Изд-во „Известия”, 1984. С. 45-66.

<sup>19</sup>Տես Հրայանակագիրը (утв. ВЦ РСФСР 11.06.1964):

<sup>20</sup>Տես ԽՍՀՄ Սահմանադրություն, 1977(զլույն 2. «Տնտեսական համակարգը», հոդված 11)

<sup>21</sup>Տես ՀՀ ՀՀ Ս 1990/16:

<sup>22</sup>Տես ՀՀ ՀՀ Ս 1990/20:

<sup>23</sup>Տես ՀՀ ՀՀ Ս 1991/2:

<sup>24</sup>Տես ՀՀ ՀՀ Ս 1991/2:

<sup>25</sup>Տես ՀՀ ՊՍ 2005 (հասող բողարկ.) 05.12.2005:

<sup>26</sup>Տես Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. - Երևանի պետական համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2000, էջ 269:

<sup>27</sup>Տես ՀՀ ՊՍ 2001/17 (149), 15.06.01:

<sup>28</sup>Տես ՀՀ ՊՍ 1998/17 (50), 10.08.98:

**ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

**ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ  
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՁԱՑ  
ԱԶԱՏ ՏԵՂԱԾԱՐԺԻ ՀԱՍՏԱՏՔԱՆՈՒՄ**



Եվրոպական համայնքի հիմնադրման մասին 1957 թվականի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 39-րդ հոդվածը նախատեսում է աշխատողների, ինքնազբաղ անձանց՝ Եվրոպական Միության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ տալով այդ իրավունքի ընդհանուր նկարագիրը, իրականացման կարգն ու եղանակները, ընդհանուր երաշխիքները, սահմանափակման հնարավորությունները։ Սակայն Պայմանագիրը համանման իրավունքներ է նախատեսում նաև աշխատողների ընտանիքի անդամների համար։ Ընտանիքի անդամների սպառիչ ցանկը սահմանելը միշտ էլ իրենից ներկայացրել է իրավաբանական հիմնախնդիր, քանի որ ընտանիքի անդամների սպառիչ ցանկ սահմանելիս միշտ էլ առաջ են գալիս բազմաթիվ սուրյեկտիվ հատկանիշներ, պրակտիկայում խնդիրներ առաջացնող իրավիճակներ։ Այդ իսկ պատճառով «ընտանիքի անդամ» հասկացության մեկնաբանումը, համաձայն ԵՄ օրենսդրության, կարող է օգտակար և արդյունավետ լինել նաև համանման խնդիրը ՀՀ օրենսդրությամբ կարգավորելու տեսանկյունից։

Ընտանիքի անդամների իրավունքները ԵՄ երկրորդային օրենսդրությամբ։

Ազատ տեղաշարժի իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքից օգտվող ընտանիքի անդամների հետ կապված հարաբերությունները մանրամասն կարգավորվում են Քաղաքացիների իրավունքների մասին 2004/38/EC դիրեկտիվով (այսուհետ՝ Դիրեկտիվ)։

Դիրեկտիվի նախաբանի 5-րդ կետում նշվում է, որ անդամ պետությունների տարածքում ազատորեն տեղաշարժվելու և բնակություն հաստատելու ԵՄ քաղաքացիների իրավունքը, եթե այն իրականացվում է ազատության և արժանապատվության սկզբունքների հիման վրա, երաշխավորվում է

նաև նրանց ընտանիքի անդամների համար՝ անկախ քաղաքացիությունից։ Ընդ որում՝ Դիրեկտիվով տրված «ընտանիքի անդամ» հասկացությունը բավական լայն է և ընդգրկում է անձանց լայն շրջանակ։ Եվ այսպես Դիրեկտիվի 2-րդ հոդվածի 2-րդ մասով «ընտանիքի անդամներ» են։

ա) ամուսինը,

բ) կողակիցը, ում հետ ԵՄ քաղաքացին ունի գրանցված հարաբերություններ՝ տվյալ անդամ պետության օրենսդրության հիման վրա և դրան համապատասխան, եթե այդ օրենսդրությամբ գրանցված հարաբերությունները համահավասար են ամուսնությանը,

գ) ԵՄ քաղաքացու, նրա ամուսնու և (ը) կետի իմաստով կողակցի ուղղակի վայրընթաց հարազատները, որոնք 21 տարեկանից ցածր են և կախվածության մեջ են գտնվում նրանցից,

դ) ԵՄ քաղաքացու, նրա ամուսնու և (ը) կետի իմաստով կողակցի ուղղակի վերընթաց հարազատները, որոնք կախվածության մեջ են գտնվում նրանցից։

Դիրեկտիվի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Դիրեկտիվը կիրառելի է ԵՄ բոլոր այն քաղաքացիների նկատմամբ, որոնք տեղաշարժվում և բնակություն են հաստատում այն անդամ պետությունում, որի քաղաքացին չեն համարվում, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների նկատմամբ, որոնց ցանկը սահմանված է 2-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնք ուղղելու մեջ են գտնվում նրանցից։

Սակայն Դիրեկտիվը 3-րդ հոդվածի 2-րդ մասով գգալիորեն մեծացրել է Դիրեկտիվի շահառուների շրջանակը՝ նշելով, որ ԵՄ քաղաքացիների ցանկության դեպքում անդամ պետությունները պարտավոր են, համաձայն ազգային օրենսդրության, իրականացնել հետևյալ անձանց մուտքի և

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բնակության իրավունքը.

ա) անկախ քաղաքացիությունից՝ ցանկացած այլ ընտանիքի անդամ, որը չի ընկնում 2-րդ հոդվածի 2-րդ մասի նկարագրության ներքո, այն երկրում, որտեղից նա եկել է, կախվածության մեջ է գտնվել բնակության հիմնական իրավունք ունեցող ԵՄ քաղաքացուց կամ ապրել է նրա հետ նույն ընտանիքում, ինչպես նաև եթե առողջական խնդիրներից ելնելով ԵՄ քաղաքացու կողմից ունի անհրաժեշտ խնամքի կարիք.

բ) կողակիցը, որի հետ ԵՄ քաղաքացին ունի պատշաճ հաստատված ամուր հարաբերություններ:

Անդամ պետությունը պետք է ձեռնարկի անհատական հատկանիշների վերաբերյալ լայնածավալ քննություն, և պարտավոր է պատճառաբանել նշված անձանց մուտքի կամ բնակության իրավունքի ցանկացած մերժում:

Ավելացնենք միայն, որ նախկինում ընտանիքի անդամների հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին 1612/68 Կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 10-12-րդ հոդվածներով:

Երկար ժամանակ վեճերի տեղիք էր տալիս այն հարցը, թե երրորդ պետության քաղաքացին, որը հանդիսանում է ԵՄ քաղաքացու ընտանիքի անդամ, իրավունք ունի միանալ իր ընտանիքի անդամ աշխատողին անմիջապես երրորդ երկրից և արդյոք այդ դեպքում ընդունող անդամ պետությունը պարտավոր է ընդունել նրան: Եվրոպական արդարադատության դատարանը (այսուհետ՝ Դատարան) այս հարցին անդրադարձել է *Ակրիխի<sup>1</sup>* գործում: Ակրիխը Մարոկոյի քաղաքացի էր, որը երկու անգամ վտարվել էր Միացյալ Թագավորությունից: Դրանից հետո նա ամուսնանում է քրիստոնացի կնոջ հետ, որը գնում է Իոլանդիա աշխատելու: Հետագայում այդ կինը ցանկանում է վերադառնալ Միացյալ Թագավորություն և իր հետ բերել նաև իր ամուսնու՝ հիմնվելով Կանոնակարգի 10-րդ հոդվածի վրա, սակայն այդ կապակցությամբ Դատարանը նշեց, որ Կանոնակարգը չի կարող օգնել նրանց, քանի որ այն կարգավորում է միայն ԵՄ տարածքում ազատ տեղաշարժի հետ կապված հարաբերությունները: Դատարանը հավելեց նաև, որ ԵՄ քաղաքացու ամուսնու հանդիսացող երրորդ երկրի քաղաքացու կողմից ԵՄ տարածք մուտք գործելու հիմնախնդիրը կարգավորված չէ: Յուրաքանչյուր երկրի օրենսդրությամբ կարգավորվում է

տվյալ երկիր մուտք գործելու կարգը, իսկ ԵՄ օրենսդրությամբ՝ մի անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն տեղափոխվելու հարցը, եթե սկզբնական մուտքը անդամ պետություն արդեն երաշխավորվել է: Հետևաբար Դատարանը վճռեց, որպեսզի օգտվել Կանոնակարգի հոդված 10-ից, ԵՄ քաղաքացու ամուսնու պարտավոր է անդամ պետությունում օրինական բնակության իրավունք ունենա, որ տեղափոխվի այլ անդամ պետություն, որը տեղափոխվել, կամ տեղափոխվում է նրա կինը: Հավելենք միայն, որ ներկայում ԵՄ անդամ պետություն մուտք գործելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են շենքենյան իրավունքով:

Ակրիխում առաջ քաշված կանոնները թույլ չեն տալիս անդամ պետությունում բնակության բոլոր վերաբերյալ չունեցող երրորդ երկրների քաղաքացիներին, օգտվելով ԵՄ օրենսդրությունից, շրջանցել անդամ պետության օրենսդրությունը, որոնց հիմնա վրա նրան կարող են վտարել այդ պետությունից: Սակայն այս կանոնը չի ազդում այն ընտանիքի անդամների վրա, որոնք ցանկանում են անմիջապես երրորդ երկրից մուտք գործել ԵՄ որևէ անդամ պետություն: Նման մեկնարանություն արվել է *MRAAX-ի<sup>2</sup>* գործում, սակայն Ակրիխի գործում դրան հղում չի կատարվել: *MRAAX-ի* գործում Դատարանը այդպես էլ չտարանջատեց ազգային և ԵՄ օրենսդրության դերը ԵՄ տարածք մուտք գործելու թույլտվությունը սահմանելու հարցում: Դատարանը, հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի վրա (Ընտանեկան կյանքի իրավունք), ասաց, որ անդամ պետությունը չի կարող հետ ուղարկել երրորդ երկրի այն քաղաքացուն, որը ամուսնացել է ԵՄ քաղաքացու հետ և ցանկանում է մուտք գործել ԵՄ տարածք առանց վավերական նույնականության քարտ կամ անձնագիր կամ անհրաժեշտության դեպքում վիզա ունենալու:

Վերլուծելով վերը նշված գործերը՝ ընդհանուր առմամբ գալիս ենք այն եզրակացության, որ երրորդ երկրների բոլոր քաղաքացիները պետք է անցնեն էմիգրացիոն օրենսդրության միջով, որպեսզի կարողանան մուտք գործել որևէ անդամ պետություն և օգտվեն ԵՄ օրենսդրությունից<sup>3</sup>:

ԵՄ քաղաքացիները և ԵՄ քաղաքացի հանդիսացող նրանց ընտանիքի անդամները այլ ան-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դամ պետությունում երեք ամսից մինչև հինգ տարի ժամանակով բնակվելու համար պետք է ստանան զրանցման վկայական, իսկ ահա ԵՄ քաղաքացիների այն ընտանիքի անդամները, որոնք չեն հանդիսանում որևէ անդամ պետության քաղաքացի այդ նույն ժամանակահատվածի համար պետք է ստանան ընդամենը բնակության քարտ, որն ավելի քիչ իրավունքներ է պարունակում իր մեջ:

Դիրեկտիվի 9-րդ հոդվածը սահմանում է, որ անդամ պետությունները Սիության քաղաքացու ընտանիքի՝ ԵՄ քաղաքացի շահմարվող անդամներին շնորհում են բնակության քարտեր, եթե նրանք ծրագրում են տվյալ պետությունում բնակվել երեք ամսից ավելի: Բնակության քարտ ստանալու համար դիմումների վերջնաժամկետը չի կարող ժամանական օրվանից հաշված երեք ամսից շուտ ժամանակահատվածում լինել: Բնակության քարտի վերաբերյալ պահանջների շրականացման դեպքում անձիք կրում են համապատասխան և ոչ խորական պատիժներ:

Բնակության քարտ ստանում են դիմում ներկայացնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Դիմում ներկայացնելու վերաբերյալ վկայականը տրվում է անմիջապես (Դիրեկտիվ, հոդված 10-րդ, մաս 1-ին):

Բնակության քարտ ստանալու համար պետք է ներկայացվեն վավերական անձնագիր, ամուսնական կամ բարեկամական կապը հավաստող փաստաթուղթ, համապատասխան ԵՄ քաղաքացու զրանցման վկայական կամ բնակության իրավունքը հավաստող այլ փաստաթուղթ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Դիրեկտիվի 2-րդ հոդվածի 2-րդ մասի (գ) և (դ) կետերում, ինչպես նաև 3-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) և (բ) կետերում նշված պայմանների առկայությունը հավաստող ապացույցներ:

Դիրեկտիվի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ բնակության քարտը վավերական է հինգ տարի ժամանակով՝ հաշված տրամադրման օրվանից, կամ ԵՄ քաղաքացու բնակության իրավունքն համահավասար ժամանակահատվածով, եթե այդ ժամանակահատվածը փոքր է հինգ տարուց:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բնակության քարտի վավերականության վրա ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ հետևյալ հանգանակները. տարվա մեջ վեց ամիսը չգերազանցող

մշտական բացակայությունները, ավելի երկար ժամանակով բացակայությունը պարտադիր զինվորական ծառայության անցնելու համար, մեկ բացակայությունը առավելագույնը տասներկու անընդմեջ ամիս հարգելի պատճառով, ինչպիսին է հղիությունը, ծննդաբերությունը, լորջ հիվանդությունը, ուսումը կամ վերապատրաստումը, գործուղումը այլ անդամ պետությունում, կամ երրորդ երկրում:

Երկար տարիներ ընտանիքի անդամի իրավունքների հետ կապված ամենավիճելի հարցերից է եղել բնակության քարտի պահպանման հարցը ԵՄ քաղաքացու մահվան, վտարման, ինչպես նաև ամուսնալուծության ամուսնությունն անվավեր ճանաչելու և այլ դեպքերում:

Եվ այսպես՝ Դիրեկտիվի 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ԵՄ քաղաքացու վտարումը կամ մահը չեն կարող ազդել նրա ընտանիքի այն անդամների բնակության իրավունքի վրա, որոնք որևէ անդամ պետության քաղաքացի են: Սակայն նրանք մշտական բնակության իրավունք ստանալուց հետո պետք է բավարարեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմաններին:

7-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ ԵՄ քաղաքացու մահվանը չի կարող հետևել նրա ընտանիքի այն անդամների բնակության իրավունքի կորուստը, որոնք որևէ անդամ պետության քաղաքացի չեն, սակայն որպես ընտանիքի անդամ բնակվել են տվյալ անդամ պետությունում նշանագույնը մեկ տարի ԵՄ քաղաքացու մահվանից առաջ:

Մշտական բնակության իրավունք ստանալուց առաջ այդ անձիք պետք է ապացույնեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմանների առկայությունը: Նման անձիք հետագայում պահպանում են իրենց բնակության իրավունքը բացառապես իրենց անհատական հատկանիշների հիման վրա:

7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անդամ պետությունից ԵՄ քաղաքացու վտարումը, կամ նրա մահը, չեն կարող հիմք հանդիսանալ նրա երեխաների կամ երեխայի խնամակալ համարվող նրա ծնողների բնակության իրավունքի կորստի համար, անկախ քաղաքացիությունից, եթե երեխաները բնակվում են ընդունող պետությունում և ստանում են կրթություն: Բնակության իրավունքը պահպանվում է մինչև երեխաների կրթության ավարտը:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Դիրեկտիվի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ամուսնալուծությունը, ամուսնության անվավերություն կամ գրանցված հարաբերությունների ավարտը չեն ազդում ընտանիքի այն անդամների բնակության իրավունքի վրա, որոնք հանդիսանում են այլ անդամ պետության քաղաքացի: Սակայն նրանք ևս մշտական բնակության իրավունք ստանալուց առաջ պետք է բավարարեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմաններին:

Դիրեկտիվի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ամուսնալուծությունը, ամուսնության անվավերությունը և գրանցված հարաբերությունների ավարտը հիմք չեն ԵՄ քաղաքացու այն ընտանիքի անդամների բնակության իրավունքի կորստի համար, որոնք որևէ անդամ պետության քաղաքացի չեն, եթե.

ա) նախքան ամուսնալուծությունը, ամուսնության անվավերությունը կամ գրանցված հարաբերությունների ավարտը ամուսնությունը կամ գրանցված հարաբերությունները տևել են նվազագույնը երեք տարի, այդ թվում՝ մեկ տարի ընդունող անդամ պետությունում,

բ) ամուսինների կամ գրանցված հարաբերությունների միջև պայմանագրով կամ դատարանի որոշմամբ ամուսիններից կամ գրանցված հարաբերությունների մասնակիցներից մեկը, որը չի հանդիսանում ԵՄ քաղաքացի, խնամում է ԵՄ քաղաքացու երեխաններին,

գ) որոշակի մասնավոր հանգամանքներից ելնելով, ինչպիսին է տնային բռնությունը ամուսնության կամ գրանցված հարաբերությունների մասնակիցներից մեկը, որը չի հանդիսանում ԵՄ քաղաքացի, ունի անշափառ երեխային տեսակցելու իրավունք, եթե դատարանը որոշել է, որ տեսակցությունը պետք է լինի ընդունող անդամ պետությունում, և տևի այնքան ժամանակ, որքան սահմանված է պայմանագրով կամ դատարանի որոշմամբ:

Դիրեկտիվի 13-րդ հոդվածը ստանալուց առաջ այդ անձիր ևս պետք է ապացուցեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմանների առկայությունը: Նման անձիր հետագայում պահպանում են իրենց բնակության իրավունքը բացառապես իրենց ան-

հատական հատկանիշների հիման վրա:

### Ամուսինը

Դատարանը իր նախադեպային իրավունքում բնորոշել է «ամուսին» հասկացությունը շատ լայն իմաստով: Դիտայի<sup>4</sup> գործում Դատարանը քննարկում էր առանձին ապրող ամուսնացած գույզի խնդիրը: Սենեգալի քաղաքացի կինը ամուսնում է Ֆրանսիայի քաղաքացի տղամարդու հետ, որն ապրում և աշխատում էր Բելգիայում: Հետագայում կինը սկսում է առանձին ապրել իր սեփական միջոցներով և ամուսնալուծվելու նպատակադրությամբ: Բելգիական մարմինները, սակայն, հրաժարվում են երկարացնել նրա բնակության իրավունքի թույլտվությունը այն հիմքով, որ նա այլև ԵՄ քաղաքացու ընտանիքի անդամ չէ և չի ապրում իր ամուսնու հետ: Դատարանը նշեց, որ ԵՄ օրենսդրությունը չի պարտադրում ներգաղթած ընտանիքի անդամներին մշտապես միասին ապրել: Դատարանը հավելեց, որ եթե միասին ապրելը լինի բնակության իրավունք ստանալու պարտադիր պահանջ, ապա ցանկացած ժամանակ ԵՄ քաղաքացին, տաճից դուրս հանելով իր ամուսնուն (կնոջը), կարող է նրա նկատմամբ վտարման որոշում կայացնելու պատճառ դառնալ:

Ուստի պարզ է դառնում, որ նոյնիսկ առանձին ապրող գույզերը կարող են մնալ ընդունող պետությունում, ուստի նման կանոնը լիովին համապատասխանում է Հանձնաժողովն ընդդեմ Գերմանիայի գործով Դատարանի առաջ քաշած այն դիրքորոշմանը, որ 1612/68 Կանոնակարգը (Ենթադրում է նաև նրան հետագայում փոխարինած Դիրեկտիվը) պետք է մեկնարանվի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո: Սակայն ամուսնալուծված գույզերը չեն կարող նման իրավունքներից օգտվել: Մինչ Դիրեկտիվի ընդունումը ամուսնալուծված գույզերի հարցը կարգավորված չէր, սակայն Դատարանը Դիտայի գործում նշել էր, որ ամուսնական հարաբերությունները չեն կարող դադարեցված համարվել այնքան ժամանակ, քանի դեռ դրանք իրավասու մարմինների կողմից չեն հաստատվել<sup>5</sup>:

«Ամուսին» եզրույթն իր մեջ չի պարունակում միասին բնակվող գույզերին: Դիտայի<sup>6</sup> գործում Դատարանը որոշեց, որ բրիտանացի կինը չի կարող հիմնվել Կանոնակարգի 10-րդ հոդվածի վրա, որ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունք վերապահի իր հետ միասին բնակվող տղամարդուն գալ Նիդեղանդներ: Սակայն Ռիդի գործը շատ կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ հոլանդական օրենսդրությամբ Նիդերլանդների քաղաքացու հետ կայուն հարաբերություններ ունեցող օտարերկրացին իրավունք ունի բնակություն հաստատել Նիդերլանդներում: Եվ հետևաբար տիկին Ռիդին նման իրավունքից զրկելը կիխտվեր խտրականություն և կիակասեր Պայմանագրի 12-րդ, 39-րդ և Կանոնակարգի 7-րդ հոդվածներին: Հենց Ռիդի գործն էլ հիմք հանդիսացավ, որ Դիրեկտիվում լայնացվեց «ամուսին» եզրույթի շրջանակները, և դրա մեջ ներառվեցին նաև գուանցված հարաբերությունները:

### **Կախվածության մեջ գտնվող անձիք.**

Ինչպես տեսանք, ընտանիքի անդամների ցանկը սահմանելիս՝ Դիրեկտիվը որոշակի արտոնություններ է տալիս ընտանիքի աշխատող անդամից կախվածության մեջ գտնվող անձանց: *Lերոնի*<sup>7</sup> գործում՝ Դատարանը նշել է, որ կախվածության մեջ գտնվելու հարցը պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Կախվածության մեջ գտնվող անձը համարվում է աշխատողի կողմից: Դատարանը հավելել է, որ բոլորովին անհրաժեշտություն չկա ընթարկելու այն պատճառները, թե ինչու է կախվածության մեջ գտնվող անձը հովանավորվում աշխատողի կողմից կամ ինչու նա չի հոգում իր կարիքները ինքնուրույն:

### **Ընտանիքի այլ անդամներ.**

Ընտանիքի այն անդամները, որոնք չունեն որևէ անդամ պետության քաղաքացիություն, այնուամենայնիվ ունեն ընդունող անդամ պետությունում աշխատելու իրավունք: *Գյուլի*<sup>8</sup> գործում՝ Գերմանիայում վերապատրաստված Կիպրոսի քաղաքացի բժիշկը ամուսնություն է Սիացյալ Թագավորության քաղաքացի վարսավիրի հետ, որն աշխատում էր Գերմանիայում: Այդ բժշկին չտվեցին մշտական գործունեություն ծավալելու վկայական, քանի որ նա ԵՄ քաղաքացի չէր: Դատարանը որոշեց, որ Կանոնակարգի 11-րդ հոդվածը ցանկացած քաղաքացիության պատկանող ամուսնուն իրավունք է տալիս աշխատանք գտնելու:

Ինչպես տեսանք՝ Դիրեկտիվը սահմանում էր նաև երեխաների իրավունքները կրթություն ստանալու ընդունող անդամ պետությունում և նույնիսկ աշխատողի մահվան կամ վտարման դեպքում այդ

իրավունքը չեր դադարում: Դրա նպատակն է խորացնել երեխաների ինտեգրացիան տվյալ անդամ պետության հասարակության մեջ: Ընդ որում, անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ, որ երեխաները կարողանան տարբեր կրթական և ուսումնական ծրագրերից օգտագործել քաղել տվյալ երկրի քաղաքացիներին հավասար պայմաններով<sup>9</sup>: Ընդ որում «հավասար պայմաններ» արտահայտությունը շատ լայն է մեկնաբանվել: Դատարանը Կազարանիկի գործում նշել է, որ «պայմանները» վերաբերվում են այն ընդհանուր միջոցառումներին, որոնք ուղղված են կրթություն ստանալու գործընթացի խթանմանը, այդ թվում՝ դրամաշնորհները ստվորելու ընթացքում բնակարանային և կենցաղային հարցերը հոգալու և վերապատրաստումներ անցնելու համար: Հետևաբար, քննարկվող գործում գերմանական մարմինները չեն կարող մերժել Գերմանիայում աշխատող իտալիայի քաղաքացու դպրոցական աղջկան մեկամսյա դրամաշնորհից՝ հիմք ընդունելով նրա քաղաքացիությունը: Կենսաապահովման դրամաշնորհը գործում է նաև այն դեպքում, եթե երեխաները որոշում են կրթություն ստանալ իրենց հայրենի երկրում: Այդ իսկ պատճառով՝ *Դի Լեոյի*<sup>10</sup> գործում՝ Դատարանը որոշեց, որ գերմանական իշխանությունները պետք է կենսաապահովման դրամաշնորհ վճարեն իտալացի ներգաղթած այն աշխատողի աղջկան, որը քսանիկնագ տարի աշխատում էր Գերմանիայում, թեկուզ այդ աղջիկը ցանկանում էր բժշկություն ստվորել իր հայրենի պետությունում՝ իտալիայում:

Կրթության իրավունքի կարևորությունն ընդգծվել է *Բառումբաստի*<sup>11</sup> գործում: Գերմանիայի քաղաքացին աշխատում էր Սիացյալ Թագավորությունում, որտեղ նա ամուսնացել էր կոլումբիացի կնոջ հետ: Նրանք ունեին երկու երեխա, և նրանց տրվել էր բնակության իրավունքի թույլտվություն հինգ տարի ժամկետով: Եթե նա դադարեց աշխատել, բրիտանական իշխանությունները հրաժարվեցին երկարացնել նրանց բոլորի բնակության իրավունք տվող փաստաթղթերի ժամկետը և չթույլատրեցին երեխաներին ավարտել իրենց կրթությունը Սիացյալ Թագավորությունում: Դատարանը գտավ, որ բրիտանական իշխանությունների գործողությունները հակասում են Պայմանագրի 39-րդ հոդվածին, քանի որ հնարավորություն չեն տալիս երեխային շարունակելու կրթությունն ընթունող

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անդամ պետությունում, ինչն էլ կարող է խոչընդոտ հանդիսանալ ԵՄ քաղաքացիների համար 39-րդ հոդվածում ամրագրված ազատ տեղաշարժի իրենց իրավունքն իրականացնելու համար: Անձանամաբ նույն պատճառով *Ո -ի<sup>12</sup>* գործում Դատարանը որոշեց, որ ԱՄՆ-ի քաղաքացի կնոջ և Սիացյալ Թագավորությունում աշխատող ֆրանսիայի քաղաքացի ամուսնու երեխաներն իրավունք ունեն կրթություն ստանալու Սիացյալ Թագավորությունում, թեկուզ նրանց ծնողները ամուսնալուծվել էին և նրանք բնակվում էին իրենց մոր հետ:

Բացի այդ *Բառումբաստի* և *Ո -ի* գործում Դատարանը որոշեց, որ եթե ներգաղթած երեխաները կորություն են ստանում ընդունող անդամ պետությունում, ապա նրանց անհրաժեշտ է խնամակալ: *Բառումբաստի* և *Ո -ի* գործում Դատարանի կատարած եզրահանգումներն իրենց ամրագրումը ստացան Դիրեկտիվի 12-րդ հոդվածի 3-րդ մասում, ինչը

լրացուցիչ երաշխիք հանդիսացավ Պայմանագրի 39-րդ հոդվածի իրականացման համար:

Այսպիսով, վերլուծելով ԵՄ քաղաքացիների ընտանիքի անդամների իրավունքները ԵՄ տարածքում ազատ տեղաշարժվելու հետ կապված հարաբերություններում, զայիս ենք եզրակացության, որ ԵՄ օրենսդրությունը և նախադեպային իրավունքը բավական լայն շրջանակ ընդորկող անձանց է ընդգրկում «ընտանիքի անդամ» հասկացության ներքո: Ընդ որում, այդ անձանց շրջանակը սահմանելիս հաշվի են առնվել բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշներ, որոնց առկայության պարագայում ԵՄ համապատասխան քաղաքացու հետ սերտ հարաբերությունների մեջ գտնվող բոլոր անձինք հնարավորություն են ունենում օգտվելու անձանց ազատ տեղաշարժի իրավունքից:

<sup>1</sup> Տե՛ս Case C-109/01, *Secretary of State for the Home Department v. Akrich*, [2003], պար 48:

<sup>2</sup> Տե՛ս Case C-459/99 [2002] ECR I-6591, պար 61:

<sup>3</sup> Տե՛ս Catherine Barnard, The Substantive Law of the EU: The Four Freedoms, 2003, էջ 285:

<sup>4</sup> Տե՛ս Case 267/83 *Diatta v. Land Berlin* [1985] ECR 567.

<sup>5</sup> Տե՛ս Case 267/83 *Diatta v. Land Berlin* [1985] ECR 567, պար 20:

<sup>6</sup> Տե՛ս Case 59/85 *Reed* [1986] ECR 1283.

<sup>7</sup> Տե՛ս Case 316/85 *Lebon* [1987] ECR 281, պար 22:

<sup>8</sup> Տե՛ս Case 131/85 *Gßl v. Regierungspräsident Düsseldorf* [1986] ECR 1573.

<sup>9</sup> Տե՛ս Case 9-74 *Casagrande v. Landeshauptstadt München* [1974] ECR 773, պար 7, 8:

<sup>10</sup> Տե՛ս Case C-308/89 *Di Leo v. Land Berlin* [1990] ECR I-4185, պար 12:

<sup>11</sup> Տե՛ս Case C-413/99 *Baumbast* [2002] ECR I-7091, պար 50:

<sup>12</sup> Տե՛ս Case C-413/99 [2002] ECR I-7091, պար 60-62, 73:

## ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

### ԹԵԿՆԱԾՈՒԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՄ

Տարբեր երկրներում թեկնածուին ներկայացվող պահանջները տարբեր են: Այդիսի պահանջներ են հանդիսանում թեկնածուի տարիքը, քաղաքացիությունը, մշտական բնակությունը, ընտրական գրավի մուծումը, ստորագրությունների հավաքագրումը և այլն:

1) Տարիք: Թեկնածուներին ներկայացվող պահանջներից է հանդիսանում տարիքը: Հայաստանի Հանրապետությունում սահմանված են տարիքային հետևյալ ցենզերը՝ նախագահի համար 35 տարեկան, պատգամավորի և համայնքի ղեկավարի համար՝ 25, ավագանու անդամի համար՝ 21 տարեկան: Ընդհանուր առմամբ, նշված տարիքային ցենզերը ընդունելի են՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը:

2) Քաղաքացիություն: Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիության պահանջ է սահմանված ՀՀ Նախագահի (10 տարվա) և պատգամավորների թեկնածուների համար (5 տարի):

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում թեկնածուների համար քաղաքացիություն չի պահանջվում, ինչը համապատասխանում է միջազգային չափանիշներին:

«Հետևելով նույն փաստարկներին, որով ոչ քաղաքացիներին տրվում է ընտրելու իրավունք տեղական ընտրություններին՝ առաջարկվում է, որ տեղական ընտրություններին թեկնածու լինելու իրավունք հնարավորության դեպքում տրվի երկար ժամանակ բնակվող օտարերկրյա ռեզիլենտներին»<sup>1</sup>:

Քաղաքացիության պահանջի հետ կապված բավական լուրջ խնդիր է հանդիսանում երկրադարձությունը ունեցող անձանց հարցը: ՀՀ ընտրական օրենսգրքի<sup>2</sup> համաձայն՝ «Հանրապետության Նախագահի և պատգամավորի թեկնածու չեն կարող առաջարկվել և գրանցվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն» (65-րդ հոդված, 3-

րդ մաս և 97-րդ հոդված, 5-րդ մաս):

Կարծում ենք, տվյալ դրույթը արդարացված չէ: Նախ, երկրադարձությունը ավելի նվազ իրավունքներ տրամադրելը չի համապատասխանում միջազգային ընդունված չափանիշներին:

«Անհավասար ընտրական իրավունքի ստեղծումը հակասում է 1990 թվականի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 7.3 կետում պարունակվող՝ քաղաքացիներին հավասար ընտրական իրավունքի ապահովման պարտավորությանը»<sup>3</sup>:

«Որպեսզի ժողովրդի կամքը իմբ ծառայի կառավարության իշխանության համար, մասնակից պետությունները ... երաշխավորում են չափահանդարձությունը համար ընդհանուր և հավասար ընտրական իրավունք»<sup>4</sup>:

Երկրադարձություն հանդիսանում են ՀՀ լիիրավ քաղաքացիներ, և այն, որ ՀՀ քաղաքացին ունի նաև այլ երկրի քաղաքացիություն, որն ի դեպքույթը է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 30.1), չի կարող իմբ հանդիսանալ նրան որևէ իրավունքի գրկելու համար: Այն իրավունքը, որը անձին տրվում է քաղաքացիություն ունենալու ուժով (այլ լրացուցիչ պայմաններ չեն պահանջվում կամ անձը բավարարում է այդ պահանջներին) չի կարող սահմանափակվել երկրադարձությունի համար, քանի որ երկրադարձություն ամբողջապես բավարարում է քաղաքացիություն ունենալու պահանջը:

«Այն պահից, երբ երկրադարձությունը ընդունելի է, քաղաքացիները ովեր ունեն երկու երկու քաղաքացիություն, չափոր է ունենան ավելի քիչ իրավունքներ, քան մյուսները, այդպիսի սահմանափակումները տարածված չեն»<sup>5</sup>:

Բացի այդ, ներկայիս օրենսդրական մեխանիզմները հնարավորություն չեն տալիս բոռք թեկնածուների դեպքում հստակ պարզել, թե տվյալ անձը ունի արդյոք այլ երկրի քաղաքացիություն, թե՝ ոչ: Արդյունքում, հնարավոր է դառնում կիրառել տարբե-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րակված մոտեցում, այսինքն, մեկ թեկնածուի դերում ինչ-ինչ միջոցներով պարզել այլ երկրի քաղաքացիություն ունենալու փաստը, իսկ մյուսի դեպքում՝ ոչ:

«Ներկայումս ՀԴԱ-ին պարզ չէ, թե ինչպես կարելի է որոշել, արդյոք անձն ունի երկրադաքացիություն, թե՝ ոչ։ Որոշակի շփորություն է առաջանում՝ կապված այս փոփոխությունների իրագործման հետ»<sup>6</sup>։

Այսպիսով, կարծում ենք, անհրաժեշտ է նշված սահմանափակումը համեմ՝ երկրադաքացիներին նույնպես հնարավորություն տալով այլ քաղաքիների հետ համահավասար առաջարկվելու դրդես թեկնածու համապետական ընտրությունների ժամանակ։

3) Մշտական բնակություն։ Թեկնածուներին ներկայացվող կարևոր պահանջներից է հանդիսանում որոշակի ժամկետում տվյալ երկրում մշտապես բնակված լինելու պահանջը։ Տարբեր երկրներում այդ ժամկետը նույնպես տարբեր է։

Մշտական բնակության պահանջը նպատակ ունի ապահովել, որպեսզի թեկնածուները, ովքեր ապագայում պետք է զբաղեցնեն երկրի կարևորագույն պետական պաշտոնները, իրազեկ լինեն տվյալ երկրում տիրող քաղաքական և տնտեսական իրավիճակին, երկրում առկա խնդիրներին, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական պարտականությունները։

ՀՀ Նախագահի թեկնածուների համար սահմանված է վերջին 10 տարում Հանրապետությունում մշտապես բնակվելու պահանջ, ՀՀ պատգամավորի թեկնածուների համար՝ վերջին 5 տարում, Երևանի ավագանու թեկնածուների համար՝ վերջին 3 տարում, համայնքի ղեկավարի և ավագանու թեկնածուների համար՝ առնվազն վերջին 2 տարվա հաշվառման պահանջ։

Մշտական բնակության պահանջը Հայաստանի ընտրական օրենսդրության համար եղել և մնում է խնդրահարույց հարցերից մեկը։ Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ ընտրական օրենսգիրը օգտագործում են «մշտապես բնակվող» արտահայտությունը, սակայն ՀՀ օրենսդրությամբ այդ տերմինի հստակ սահմանում չի տրվում։

ՀՀ ընտրական օրենսգրքում ընդհանրապես բացակայում է այդ տերմինի սահմանումը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգիրը սահմանում է միայն «բնակության վայր» հասկացությունը, մասնավորա-

պես դրա 23-րդ հոդվածի համաձայն։ «Բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է»։ Սակայն «բնակության վայր» արտահայտության սահմանումը չի կարող բավարար հիմք լինել «մշտապես բնակվել» հասկացության մեկնաբանման համար։

«Հայաստանի Հանրապետության տարածքում «մշտական բնակություն» ունենալու որոշակի ժամանակահատվածն ապացուցելու՝ թեկնածուներին ներկայացվող պահանջը միջազգային դիտորդների կողմից առավել ցայտուն կերպով ընդգծվեց որպես հիմնախնդիր 2003 թվականին, քանի որ բնակության հարցերը կանոնակարգող օրենքը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրը, ըստ Էուրյան, Աման հասկացություն չի պարունակում։ Սույն մեկնաբանություններում հնարավոր չէ գնահատել, թե արդյոք ՀՀ ընտրական օրենսգիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին։ Այնուհանդերձ, ցանկացած դեպքում շատ կարենք է, որպեսզի «մշտական բնակության» հասկացությունը հստակորեն սահմանվի, եթե այն օգտագործվելու է որպես թեկնածուներին ներկայացվող պահանջ»<sup>7</sup>։

Այլ օրենսդրական ակտերով նույնպես չի սահմանվում «մշտապես բնակվելու» հասկացության սահմանումը, այլ տրվում է միայն «մշտական բնակության վայր» հասկացության սահմանումը։ Մասնավորապես, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն։ «Մշտական բնակության վայր (կացարան)» է համարվում այն տարածքը, որտեղ բնակչուն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան»<sup>8</sup>։

Նմանատիպ դրույթ է պարունակում նաև «Բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատված «Բնակչության պետական ռեգիստրում անձանց անհատական հաշվառման կարգ»։

«Հայաստանի Հանրապետության անձնագրային համակարգի կանոնադրության»<sup>10</sup> 23-րդ կետի համաձայն։ «Մշտական բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ Հայաստանի Հանրապետության քաղաքացին բնակվում է մշտապես կամ առավելապես»։

Այսպիսով, նշված սահմանումները վերաբերվում են միայն մշտական բնակության վայրի՝ որպես կացարանի սահմանմանը, իսկ ՀՀ ընտրական

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օրենսգրքի իմաստով անհրաժեշտ է սահմանել, թե տվյալ տարածքում առնվազն որքան ժամանակը քննակվելն է համարվում մշտական բնակվել և ինչպես է այդ ժամանակը հաշվարկվում:

Այնինչ, այդ հասկացության հստակ սահմանան բացակայությունը գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում: Կարծում ենք, նշված խնդիրը հրատապ լուծման կարիք ունի, և անհրաժեշտ է օրենսգրքում հստակորեն սահմանել «մշտապես բնակվելու» պահանջի սահմանումը: Ընդ որում, այդ հասկացության սահմանումը պետք է տրվի այնպես, որպեսզի հետագայում հնարավոր լինի խուսափել դրա տարատեսակ մեկնաբանություններից: Մասնավորապես, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ անձը օբյեկտիվ պատճառներով կարող է որոշակի ժամանակով բացակայել երկրի տարածքից՝ չկտրելով կապը տվյալ երկրի հետ (արտերկրում բուժում ստանալու նպատակով և այլն):

Այսպիսով, կարծում ենք, անհրաժեշտ է օրենսգրքում տալ «մշտապես բնակվելու» հետևյալ սահմանումը՝ «Անձը համարվում է որոշակի ժամանակահատվածում ՀՀ-ում մշտապես բնակվող, եթե տվյալ ամբողջ ժամանակահատվածում հաշվառված է եղել Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունից փաստացի չի բացակայել այդ ժամանակահատվածի մեծ մասը (ընդ որում՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա մեծ մասը), բացառությամբ տվյալ անձի կամքից անկախ բացառիկ անհրաժեշտ դեպքերի (բուժում, գործուղում և այլն):»:

Ընդ որում, անձի հաշվառված լինելու մասին տեղեկանքը պետք է բավարար լինի անձին որպես թեկնածու գրանցելու համար, եթե գրանցող մարմինն այլ բան չի ապացուցում:

4) Թեկնածուին ներկայացվող պահանջներից է հանդիսանում նաև ընտրողներից որոշակի քվով ստորագրությունների հավաքագրումը:

ՀՀ-ում ստորագրությունների հավաքագրման համակարգը գործում էր մինչ 2005թ.: Ներկայում այդ համակարգը Հայաստանում չի կիրառվում: Այդ հանգամանքը կարելի է դիտարկել 2 տեսանկյունից: Սի կողմից դա արդարացված է, քանի որ ստորագրությունների հավաքագրումը ունի մի շարք բերություններ: Մասնավորապես՝ ստորագրությունների ճշտության ստուգման ընթացակարգը բավական բարդ է, ինչը գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում:

Այն կարող է չարաշահումների տեղիք տալ, քանի որ մի կուսակցության դեպքում կարող է ստորագրությունների ճշգրտման այլողեւար դիտավորյալ կատարվի շատ մանրամասնորեն ու հետևողական, իսկ մյուս դեպքում՝ ավելի մակերեսայնորեն:

Ստորագրությունների հավաքագրման համակարգը իմնականում պահանջում է ստորագրությունների հավաքագրում ողջ երկրի տարածքով՝ յուրաքանչյուր տարածքից համամասնորեն, իսկ դա կարող է խոչընդոտ հանդիսանալ այն թեկնածուների համար, որոնք ընդհանուր երկրի մակարդակով մեծ աջակցություն չունեն, սակայն զգալի աջակցություն ունեն կոնկրետ մեկ կամ մի քանի ընտրատարածքների ընտրողների կողմից:

Ստորագրությունների հավաքագրման և դրանց ճշտության ստուգման այլողեւար բավական ժամանակատար գործընթաց է:

Ստորագրությունները հավաքագրվում են ընտրողներից ոչ գաղտնի կերպով, ինչը նույնպես մտահոգիչ է՝ հաշվի առնելով քվեարկության գաղտնիության ապահովման պահանջը:

Սինույն ընտրողը ստորագրությունների հավաքագրման ժամանակ կարող է ստորագրություն տալ մեկից ավելի թեկնածուների օգտին, մինչդեռ քվեարկության ժամանակ վերջինս ունի միայն մեկ ձայնի իրավունք:

Ստորագրությունների հավաքագրման պահանջից հրաժարվելը ընդունելի է համարվել նաև միջազգային մասնագետների կողմից:

«Ստորագրությունների հավաքումը հանելը և միայն ընտրական գրավի կիրառումը ամբողջապես ընդունելի է: Սա կարող է բացառել շատ դժվարություններ կապված ստորագրությունների խկության ստուգման հետ:»<sup>11</sup>

Սյուն կողմից, սակայն, ստորագրությունների հավաքագրման պահանջը հանելը հնարավորություն է տալիս ընտրություններին մասնակցել այնպիսի անձանց, ովքեր չունեն ընտրողների լուրջ աջակցություն: Ստորագրությունների հավաքագրման պահանջն ինքնանպատակ չէ, այն նպատակ ունի կանխել ոչ մեծ աջակցություն վայելող «ոչ լուրջ թեկնածուների» մասնակցությունը ընտրություններին:

Փորձը ցույց է տալիս, որ ընտրություններին մասնակցած թեկնածուներից շատերը չեն հավաքում ընտրողների ձայների նույնիսկ 1 տոկոսը:

«2008 քվականի փետրվարի նախագահական ընտրություններին, 9 թեկնածուներից 4-ը ստո-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցան 10.000 ձայնից կամ ձայների ընդհանուր թվի 1 տոկոսից պակաս ձայներ: Եթե որոշ փոքր աջակցությամբ թեկնածուներ մասնակցեն հաջորդ ընտրություններին, ապա կարելի է ստորագրությունների հավաքման պահանջը վերականգնելու պահանջը քննարկել: Նմանապես, կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման կանոնը պետք է նաև փոխվի, օրինակ, պահանջելով կուսակցություններից, որոնք չեն ստացել տեղեր նախորդ երկու պալամենտական ընտրություններին, հավաքել ստորագրություններ ազգային ընտրություններին մասնակցելու համար:»<sup>12</sup>

Մինչդեռ, ստորագրությունների հավաքադրություն կարող է կանխել շատ փոքր աջակցություն ունեցող թեկնածուների գրանցումը:

Այսպիսով, հաշվի առնելով ստորագրությունների հավաքագրման և դրական, և բացասական կողմերը, կարծում ենք, որոշակի դեպքերում կարելի է կիրառել ստորագրությունների հավաքագրում, մասնավորապես այն թեկնածուների համար ովքեր նախորդ երկու ընտրություններին չեն մասնակցել կամ մասնակցելու դեպքում ստացել են շատ չնշն ձայներ:

Այդ դեպքում հնարավոր կլինի կանխել փոքր աջակցությամբ «ոչ լուրջ» թեկնածուների գրանցումը՝ միաժամանակ անհարկի շանրաբեռնելով արդեմ իսկ որոշակի աջակցություն ունեցող թեկնածուներին ստորագրությունների հավաքագրման ժամանակատար պահանջով:

5) Ընտրական գրավը: Թեկնածուներին ներկայացվող պահանջներից է նաև ընտրական գրավի մուծումը, որը վերադարձվում է միայն թեկնածուի կողմից ձայների որոշակի տոկոսը հավաքելու դեպքում: Ըստ էության, այն նույնպես մի միջոց է, որը կանխում է ոչ լուրջ թեկնածուների գրանցումը, քանի որ այդպիսի թեկնածուներից որոշները, մտահոգ լինելով ընտրական գրավը կորցնելու հետանկարով, չեն փորձի գրանցվել որպես թեկնածու:

Ընտրական գրավի պահանջը շատ ավելի պարզ է և հեշտ կիրառելի, քան ստորագրությունների հավաքման պահանջը: Սակայն, մյուս կողմից սույն պահանջը որևէ առնչություն չունի ընտրողների կողմից աջակցություն ունենալու հետ:

«Գործնականում նախընտրական գրավի համակարգը գերծ է ստորագրությունների հավաքման որոշակի անհարմարություններից (օրինակ, ժամանակատար գործընթացը ստորագրու-

թյունների հավաքագրման, ստորագրությունների ոչ գաղտնի լինելը և դրանց ստուգելու անհրաժեշտությունը): Այսուամենայնիվ, նախընտրական գրավի համակարգում առկա է մեկ թերություն: Համեմատած ստորագրությունների հավաքագրման համակարգում ընտրություններին մասնակցելու նպատակահարմարությունը կախվածության մեջ է դրվում գումարից, քան թե քաղաքական աջակցությունից»:<sup>13</sup>

Առավել հաճախ ընտրական գրավը և ստորագրությունների հավաքագրումը կիրառվում են զուգահեռաբար, ինչը, կարծում ենք, առավել ընդունելի տարրերակ է:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գրավի հարցում, թերևս, միակ խնդիրը գրավի չափն է:

«Դրամական գրավը պետք է ունենա զգալի չափ, որպեսզի ծառայի որպես խոշընդոտ անլուգ քաղաքական կուսակցությունների և անկախ թեկնածուների համար, սակայն, այն չպետք է լինի այնքան բարձր, որ կանխի լեզիտիմ քաղաքական կուսակցությունների և անկախ թեկնածուների գրանցման հնարավորությունը»:<sup>14</sup>

Ընտրական գրավի չափազանց մեծ լինելը ընդունելի չէ մի քանի հանգամանքներից ելնելով: Մասնավորապես, ուս կարող է ազդել այն թեկնածուների վրա, ովքեր ունեն ժողովրդի մեծ աջակցություն (օրինակ, կարող են հավաքել ընտրողների մեծ թվով ստորագրություններ), սակայն հնարավորություն չունեն մուծելու ընտրական գրավը:

Բացի այդ գրավի չափազանց մեծ չափը հակասության մեջ է մտնում հավասարության սկզբունքի հետ: ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի համաձայն:

«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված ... գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Խտրականության արգելումը ամրագրված է նաև բազմաթիվ միջազգային պայմանագրերում («Մարդու իրավունքների համընդիանությունը պահպանվությունը» (հոդված 2), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր» (հոդված 26), «Մարդու իրավունքների և իհմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա» (հոդված 14) և այլն):

«Անիմն բարձր ընտրական գրավը նաև խն-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դիր է ներկայացնում ընտրական չափանիշների առումով: Ընդունված սկզբունք է, որ անարդար խորականությունը ներառում է անձի նկատմամբ խորականությունը կապված սոցիալական կամ ունեցվածքի վիճակից: Այսպիսով, ընտրական գրավի չափը պետք է քննարկել զգուշությամբ, ապահովելով համար, որ այն չկանխի լորդ թեկնածուի առաջադրումը, ով տնտեսապես անապահով է<sup>15</sup>:

Ներկայումս, Հայաստանի Հանրապետությունում ընտրական գրավը կազմում է՝ ՀՀ Նախագահի թեկնածուի համար նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկը, ՀՀ ԱԺ համամասնական ընտրությունների թեկնածուների համար՝ 2500-ապատիկը, ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրությունների թեկնածուների համար՝ 1000-ապատիկը, Երևանի ավագանու թեկնածուների համար՝ 2000-ապատիկը, համայնքի դեկավարի թեկնածուների համար՝ 5000 բնակչից քիչ համայնքներում 50-ապատիկը, իսկ 5000-ից ավել՝ 100-ապատիկը, ավագանին համապատասխանաբար՝ 10-ապատիկը և 20-ապատիկը:

Կարծում ենք՝ ընտրական գրավը հատկապես Նախագահի և Ազգային ժողովի մեծամասնական ընտրությունների դեպքում բավական բարձր է և չի համապատասխանում ՀՀ բնակչության սոցիալական վիճակին:

Բացի այդ, ընտրական գրավի մեծ չափը կարող է բացասաբար ազդել քիչ ֆինանսական միջոցներ ունեցող թեկնածուների նախընտրական հիմնադրամի վրա:

«Ծիշտ չէ, որ ընտրությունների ծախսերի մեծ մասը կազմի ընտրական գրավը»<sup>16</sup>:

Այս առումով ներկայումս առկա է բավական մեծ անհամամասնություն տարբեր ընտրովի մարմինների ընտրական գրավների և նախընտրական հիմնադրամի չափերի միջև: Մասնավորապես, նախագահի թեկնածուի դեպքում ընտրական գրավը կազմում է նախընտրական հիմնադրամի առավելագույն չափի (նվազագույն աշխատավարձի 70.000-ապատիկը) մոտ 11%-ը, Ազգայի ժողովի համամասնական թեկնածուների դեպքում՝ նախընտրական հիմնադրամի առավելագույն չափի (նվազագույն աշխատավարձի 5.000-ապատիկը) 20%-ը:

Կարծում ենք, անհրաժեշտ է կրճատել ընտրական գրավի չափը, ՀՀ Նախագահինը դարձնելով նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկը, իսկ մեծամասնական թեկնածուներ՝ 500-ապատիկը:

Ընտրական գրավը վերադարձվում է, եթե թեկնածուն ընտրությունների արդյունքում հավաքել է օրենքով սահմանված շեմից ավելի ծայներ: Տարբեր երկրներում այդ շեմը տարբեր է:

«Շեմը, որը պետք է հաղթահարել գրավի վերադարձման համար, նույնպես պետք է լինի խելամիտ»<sup>17</sup>:

ՀՀ-ում այդ շեմը ՀՀ Նախագահի, պատգամավորի (մեծամասնական), համայնքի դեկավարի, ավագանու թեկնածուների դեպքում՝ 5 տոկոսն է, իսկ ՀՀ Ազգային ժողովի համամասնական և Երևանի ավագանու ընտրությունների դեպքում ընտրական գրավը վերադարձվում է այդ մարմիններում տեղերի բաշխմանը մասնակցելու դեպքում:

6) Հայտարարագիր ունեցվածքի մասին: Բացի վերոնշյալ պահանջներից, ՀՀ Նախագահի և ԱԺ պատգամավորության թեկնածուները պետք է ներկայացնեն նաև գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով: Սակայն, նշված օրենքը 2009 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել (2006 թվականի օրենք, ՀՕ-164-Ն): Ներկայումս այդ հարաբերությունները կարգավորվում են «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով (07.07.2006թ., ՀՕ-164-Ն): Ստացվում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքում հղում է կատարվում ուժը կորցրած իրավական ակտի, ինչն անբույլատրելի է: Ուստի անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել օրենսգրքում՝ հղում կատարելով արդեն վերոնշյալ օրենքին:

Բացի այդ, նշված օրենքում սահմանվում է, որ հայտարարագիր պետք է ներկայացնեն նաև փոխկապակցված անձինը (ընտանիքի անդամները): Սակայն այդ դեպքում խնդիրներ են առաջանում: «Ավելին, պահանջը, որ պետք է հայտարարագրեն «ընտանիքի անդամների» ունեցվածքը,

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խնդրահարույց է: Առաջին, ոչ մի իրավական սահմանում տրված չէ «ընտանիքի անդամի» համար: Երկրորդ, մտահոգիչ է, որ իրավական պատասխանատվություն կարող է առաջանալ թեկնածուի համար, եթե «ընտանիքի անդամը» թեկնածուին տակեղ տեղեկություն «ընտանիքի անդամի» ունեցվածքի վերաբերյալ: Թեկնածուի իրավական պատասխանատվությունը ճիշտ չէ, քանի որ թեկնածուն չունի ոչ մի վերահսկողություն որիշ անձանց ունեցվածքի նկատմամբ և կարող է կատարել ազնիվ սխալ գնահատելով այլ անձի ունեցվածքը:<sup>18</sup>

Հայտարարագիր ներկայացնելու հետ կապված նաև խնդիր է հանդիսանում այն հանգամանքը, թե արդյոք ինչպես է ԿԸՀ-ն ճշտելու այդ տվյալների համապատասխանության իրականությունը, քանի որ նման տվյալների ԿԸՀ-ն չի տիրապետում:

Այդպիսի տվյալների կարող են տիրապետել համապատասխան հարկային կամ պետական այլ մարմինները: Ուստի ԿԸՀ-ն նման խնդրանքով պետք է դիմի այդ մարմիններին: Սակայն, օրենքից պարզ չէ, թե արդյոք այդ տվյալները ճշտելու համար ԿԸՀ-ն իրականացնու՞մ է արդյոք որոշ քայլեր:

Վերոնշյալ կարևոր նշանակություն ունի, քանի որ կեղծ տեղեկություններ ներկայացնելը հիմք է թեկմածուի գրանցումը անվավեր ճանաչելու համար: Ուստի անհրաժեշտ է հստակ սահմանել, որ ԿԸՀ-ն բոլոր դեպքերում ստուգում է այդ տվյալների ճշտությունը, որպեսզի տարբերակված մոտեցում չլինի:

Վերոնշյալ պարտադիր պահանջները բավարարելու դեպքում միայն անձը կարող է ձեռք բերել հանապատասխան թեկնածուի կարգավիճակ՝ դրանով իսկ ձեռք բերելով որոշակի իրավունքներ և պարտականություններ:

«Պատգամավորության թեկնածուի կարգավիճակը՝ դա նրա իրավունքների, պարտականությունների և գործունեության երաշխիքների ամբողջությունն է»<sup>19</sup>:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում թեկնածուներին ներկայացվող պահանջների առումով դեռևս առկա են շատ խնդիրներ, որոնց արդյունավետ լուծումը կարևոր նշանակություն ունի, քանի որ դրանից է մեծապես կախված անձանց պահիվ ընտրական իրավունքի անարգել իրացման հնարավորությունը:

### Օգտագործված գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն (05.07.1995թ.):
2. ՀՀ ընտրական օրենսգիրք, օրենք N ՀՕ-284, ընդունվել է՝ 05.02.1999թ., ուժի մեջ է մտել՝ 28.02.1999թ., ՀՀՊՏ 1999.02.18/2(68):
3. «Քննակշուրյան պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք, N ՀՕ-419-Ն, ընդունվել է՝ 24.09.2002թ., ուժի մեջ է մտել՝ 31.10.2002թ. (ՀՀՊՏ 2002.10.30/46 (221) հոդ. 1062):
4. «Քննակշուրյան պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 1231-Ն, ընդունվել է՝ 14.07.2005թ., ուժի մեջ է մտել՝ 14.09.2005թ. (ՀՀՊՏ 2005.09.07/57(429) հոդ. 1112):
5. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 821, ընդունվել է՝ 25.12.1998թ., ուժի մեջ է մտել՝ 25.12.1998թ. (ՀՀ ՊՏ 1998.12.31/33(66)):
6. Постников А. Е. Избирательное право России. М.: ИНФРА-М-НОРМА, 1996.
7. ԵԱՀԿ/ԺՀՍԻԳ: Ընտրությունների դիտորդական առաքելություն, Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններ (12 մայիսի, 2007թ.), Սիզանկյալ հաշվետվություն 1, 21-28 մարտի, 2007:
8. Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդական ժողովրդական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԵԱՀԿ-ԺՀՍԻԳ) և Վենետիկյան հանձնաժողով; Համատեղ առաջարկություններ Հայաստանի ընտրական օրենսդրության և ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի մասին, Ստրասբուրգ, 17 դեկտեմբերի, 2003թ.:
9. ԵԱՀԿ/ԺՀՍԻԳ, Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույց, Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրություններ (19 փետրվարի, 2008թ.), Վարչական, 30 մայիսի, 2008թ.:
10. Document of the Copenhagen meeting of the conference on the human dimension of the CSCE, Copenhagen, 1990.
11. “Report on electoral law and electoral administration in Europe”, Synthesis study on recurrent challenges and problematic issues; European Commission for Democracy Through Law (Venice Commission); Adopted by the Council for Democratic Elections at its 17<sup>th</sup> meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67<sup>th</sup> plenary session (Venice, 9-10 June 2006), Strasbourg, 12 June, 2006.
12. Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the Electoral Code of the Republic of Armenia as amended up to December 2007, Adopted by the Venice Commission at its 76th plenary session (Venice, 17-18 October, 2008), Strasbourg, 22 October, 2008.

## ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

13. Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 10th meeting (Venice, 9 October 2004) and the Venice Commission at its 61st plenary session (Venice, 3-4 December 2004), Strasbourg/Warsaw, 6 January, 2005.
14. Venice Commission and OSCE/ODIHR; Preliminary joint opinion on the revised draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 12th meeting (Venice, 10 March 2005) and the Venice Commission at its 62nd plenary session (Venice, 11-12 March 2005), Strasbourg/Warsaw, 30 March, 2005.
15. "Guidelines for reviewing a legal framework for elections"; OSCE/ODIHR, Warsaw, January, 2001.

<sup>1</sup>Տե՛ս "Report on electoral law and electoral administration in Europe", Synthesis study on recurrent challenges and problematic issues; European Commission for Democracy Through Law (Venice Commission); Adopted by the Council for Democratic Elections at its 17<sup>th</sup> meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67<sup>th</sup> plenary session (Venice, 9-10 June 2006), Strasbourg, 12 June, 2006, կետ 76:

<sup>2</sup>Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, օրենք N ՀՕ-284, ընդունվել է՝ 05.02.1999թ., ուժի մեջ է մտել՝ 28.02.1999թ., ՀՀՊՏ 1999.02.18/2(68):

<sup>3</sup>Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Ընտրությունների դիտորդական առարկության վերջնական գելույց, Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրություններ (19 փետրվարի, 2008թ.), Վարչավա, 30 մայիսի, 2008թ., էջ 9, գլուխ «VII»:

<sup>4</sup>Տե՛ս Document of the Copenhagen meeting of the conference on the human dimension of the CSCE, Copenhagen, 1990, կետ 7.3:

<sup>5</sup>Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the Electoral Code of the Republic of Armenia as amended up to December 2007, Adopted by the Venice Commission at its 76th plenary session (Venice, 17-18 October, 2008), Strasbourg, 22 October, 2008, էջ 8, կետ 29:

<sup>6</sup>Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ; Ընտրությունների դիտորդական առարկություն, Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններ (12 մայիսի, 2007թ.), Սիցանկյալ հաշվետվորյուն 1, 21-28 մարտի, 2007, էջ 4, գլուխ «Գ»:

<sup>7</sup>Տե՛ս Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրաւենյակ (ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ) և Վենետիկյան հանձնաժողով; Համատեղ առաջարկություններ Հայաստանի ընտրական օրենսդրության և ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի մասին, Ստորաբորդ, 17 դեկտեմբերի, 2003թ., էջ 7, կետ 17:

<sup>8</sup>Տե՛ս «Քննակշռության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք, N ՀՕ-419-Ն, ընդունվել է՝ 24.09.2002թ., ուժի մեջ է մտել՝ 31.10.2002թ., (ՀՀՊՏ 2002.10.30/46(221) հոդ. 1062):

<sup>9</sup>Տե՛ս «Քննակշռության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 1231-Ն, ընդունվել է՝ 14.07.2005թ., ուժի մեջ է մտել՝ 14.09.2005թ., (ՀՀՊՏ 2005.09.07/57(429) հոդ. 1112):

<sup>10</sup>Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիր հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 821, ընդունվել է՝ 25.12.1998թ., ուժի մեջ է մտել՝ 25.12.1998թ., (ՀՀՊՏ 1998.12.31/33(66)):

<sup>11</sup>Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 10th meeting (Venice, 9 October 2004) and the Venice Commission at its 61st plenary session (Venice, 3-4 December 2004), Strasbourg/Warsaw, 6 January, 2005, էջ 4, կետ 15:

<sup>12</sup>Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the Electoral Code of the Republic of Armenia as amended up to December 2007, Adopted by the Venice Commission at its 76th plenary session (Venice, 17-18 October, 2008), Strasbourg, 22 October, 2008, էջ 7, կետ 28:

<sup>13</sup>Տե՛ս "Report on electoral law and electoral administration in Europe", Synthesis study on recurrent challenges and problematic issues; European Commission for Democracy Through Law (Venice Commission); Adopted by the Council for Democratic Elections at its 17<sup>th</sup> meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67<sup>th</sup> plenary session (Venice, 9-10 June 2006), Strasbourg, 12 June, 2006, կետ 85:

<sup>14</sup>Տե՛ս "Guidelines for reviewing a legal framework for elections"; OSCE/ODIHR, Warsaw, January, 2001, էջ 16, գլուխ «B»:

<sup>15</sup>Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Preliminary joint opinion on the revised draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 12th meeting (Venice, 10 March 2005) and the Venice Commission at its 62nd plenary session (Venice, 11-12 March 2005), Strasbourg/Warsaw, 30 March, 2005, էջ 6, կետ 17:

<sup>16</sup>Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 10th meeting (Venice, 9 October 2004) and the Venice Commission at its 61st plenary session (Venice, 3-4 December 2004), Strasbourg/Warsaw, 6 January, 2005, էջ 4, կետ 15 :

<sup>17</sup>Տե՛ս "Guidelines for reviewing a legal framework for elections"; OSCE/ODIHR, Warsaw, January, 2001, էջ 16, գլուխ «B»:

<sup>18</sup>Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Preliminary joint opinion on the revised draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 12th meeting (Venice, 10 March 2005) and the Venice Commission at its 62nd plenary session (Venice, 11-12 March 2005), Strasbourg/Warsaw, 30 March, 2005, էջ 6, կետ 19:

<sup>19</sup>Տե՛ս Постников А. Е. Избирательное право России. М.: ИНФРА:М-НОРМА, 1996. С. 65.

## ՇՈՒԾԱՆ ԶԱՏՈՒՆՑ

«Գլանոր» համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի  
մամուլի ու տեսության ամբիոնի ասպիրանտ

### ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԶՆՀԱԼԻ ՏԱՐԻՆԵՐԻ «ԱՎԱՆԳԱՐԴՈՒՄ»

1950-60-ական թվականներին մեծ վերելք ապրեց հանրապետության ժողովրդական կրթությունը: Արդեն 1965-ին դպրոցների թիվը հասնում էր 1500-ի, ուր սովորում էին 593 հազար աշակերտներ: 1956-60-ական թթ. կրթության կարևորագույն ուղղություն դարձավ պոլիտեխնիկական կրթության իրազործումը հանրակրթական դպրոցներում, իսկ նոր առարկաները, ինչպիսիք էին՝ հանրօգուտ աշխատանքը, տնարարությունը, ձեռքի աշխատանքը, որոնք աշակերտներին հնարավորություն էին տալիս տիրապետելու տարրեր մասնագիտությունների նորություններին, աշխատանքային և մասնագիտական փորձ ձեռքելու դեռ դպրոցական նստարանից սկսած:

Մեծ ուշադրություն դարձվեց միջնակարգ մասնագիտական կրթությանը և արդեն, 1965-ին՝ Հայաստանում տեխնիկումների թիվը հասավ 42-ի, ուր սովորում էին 23 հազար պատանիներ ու աղջկներ: Ընդլայնվեց երեկոյան ուսուցման ցանցը միջնակարգ մասնագիտական ուսումնարաններում, որտեղ բացվեցին նաև երեկոյան բաժիններ:

Նոր ուսումնական մասնաշենքեր կառուցվեցին Երևանի պետական համալսարանի, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական ինստիտուտների համար: Վեր բարձրացան նաև ուսանողական հանրակացարանների մասնաշենքերը: Արդեն 1959-ին Լենինականում և Կիրովականում բացվեցին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղերը:

1967-ին հանրապետության բուհերում դասախոսում էին 2865 մասնագետներ, որից 190-ը դրվագ-այրովեսորներ, 1120-ը գիտության թեկնածուներ: Նոյն թվականին հանրապետության բուհերում սովորում էին 44 հազար ուսանող՝ 134 մասնագիտությունների գծով<sup>1</sup>:

Հայաստանում դպրոցների ընդլայնված ցանցը ամենաբարձր ցուցանիշը ուներ ողջ ՍՍՀՄ-ում: Օրինակ, մեր հանրակրթական դպրոցների 70 տոկոսը արդեն 1980-ին միջնակարգ էր, շարունակ-

վում էր ընդլայնվել երեկոյան դպրոցների ցանցը, որը, սակայն, եթե հայրենական պատերազմից հետո անհրաժեշտություն էր, ապա դրա կարիքն արդեն չկար այս շրջանում, որովհետև դրանցում ուսուցումը մեծ մասամբ ձևական բնույթ էր կրում: Դեռևս անբավարար էր բարձրորակ մանկավարժական կադրերի պատրաստման գործը, հատկապես գյուղական դպրոցներում, որտեղ մասնագիտների կարիքը շատ էր զգացվում: Միայն էին կազմվում ուսումնական ծրագրերը, որոնք պարունակում էին կուսակցական ու պետական օրգանների հրահանգները, որտեղ հաշվի չէին առնվում տեղական, ազգային առանձնահատկությունները: Մեծ աշխատանք տարվեց բուհերում գիտության խրախումնական ուղղությամբ: Նոր լաբորատորիաներ բացվեցին Երևանի պետական համալսարանում, բժշկական, պոլիտեխնիկական ինստիտուտներում, բացվեցին նաև գիտահետազոտական նոր բաժիններ: Զավեշտական էր, որ բոլոր բուհերում, անկախ նրա ուղղվածությունից, պետք է անպայմանորեն անցնեին ԽՍՀՄ պատմությունը, Մարքսինյան փիլիսոփայությունը, գիտական կոմունիզմ և արեիզմը: Ավելին, գիտական կոմունիզմը պետական քննություն էր բոլոր բուհերում:

«Զարգացած սոցիալիզմի սոցիալական կարևոր առանձնահատկություններից մեկը, - գրում էր Ռ. Մովսիսյանը, - ՍՍՀՄ ազգերի, ազգությունների և ազգային խմբերի ներդաշնակ, բարեկամության ու համագործակցության հարաբերություններն էին: Իսկ սրան, ըստ հեղինակի՝ կուսակցությունն հասել էր հետևողականորեն կենսագործելով լենինյան ազգային ծրագրը, ապահովելով բոլոր ազգերի տնտեսական, կուլտուրական, սոցիալ-քաղաքական և գաղափարական ներդաշնակ գարգացումը ստեղծելով նրանց միջև իրական հավասարությունն»<sup>2</sup>:

Ժողովրդական կրթության վիթխարի ծավալի մասին է գրում նաև Լ. Բրեժենևը, ըստ որի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագի-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տական և բարձրագույն ուսումնական հաստատություններում այդ բվականներին սովորում էին 60 միլիոն մարդ<sup>3</sup>:

Կուսակցության առաջադրանքներն անշեղորեն կատարելագործելով միշտ էլ աչքի են ընկել Երևանի պետական համալսարանի կոմերիտականները: Նրանք միշտ էլ հանդես էին գալիս նոր նախաձեռնություններով, ձեռք բերում մասնագիտական հարուստ գիտելիքներ: Ահա ինչու համալսարանի կոմերիտականներից շատերը հետազյում դարձան հմուտ կոմերիտական և կուսակցական աշխատողներ: Այս առիթով ահա, ինչ է գրում ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը. «Գաղափարական-քաղաքական աշխատանքի և կոմունիստական գիտակցության ձևավորման հարցերը կուսակցությունը համարել է սոցիալիստական հասարակարգի նոր էտապի կարևորագույն հարցեր, նշելով, որ կոմունիզմի կառուցման գործը անկարելի է առաջ տանել առանց իրեն՝ նոր, բազմակողմանի գարգացման, առանց մարդկանց կուլտուրայի, կրթության, հասարակական գիտակցության բարձրացման»<sup>4</sup>:

Նոր մարդու աշխարհայացքի ձևավորման գործում առաջնակարգ դեր ունեին մանկապարտեզները, պիտույքներական կազմակերպությունները, դպրոցները, միջնակարգ մասնագիտական հաստատությունները, բուհերը: Մամուլը հետևողականորեն անդրադարձել է այս բոլոր հասարակությանը հուզող հարցերին, սրտացավ վերաբերմունք դրսորել այս բոլորի նկատմամբ: Նման վերաբերմունքի արգասիք է Մանդալյանի «Մայրական հոգատար ձեռքերում» հոդվածը՝ մայրաքաղաքի Դիմիտրովի անվան մստրմանկապարտեզի մասին, որի աշխատողները մայրական սիրով ու հոգատարությամբ են շրջապատել բոլոր 300 սաներին<sup>5</sup>:

«Ավանգարդը» բազմաթիվ այցեր է կատարել դեպի հանրապետության պիտույքներական ճամբարներ, խոսել կատարված լավ գործերի, հոգսերի ու թերությունների մասին, որոնք շուտափույթ լուծում են պահանջել: Մասնավորապես «Ծաղկաձորի ծաղիկները» Մ. Գալշոյանի ակնարկը նվիրվել է պիտույքներական ամռանը: Մարդկության «ծաղիկները»՝ մեր հրաշք մանուկները իրենց անհոգ հանգիստն են անցկացնում ծաղիկների գրկում: Նրանք իսկապես շրջապատված են հոգատարությամբ:

Պիտույքիայի ծննդյան օրվա կապակցությամբ «Պիտույքների հյուրն էր ՀԿԿ Կենտկողմի

առաջին քարտուղար Յա. Զարուբյանը» հոդվածն էր, որին զերմորեն են ընդունել մեր երեխաները, հետաքրքրվել հանրապետության առաջնահերթ խնդիրների մասին, նաև ներկայացրել իրենց պահանջները<sup>6</sup>: Իսկ մի քանի համարներ անց «Պիտույք կանչը» քառասուն տարեկան է» հոդվածն է, և ՀՍՍՀ Գերագույն խորհրդի հրամանագիրը՝ թերթը պատվորով պարզեատրելու մասին՝ երեխաների կոմունիստական դաստիարակության գործին ակտիվորեն մասնակցելու համար:

Թերթն ուշադրության կենտրոնում է պահել հանրակրթական դպրոցների առօրյան՝ տեղ տալով նաև այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսին էր դպրոցականի օրվա ուժիմը: Այս թեմային է անդրադարձել քիչիկ Ռ. Փարսադանյանը իր բժշկական գրույցում, որն օգտակար էր ինչպես մանկավարժական կոլեկտիվներին, այնպես էլ ծնողների համար<sup>7</sup>:

«Մոտենում են քննությունները» հոդվածն անդրադարձել է տարեվերջի ավարտական, փոխադրական և հասունության վկայականների քննություններին, այսինքն, երբ դպրոցները թևակոյում են ուսումնական տարվա ամենապատասխանատու շրջան, երբ հաշիվ են տալիս ոչ միայն աշակերտները, այլ նաև ուսուցչական կոլեկտիվը, ամբողջ դպրոցը<sup>8</sup>:

Ս. Անթոսյանի «Աշակերտներին զինել կայուն գիտելիքներով» հոդվածը պատվիրված է: Բանն այն է, որ հեղինակը բուհերի ընդունելության քննությունների հայոց լեզվի և գրականության հանձնաժողովի անդամ է, և այն եզրակացնությանն է հանգել, որ հանրապետության որոշ դպրոցներում անհանդուրժելիորեն վատ են մայրենի լեզվի և գրականության ուսուցումը: Ցուրաքանչյուր ուսուցիչ պետք է լուրջ հետևողական անհի այս հոդվածի փաստերից և անպայմանորեն ձգտի իրեն վատահած աշակերտներին զինել բարձր գիտելիքներով<sup>9</sup>:

«Կանաչ ճանապարհ երկարօրյա դպրոցներին» հոդվածն այն կարծիքն է արտահայտում, թե դրանք դրական արդյունք են տալիս, համախմբվում են երեխաների կոլեկտիվները, բարելավվում են առաջադիմությունը ու կարգապահությունը, ծնողներին օգնում են իրենց երեխաներին դաստիարակելու և խնամելու գործում:

Թերթն ուշադրության կենտրոնում է պահել նաև բաներիս դպրոցների հարցը: Այս թեմային է անդրադարձել Ս. Գևորգյանը «Ինչ է կատարվում

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

համար 20 երեկոյան դպրոցում» հոդվածում, որ հեղինակը սրտի ցավով է արձանագրում, որ դասերին չեն ներկայանում աշակերտների կեսից ավելին, այնինչ բոլորը ներկաներ են ստանում: Միջանցքներում ծխում են, աղտոտում, դաս չեն պատասխանում ոչ մեկը, չեն օգտագործվում դիտակտիկ պարագաներ, լաբորատորիաներ ոչ ոք չի հաճախում<sup>10</sup>:

Լուսավորության մինիստրության դպրոցների վարչության տեսուչ Վ. Գրիգորյանի «Լուրջ ուշադրություն երեկոյան դպրոցներին» հոդվածը նույնական այդ դպրոցների բարձիքողի վիճակի մասին է, իսկ հոդվածագրի եզրակացությունը մեկն է՝ ձեռք ձեռքի պիտի տան կոմերիտական կազմակերպությունները, հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվները և դպրոցների մանկավարժները, այլապես դրական արդյունք սպասելն անհնարին է<sup>11</sup>:

Հանրապետության տեխնիկումների, պրոֆտեխնիկական ուսումնարանների հոգսերի և առօրյայի մասին «Ավանգարդը» ընդարձակ տեղ է հատկացրել: Համարյա բոլոր համարներում թերթը շոշափում է դպրոցների պոլիտեխնիկացման հարցեր՝ երկրի տնտեսությանը երիտասարդ ու բանիմաց կաղըեր տալու ակնկալիքով: Թերթը չի մոռացել դպրոցների արհեստանոցների խնդիրները, որոնք պետք է կահավորել գիտության վերջին խոսքով, որպեսզի դպրոցական կամ տեխնիկումի ուսանողը մասնագիտական հմտություն ստանա հենց դպրոցում կամ տեխնիկումում:

Մ. Մուրադյանի «Նրանք իրավերի չեն սպասում» ակնարկը Հոկտեմբերյանի գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտ Անուշավան Վարդանյանի մասին է, որը 24 տարեկանում արդեն դարձել է Ապարանի շրջանի թթուցուր գյուղի կոլտնտեսության կոմպլեքսային բրիգադի բրիգադավար, որի բոլոր 75 անդամները վստահում են երիտասարդ մասնագետին<sup>12</sup>:

Թերթը հայտնում է, որ Քաջարանի համար 16 պրոֆտեխնուսումնարանը տվել է իր 1000-երրորդ շրջանավարտը: Ուսումնարանը արտադրություն է ուղարկում որակյալ հյուսներ, ներկարարներ, քարտաշ-որմնադիրներ, փականագործներ, էլեկտրաեռակցողներ, որոնք բոլորն էլ իրենց արտադրական պրակտիկան անցել են Ազգարակի պղնձամոլիբդենային կոմբինատում:

Թերթի 1964 թ. 130-րդ համարը ամբողջությամբ նվիրվել է հանրապետության պրոֆտեխնի-

կական ուսումնարանների առօրյային, հոգսերին ու նվաճումներին:

Վլադիմիր Մուրադյանի «Խոկ ու՞ր է այդ կոլեկտիվը» հոդվածը Երևանի գյուղմեխանիզացիայի տեխնիկումի ուսանող Ֆրիկ Մարտիրոսյանի մասին է, որին խույզանության համար վտարել են տեխնիկումից, սակայն նա բողոքում է տարբեր ասյաններ, թե վտարելու փոխարեն կոլեկտիվը պիտի վերադաստիարակեր, այնինչ կոմերիտական կազմակերպությունը, տեխնիկումի ղեկավարությունն ընտրել են հեշտ ճանապարհը<sup>13</sup>:

